ՅՈՒԼԻՍ 1864 ԹՈՒԱԿԱՆԻ

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ.

## ԳԱՍՏՈՒԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՁՈՒԽՈՐԴՈՒԹԵՆԱՐՔ.

(Գործ Փրանց Հօֆման գերմանական մատենագրի.)

### ԱՌԱՋԻՆ ԾՕԴՈՒԱԾ.

### ՏԻՐՈՋ ԱՊԱՐԱՆՔԸ.

Մեծ գերմանական քաղաքից Վ... սակաւ ժամերի հեռաւորութեամբ դրած էր մի գեղեցիկ սահմանում կոմսութիւնը Րօթենբերգ։ Շատ գիւղեր, անտառք, դաշտեր, առուներ և լիճեր մի մեծ բոլորակով շրջապատուած էին այդ իշխանութեան միջնավայրը, ամրոցը Րօթենբերգ, որտ մէջ բնակուէին Համանուն կոմսը և նորա քուերորդին, որին Հպատակները կարճառօտ ասում էին աղնուատոհմիկ Գէորգ։

Հեշտ կարելի չէր գտանել մի աւելի փառաւոր ամարանոց, քան թէ ամրոցը Րօթենբերգ։ Մի մեծ, բարեխնամ և վայրի որսով լի ու առատ ծառաստանի մէջ բարձրանում էր այդ հոյակապ շինուածը մեծատարած և ազնիւ զուգակշռութեամբ իւր կազմուածի մէջ։ Գլխաւոր շինուածի վերայ, որ մի մեծ բոլորակով բաժանվում էր երկու մասն, վերևում պսակաւոր գմբէթի վերայ փայլում էր ոսկեղօծ հսկայաձև կոմսական թագ և տարածում իւր ճառագայթները շատ ու շատ հեռի, քարոզելով կալուածատիրոջ անչափելի հարստութիւնը։ Այս գլխաւոր շինուածին կից էին երկու կողմնակի թևեր, որ նորա հետ հաղորդուելով, կազմում էին երեք կողմերը

մի կանոնաւոր քառանկիւնու, որոյ չորրորդ լայց կողմը փակվումէր մի երկաթի, գեղեցկաշէն և ոսկեզօծ վանդակապատով։ Այսպիսի կերպով գոյացած ներքին տարածութիւնը պատած էր գալար կանաչուն, կարճահասակ խոտով։ Այս տեղն մէջ խաղումէր մի շատրուան, իւր զօրաւոր ջրեղէն շառաւիղը այո՛ երեսուն և աւելի ոտնաչափ դէպ ի վեր ցայտելով։ Երբ որ արևը խաղումէր նորա միշտ ու հանապազ վեր ու ցած թափուող կաթիլների մէջ, այնուհետև ջրեղէն շառաւիղը փայլումէր ամենաիւառաւոր ծիածանի գոյներով և մշտախաղ ջրի շարժողութիւնը ախորժելի կերպով ընդհատումէր սովորական հանդարտութիւնը որ տիրումէր տիրոջ ապարանքի շրջակայքում։

Սորանից դէպ ի աջ, մի բաւական տարածութեամբ յիշեալ ապարանքից հեռի գտանվումէին ախոռները, կառքատունները և ցած, գեղեցիկ շինուածներ որ սահմանուած էին բազմաթիւ սպասաւորների կեցութեան համար։ Ախոռները լցուած էին ձիաներով ամենաղնիւ ցեղից։ Նորը, վայելչակազմ արաբական ձիեր, ամուր մեկլենբուրգեան բեռնաձիգ գրաստներ և պարսիկ վաղող ձիանք կային այդ տեղ անգլիական ցեղի արագ ու հպարտ որձ ձիերի հետ միասին, այլև փոքրակազմ բայց դիմացկոտ և անվաստակելի պոլոնեական և լիտաւական ձիանք, միւս աղնիւ և ծոի պէս թռչուն երիվարներ ամենայն տեղից ու աշխարհից։ Ախոռների չորս կողմով կային շների խուղեր, ուր կապած էին շրջայից ամենայն տեսակ որսորդական շուներ. դանիական և անգլիական գամիռներ, թևթև արագավազիկներ, հաւեր որսալու շուներ, կինջ հալածողներ և այլն և այլն, հաւմէին և կաղկանձումէին այն տեղ։

Պարանքից դէպ ի ձախ ձգվումէր մի բարեխնամ, ծառազարդ ճեմելիքով յօրինած, առուներով կտրատած այգի։ Նորա մէջ կային պատուական տնկանոցներ ծաղիկներով, թուփերով և ծառերով ամենայն օտար աշխարհներից լցուած։ Այգու բազմաթիւ մարգերը ծաղկապատկների նման միշտականաչ խոտաբոյս տեղերի մէջ ցրուած, երևումէին ամերիկական բոյսերով և ծաղկափթիթ բանջարներով պատած, որոց քաղցր և զմայլեցուցիչ անուշահոտութիւնքը լցուցանումէին օդը։

Այգու ամենավերջին ծայրը սահմանաւորումէր մի փոքրիկ լեռ ղարմանալի և ականակիտ ջրերով, ուր հարիւրաւոր կարապներ և միւս ջրային հաւեր խառն ի խուռն լող էին տալիս։ Այնոստեան, բարձր, հին աւուրց տիլլեայք, մայրիք և բոխիներ շրջապատումէին նորա եղերքը և իւրեանց դողուն, հով ստուերները ձգումէին բիւրեղային ջրատափարակի վերայ։ Լճի այն կողմում սկսանվումէր վայրի անասունների ցանկապատը, շատ ժամերի տարածութեամբ ձգուելով այն տեղ։ Նորա ափերում արածումէին եղջերուներ և եղներ. նապաստակներ և ճագարներ թռչտտումէին թուփերի միջով և սեւամաղ, վայրենի վարազներ փորփորումէին հողը։

Դէպ ի ձախ, աւելի յառաջ, ամրոցից կէս ժամ հեռաւորութեամբ դրած էր մի փուղ մացառների և մրգաբեր ծառերի մէջ տեղում։ Միայն ասպիզեան քարով պատած աշտարակը երկնչէցու և ամենամեծ տների

տանիքը դուրս էին շողշողում ծառերի թանձր տերևների միջից, եթէ ամ-
րոցի բակիկներից դէպ ի ցած ընումիր աշխարհի պատուական դիրքը։

Պարանքի ներսը նոյնպէս գեղեցիկ յօրինած էր, ինչպէս արտաքին
երեսը։ Բոլոր սենեակները և դահլիճները փայլում էին ոսկուց և մարմա-
րիոնից, շատ մեծագին կարասիքից և ճարտարութեան ընտիր գործերից։
Հայելիք դետնից մինչև առաստաղը, կուռ արծաթի շրջանակի մէջ հագ-
ցրած, ամենափառաւոր պատկերներ հին և նոր ճարտարապետների, մար-
մարիոնեայ և բրոնզեայ արձաններ լուսցանում էին տարածութիւնը։ Հա-
զիւ թէ մի թագաւորական պալատ կարող էր աւելի փայլուն և ճոխ կեր-
պով զարդարած լինել, քան թէ նոմն Բօթենբերգի հոյակապ պարանքը։

---

## ԵՐԿՐՈՐԴ ԳՕԴՈՒԱԾ։

### ԿՏԱԿԸ։

Մի պայծառապէս լուսացող կիրակէ օրի կանուխ առաւօտեան ժամն էր,
և ահա թագաւորութեան կոմս Բօթենբերգը նստած էր իւր առանձնարա-
նում, մի արձակ, ծաղկագործ, մետաքսեայ տնազգեստի մէջ փաթաթուած,
մի կոկած սեղանի առաջև մահագոնի փայտից։ Անհամար բաղմութիւն
ամենայն տեսակ փոքր ու մեծ թղթերի ածած էր սեղանի վերայ. Հազիւ թէ
մնումիր այդ տեղ բաւական միջոց գեղեցիկ, զուտ արծաթի ղահվէճանի
համար, որ պարունակումիր իւր մէջ մգազոյն թուխ ծուծը մոքքայեան
ղահուէի, որ էր կոմսի սովորական ըմպելին առաւօտու։ Կոմսը որոնումիր
և թերթումիր թղթերի մէջ, հաշվումիր, գրումիր, կարդումիր և ընդհա-
տումիր այս պարապումը, միայն որ ժամանակ առ ժամանակ ոսկեշուրթ,
նրբանկար ֆարֆօռի բաժակը մօտեցնէ բերանին և խմէ մի քանի ումպ նորա
ազդու հոտոտուն նիւթից։

Կոմսը մի ամուր, գեղեցիկ և բարձրահասակ տղամարդ էր, հազիւ թէ
հինսուն տարիքով։ Ծաղկափթիթ առողջութեան կարմրութիւնը փայլու-
մէր նորա թշերի վերայ և լոկ մի քանի տարափ սպիտակ մազեր նկատելի
էին նորա թանձր սև մազերի մէջ։ Մի բարձր ճակատ, մեծ, կրակոտ, թուխ
աչքեր և մի համարձակ թևքուած արծուաքիթ տալիս էին նորա երեսին
վճռահութեան և հաստատութեան տպաւորութիւն, մինչ դորա հակառակ
նորա բերանի քաղցր ժպտումը վկայումիր միայն բարեմտութիւն և ներո-
ղամտութիւն։

Նորա ոտքումը, սեղանի տակ ամփոփուած էր մի մեծ, մուգ մոխրա-
գոյն, սևախայտ գամփռ փակած աչքերով և քնած էր։ Դա էր կոմսի սի-
րական շունը, անհամեմատ ամրութեամբ և զեղեցկութեամբ։ Նա օր ու
գիշեր հեռանում չէր կոմսի կողքից։

Սենեկի ամենահեռաւոր անկիւնում խաղումիր մի փոքրիկ, վեցամեայ
աղջիկ իւր պաճուճապատանների հետ։ Դա էր մի սիրուն, նազելի երևոյթ

բաց շէկ մազերով և կապոյտ աչքերով։ Կոմսը գթասրտութենից ընդունել էր իւր մօտ այդ աղջիկը, որոյ ծնողքը բարեպաշտ և առաքինի, բայց չըքաւոր մարդիկ, իւր հպատակներ, վաճառանուած էին, առանց ապահոված լինելու իւրեանց մանուկի վիճակը։ Այդ փոքրիկ աղջիկը ասվումէր Բերթա և նորա քաղցր, հաւատաւոր բնաւորութիւնը այնպէս սիրելի էր կացուցել նորան կոմսի աչքում, որ սա մտքումը դրեց այդ անտէր աղջկան լաւ դաստիարակութիւն տալ։ Նա սիրումէր տեսանել այդ աղջիկը իւր շրջակայքում և շատ անգամ զուարճանումէր դորա ծիծաղելի խօսակցութեամբ։ Բայց այսօր Կոմսը ուշադիր չէր նորան, և մանուկը այնքան խոհեմ էր, որ իւր անկիւնում, կրակի պէս կարմիր մետաքսեայ, պատուհաններից մինչև յատակը ցած թափուող վարագոյրների քամակում նստած էր ամենևին լուռ և հանդարտ, որ չշիոթէ կոմսի զբաղմունքը։

Վաղուց մի ժամանցած էր, և ահա կոմսը յետ քարշեց թղթերը որովք պարապած էր նա, ձեռք ձգեց դէպ ի արծաթի զանգակը, որ ղահուէի առնօթի մօտ կար և հնչեցրեց նորան։ Դորա պայծառ ու սուր ձայնը մօտ կանչեց մի սպասաւոր որ շտապելով ներս մտաւ սենեկի մէջ և պատկառանքով սպասումէր տիրոջ հրամաններին։

«Ո՞րքան է արդէն դատարանի պաշտօնակալը ատենադպրի հետ միասին», հարցրեց կոմսը։

«Ո՛հա հենց րոպէ յառաջ իջել են նոքա կառքից, ողորմած տէր»։

«Կո՛չեր նորանց իմ մօտ և զգուշացի՛ր, որ մեզ չշիոթեն, քանի որ մէք միասին ենք։ Վե՛ր կալ ղահուէի անօթը և հեռացի՛ր շուտով»։

Սպասաւորը կարգի դրեց սեղանը, վեր կալաւ ըմպելիքի անօթը և հեռացաւ իսկոյն։ Այնուհետև անյապաղ ներս մտան օրինակատար մարդիկը և կոմսը քաղցրութեամբ ստիպեց նորանց նիստ առնուլ։

«Ես կոչել եմ Ձեզ, իմ տեարք, որ խնդրեմ Ձեր օգնականութիւնը մի կարևոր բանի մասին», ասաց նա։ «Ձեզ յայտնի է, որ ես անամուսին և անզաւակ եմ։ Ոչ ոք այնպէս մօտ չէ իմ սրտիս, որպէս իմ աղջական Գէորգը, այսինքն իմ սիրելի հանգուցեալ Գէորգինէ քուեր զաւակը։ Սորան կարգել եմ ես իմ բոլոր գոյքիս ժառանգ յետ իմ մահուան։ Այս տեղ է իմ ստուերագրած և յատուկ ձեռնով գրած կտակը։ Նորան պակաս է միայն դատարանի վաւերացուցումը և վկաների ստորագրութիւնքը։ Խընդրեմ Ձեզանից լցուցանել այս պակասորդը Ձեր կնքով և ստորագրութեամբ»։

Դատարանի պաշտօնակալը, մի ծերունի, ալևորուած սպասաւոր կոմսի պաշտօնի մէջ, ընդունեց նորա վերջին կամքի արձանագրութիւնը և զգաստութեամբ ծանօթացաւ նորա բովանդակութեանը։ Նա գտաւ բոլորը օրինաւոր և անստգիւտ։ Այնու ամենայնիւ յապաղեց նա դնել այդ թղթի վերայ դատարանի կնիքը և ստորագրութիւնը և նայումէր կոմսի վերայ գըլուխը շարժելով և տարակուսած երևոյթ։

«Վաւ ուրիք մի եղբայր ևս, տէր կոմս», ասաց նա կարճատև միջոցից յետոյ։ «Նա ունի աւելի մեծաւոր իրաւունք ձեր ժառանգութեան վե-

*րայ, քան Թէ աղնուատոհմ մանուկ Գէորգը։ Մ՛ինչ կամիք բոլորովին զանց առնել Ձեր եղբայրը»։*

*Մ՛ի մեայլ կարմրութիւն ներկեց կոմսի ճակատը, երբ որ նա լսել էր մի պղպիսի հարցումն։ «Ես ունէի մի եղբայր», պատասխանեց նա սուր ձայնով, «բայց այլ ևս չունիմ։ Նա անարժան է ինձ և այն անունը, որ նա կրումէ։ Թո՛ղ խօսք չլինի նորա մասին աւելի, այլ Դուք լցուցէք Ձեր գործը»։*

*Դատարանի ալևոր պաշտօնակալը հնազանդեցաւ և դրոշմեց կնիքը կտակի տակ։ Ցետոյ դրեց և իւր անուան ստորագրութիւնը և ապա տուեց պղ կարևոր արձանագրութիւնը առենադպրին, որ նոյնպէս ձեռք դրեց այն տեղ։ Այնուհետև կոմսը ծալեց պղ թուղթը, փակեց դորան պահարանի մէջ, կնքեց և գրեց նորա վերայ «իմ վերջին կամքս», և զգուշութեամբ թագցրեց նորան իւր մահագոնի փայտից սեղանի բազմաթիւ արկղներից մինի մէջ։*

*Նորանից յետոյ պղ երկու պաշտօնաւորքը կամէին արձակուիլ, բայց կոմսը յետ պահեց նորանց։*

*«Մ՛ի բան ևս ունիմ ձեր հետ, իմ տեարք», ասաց նա։ «Ինձ ցանկալի չէր, որ խօսք ու զրոյց լինէր իմ արած կտակիս մասին, մանաւանդ Թէ հարկաւոր չէր իմ քուերորդուն իմանալ պղ բանը։ Նա ունի մի տաք և հպարտ բնաւորութիւն, և երկիւղ ունիմ, մի գուցէ դժուարանայի սանձահարել նորան, եթէ հաւատի կարող էր նա յուսալ Թէ մի օր լինելու էր իմ ժառանգս։ Այս պատճառով լո՛ւռ կացէք։ Ես խնդրումեմ, այո՛ պահանջումեմ Ձեղանից պղ բանը»։*

*Դատարանի պաշտօնակալը և առենադպիրը խոստացան ամենայն զգուշութեամբ ծածուկ պահել կոմսի կտակարարութիւնը։*

*«Լաւ ևն», ձայն տուեց կոմսը ուրախութեամբ, «որովհետև գործը աւարտած է, ապա Թո՛ղ մի զօրացուցիչ նախաճաշիկ առնենք»։*

*Կոմսը հնչեցրեց զանգակը, սպասաւորը եկաւ, և շուտով սեղանը բեռնաւորուեցաւ գոլորշիք արձակող կերակուրներով և մաղերական փոշոտած հին սրուակներով, որ ձեռից ձեռք ման եկան և առատութեամբ դուրս Թափեցին իւրեանց կրակոտ պարունակութիւնը։*

---

## ԵՐՐՈՐԴ ԳՕԴՈՒԱԾ.

## ԸՆԴՀԱՏՈՒՄԸ։

*Կոմսը տակաւին նստած էր առատութեամբ պատրաստած սեղանի վերայ, ուրախ ուրախ զրուցելով իւր հիւրերի հետ, և ահա դուրսից լսուեցան նախադասիճում արագ քայլափոխներ, և շուտով դորանից յետոյ մի սաստիկ վիճաբանութիւն։ Վերջապէս լսուեցաւ մի Թնդիւն, դուռը սաստ-*

կուԹեամբ բացուեցաւ և բորբոքուած երեսով, բարկուԹիւն դուրս ցայտող աչքերով և շտապ շտապ շարժողուԹեամբք ներս յարձակուեցաւ մի մանուկ մօտ տասնուվեց տարեկանի։ Նորա հպարտ կերպարանքից, նորա հրամայողական հայեացքից, նորա ճոխ հանդերձից և նորա բոլոր ընԹացքից կարելի էր նկատել, որ դա կոմսի քնքշեցուցած սիրականը, ազնուատոհմիկ Գէորգն է։ Մի կարճ, ճոխուԹեամբ զարդարած որսորդական դանակ կապած էր գօտկին, փառաւոր շէնքով որսորդական հրացանը կախած էր ոսկեկար կապանքով նորա ուսի վերայ և մի գեղեցիկ եղնագոյն շուն հետևումէր նորա յետքից։ Ազնուատոհմիկ Գէորգը անտարակոյս զինուորուած էր դէպ ի որսագնացուԹիւն։

Նրանց առաւօտեան ողջոյն մատուցանելու, առանց կոմսի հիւրերին որ և իցէ ուշադրուԹիւն ցուցանելու, այդ մանուկը դէպ ի յետ ձգած գլուխով մօտեցաւ կոմսին և ձայն տուեց սաստկուԹեամբ. «Ա՛յս ի՞նչ խորհուրդ ունի, պարոն քեռի, որ Ձեր ծառաների վատԹար ամբոխը համարձակուեմ փակել իմ ներս մտանելը Ձեր սենեկի մէջ։ Ձեր քուեր որդի՞ն եմ ես, Թէ ո՞չ։ Մի՞ Թէ բանը այն տեղ է հասել, որ մի Թշուառ, սեղանի վերայ ման վեր կալնող ու դնող ծառայ կարող էր ինձ հակառակել և ընդդիմանալ։ Խնդրեմ պատասխան, պարոն քեռի»։

Նա՝ շուտափոյթ դուրս ցայտած խօսքերի միջոցին, արիւնաշաղախ դէմքով ներս մտաւ ծառան, որոյ ընդդիմուԹիւնը այդպէս զգահաւորել էր ազնուատոհմիկ Գէորգին։ Պաղատագին հայեացքով, առանց որ և իցէ խօսք ասելու, նայումէր դա, մի կատարեալ օրինակ ԹշուառուԹեան, կոմսի վերայ, որպէս Թէ ինդրումէր նորա բարեխօսուԹիւնը։ Սորան, աներկմիտ գտած կը լինէր այդ ծառան, եԹէ ազնուատոհմիկ Գէորգը դիպուածով չտեսանէր դորա կերպարանքը մի հանդիպակաց հայելու մէջ։ Իսկոյն յետ դարձուց նա դէմքը դէպ ի ծառան. «Թշուառակա՛ն դու», աղաղակեց նա։ «Դու համարձակուե՞մես առանց կոչուած լինելու ներս մտանել իմ քեռուս սենեակը։ Թռի՛ր կարօ, բռնի՛ր։ Հալածի՛ր այդ տղայդ դէպ ի դուրս և պատա՛ռ պատա՛ռ արա նորա վերայի հանդերձը, եԹէ կարող ես ճանկ ձգել նորան»։

Եղնագոյն արագաշարժ շունը լսեց իւր մանուկ իշխանի հրամանը և հնազանդուեցաւ իսկոյն։ Փուշ փուշ եղած մազերով, ատամները սրած և կատաղի հաչողուԹեամբ Թռաւ նա ահաբեկուած ծառայի վերայ, որ իւր միակ և վերջին փրկուԹիւնը կարող էր գտանել արագափոյթ փախստով։ Դուրս Թռաւ նա սենեկից, Թևաւորուած քայլերով վազելով երկար կօրիդօրի միջից և լերդապատաւ ցած գլորուելով ապարանքի լայն սանդուղներից, իսկ շունը հաչելով և ոռնալով նորա քամակից։ Նորա բոցավառուած կատաղուԹիւնը ևս աւելի սաստկացաւ անզգամ մանուկի քաջալերուԹեամբ, և այդ շունը գզգզած կը լինէր փախստական ծառայի միսը, եԹէ նորան յաջողուած չլինէր ազատուիլ շուտով ներս մտանելով մի դրանից և իսկոյն փակելով դորան։ Բայց այնքան մօտ էր եղած նորան վտանգը, որ նա կարող էր ուրախ լինել, ողջ և առողջ պրծած լինելով։ Նորա հան-

*դերձի դրօշակը (փէշը) միայն իլել էր փախչողի վերայից և յաղթողապէս բերեց դորան դէպ ի իւր մանուկ իշխանը, որ և ծիծաղելով ընդունեց այդ կողոպուտը։*

*Ա՛յս տեսարանի միջոցին կոմս Բօթենբերդը խօսել չէր մի բառ։ Ամենևին քարացած նստած էր այն տեղ, և հրամանը, որ նա կամէր տալ, խնայելու ծառան, սառեցաւ նորա շրթունքի վերայ։ Դատարանի պաշտօնակալը վեր էր թռած և աշխատումէր խօսքով ու ակնարկութեամբք յորդորել աղնուատոհմիկ Գէօրգը յետ կանչելու իւր շունը։ Բայց Գէօրգը անտես արեց ալևորին, և երբ որ արդէն աւարտած էր այս վայրենի որսահալածութիւնը և կարօն յետ էր եկած, դարձուց դէմքը դէպ ի կոմսը և նորա հիւրերը։*

*Կոմս Բօթենբերգը առաւ մի շատ ծանր կերպարանք։ «Քո բաղդն է, Գէօրգ», ասաց նա, «որ շունը վնասել չէ ծառային։ Դու քո անձը մի ծանր պատժի պարտական ես կացուցել, և ես կարող եմ միայն ներել քեզ քո մանկութեան պատճառով։ Գնա, հեռացիր և այսօր չերևիս դու իմ աչքիս»։*

*Աղնուատոհմիկ Գէօրգը իսկոյն շրջեց երեսը, առանց որ և իցէ ներողութիւն խնդրելու և թողեց սենեակը առանց հրաժարական ողջունի, նոյնպիսի հպարտութեամբ և խրոխտանքով, ինչպէս և ներս էր մտած։ Յաստիկ զարկողութեամբ փակեց դուռը յետքից, շուտափոյթ ոտքով ցած վազեց ամրոցի սանդուղներից և սկսաւ եղանակել մի տաղ։ Ցած հասանելով ամրոցի գաւիթին, հրամայողաբար ձայն տուեց ախոռի սպասաւորին, բերել տուեց մի ձի և արշաւակի ճանապարհ ընկաւ դէպ ի ծառաստանը։*

*«Դա մի վայրենի տղայ է, այդ Գէօրգը, ասաց կոմսը, երբ որ վազընկեց ձիու սմբակների զարկողութիւնը լսուեցան հեռուից։ Դուք տեսաք նումէք, իմ պարոններ, թէ ի՞նչպէս հարկաւոր էր ամենևին ծածուկ պահել իմ կտակս։ Եթէ մանուկը իմացաւ, թէ նա իմ ժառանգս է, այնուհետև անհնարին էր սանձահարել նորան»։*

*Ատենադպիրը լռեց։ Բայց դատարանի ալևոր պաշտօնակալը տարակուսելով շարժեց իւր սպիտակեցած գլուխը և ասաց։ «Տէր կոմս, թո՛ղ իմ ասելիքս յարուցանեն ձեր տհաճութիւնը իմ վերայ, բայց ես բարեխղճաբար պիտի ասեմ, որ եթէ Դուք շուտով չխուզէք Գէօրգ մանուկի թևերը, նա դառնալու է մի անպիտան և չարագործ մարդ։ կամ թէ անբաղդութեան հարուածները մի օր իւրեանց սրերով կ'ուղղէին նորա սիրտը։ Եթէ Գէօրգը էմ քուեր որդիս լինէր, ապա ուղի օր կը վանկէի նորան բանտի մէջ, տալով նորան հաց ու ջուր միայն, և այդպէս շուտով կը նուաճէի նորա կատաղի սիրտը։ Բայց Դուք, տէր կոմս, քնքշացնելով աւերումէք այդ թևթևամիտ մանուկը։ Մի բարկանաք իմ, ալևոր մարդուս վերայ այս ազատամիտ խօսքի մասին։ Դա մի բարեխորհուրդ խօսք է, և Աստուած տայ, օր ես սխալուած լինէի»։*

*Այս խօսքերը ասած, վեր կացաւ ալևորը և պատկառանքով գլուխ տալով կոմսին հեռացաւ։ Ատենադպիրը հետևեցաւ նորան և կոմսը դար-*

ձեալ գտանվումէր, կամ թէ կարծումէր իւր անձը մենակ իւր սենեկում։ Երկար միջոց, մտքերի մէջ խորասոյզ եղած, անհանգիստ անց ու դարձ էր առնում։ Ինչպէս հեշտ նկատելի էր, նա պատերազմումէր ինքը իւր հետ, տարակուսանքի մէջ լինելով, թէ ի՛նչպէս պէտք էր որոշել խնդիրը։ Վերջապէս ձայն տուեց նա. «Ո՛չ, ո՛չ. նա չէ՛ իմ եղբայրս աւելի։ Թո՛ղ Գէորգը տասնապատիկ վայրենի տղայ լինի, այնու ամենայնիւ նա ունի բարի սիրտ, զգումէ իւր արած անիրաւութիւնը։ Ես իմ կտակս փոխելու չեմ»։

Ա՛յս հնչեցրեց զանգակը, որ գայ սպասաւորը. նա հրամայեց դորան հագցնել իւրեան, նստաւ ձին և արշաւեց դէպ ի ծառաստանը իւր քուերորդու քամակից։

Երբ որ նա թողել էր սենեակը, փոքրիկ Բերթան դուրս թռաւ իւր ծածկարանից, կանգնեցաւ պատուհանի մօտ և մտախոհ նայումէր կոմսի քամակից։

«Ո՞րքեա՛ք պիտի էր ինձ ասել Գէորգին, ինչ որ լսած ու տեսած էի», ասաց նա քթի տակին։ — «Ո՛չ» ձայն արձակեց նա վճռաբար. «այդ հարկաւոր չէ ինձ. պատճառ, բարի կոմսը չկամի այդ բանը»։

Ա՛յնուհետև, ուրախացած դարձեալ դիմեց նա դէպ ի իւր պաճուճապատանքը և ամբողջ ժամեր հանգիստ խաղումեր նոցա հետ, առանց որ և իցէ շփոթուելեան։

---

## ՉՈՐՐՈՐԴ ԳՕԴՈՒԱԾ.

## ԿՈՄՍԻ ԵՂԲԱՅՐԸ.

Ա՛նանցանելի և խոշոր սարերի ծերպերում բարձրանում էր մի զառիվեր, սեպացած ապառաժի վերայ մի հին դորշագոյն, փշուր փշուր եղած պատուար, որ նախընթաց դարերում պիտի եղած լինէր մի փառաւոր ամրոց։ Ա՛յժմ շրջապատը և շինուածքը ըստ մեծի մասին աւերակ էին և, ապառաժի ոտքից նայելով, երևումէին ամենևին անբնակ։ Ոչինչ տեղ երևում չէր մի մարդկային արարածի հետք։ Ամրոցի բոլոր շինուածներից աւելի վեր բարձրացող աշտարակի խախուտ պսակների չորս կողմ թռչոտումէին ճչալով անծիղներ և ագռաւներ. աղուէսներ դուրս էին պարզում երեսները պատերի ճեղքից և կուզէր ու կղնաքիսներ արձակ ու համարձակ խաղումէին մեայլ աւերակների հնացած թնդանօթախորշերի և պատուհանների մէջ։

Ա՛յնու ամենայնիւ, այն տեղ վերևում, աշխարհի ղբաղմունքից հեռացած ու առանձնացած ապրումէր մի յառաջուց հարուստ և երևելի անձն, Րօթենբերգ կոմսի եղբայրը։ Մի հատ ալևոր ծառայ տարիներ յառաջ եկել էր նորա հետ այս վայրենի տեղս, և այդ երկուքը կենդումէին այս միայնութեան մէջ ամենևին անփոյթ այն բաների մասին, որ լինումէին աշ-

*խարհում։ Կոմս Հուգօն, հրացանը և որսորդական պարկը ուսին, ամբողջ օրե-*
*րով թափառումներ լեռնային մեայլ անտառների և ձերպերի մէջ, հալա-*
*ծումներ գայլեր և եղջերուներ թանձր ծառաստանի և մացառների միջով և*
*սակաւ էր պատահում, որ վերադառնար դէպ ի տուն, առանց որս բերե-*
*լու դէպ ի իւր ապառաժեայ օթեւանը։ Այդ միջոցին սպասաւորը Հոգու-*
*մեր տնային գործերը և պատրաստումներ Կոմսին նորա աղքատին հայկա-*
*րութիւնը, որ ըստ մեծի մասին գոյանումներ որսի արդիւնքից։ Փոքր էր պա-*
*պատահում, որ սա հեռանար Կոմսից, որ սարերից ցած իջաներ դէպ ի*
*դաշտը, առեալ մերձակայ քաղաքից, որ մղձեաւոյ հեռի էր ամրոցից,*
*բերելու անհրաժեշտ հարկաւոր պիտոյքը, որ այն վայրենի սահմանը կա-*
*րող չէր հասուցանել։*

*Կոմս Հուգօն մի մեայլ և քրիստոնեայ մարդ էր։ Այնպէս խոշոր, ինչ-*
*պէս վայրենի աշխարհը նորա շրջակայքում, էր և նորա բնաւորութիւնը։*
*Երբէք մի ժպտումն պայծառացնում չէր նորա դէմքի մեայլ գծագրու-*
*թիւնքը։ Երբէք նորա շրթունքը բացվում չէին մի քաղցր խօսակցութիւն*
*առնելու։ Այնպէս խաւար, ինչպէս առաւօտուն դուրս էր գնացել դէպ ի*
*անտառը, վերադառնում և երեկոյին դէպ ի տուն։ Առանց հրաժարական*
*խօսքի հեռանում անից, առանց վերադարձի ողջունի ներս էր մտանում*
*իւր անապատ սենեկի մէջ։ Ամենակարևոր պատուէրքը միայն տալիս էր իւր*
*ծառային և յանդիմանում նորան, եթէ նա ճշդութեամբ և զգաստու-*
*թեամբ լցուցել չէր նորանց։*

*Ընդհակառակ տարիներում Կոմս Հուգօն ոչ թէ միայն մի հարուստ, այլև*
*բաղդաւոր մարդ էր եղած։ Մի հատ ախտ, թղթախաղութիւնը կործանել*
*էր նորան աղքատութեան և թշուառութեան մէջ։ Անօգուտ էր եղած,*
*որ նորա եղբայրը Կոմս Վալտերը այն ժամանակ զգուշացուցել էր նորան։*
*Հուգօն անտես արեց եղբօր խրատները և անցուցանում էր օր ու գիշեր խաղի*
*տներում։ Սկզբում բաղդաւոր լինելով, յետոյ կորցրեց իւր բոլոր հարըս-*
*տութիւնքը, իւր բոլոր գեղեցիկ ամրոցները և կալուածները։ Մի օր դուրս*
*եկաւ նա խաղի գժոխքից և այնուհետև կարող չէր ոչինչ բան իւր սեփա-*
*կանութիւն ասել, բաց ի այն աւերակ անբնակելի և բացակայ ամրոցից*
*սարերի մէջ, ուր նա այժմ տրտմութեամբ անցուցանում էր իւր կեանքը։*
*Բայց ոչ թէ միայն իւր գոյքը կորցրել էր նա, այլև վնասել էր նա իւր հո-*
*գուն։ Մի ղուարթ, բաղդաւոր մարդուց փոխարկուած էր նա դէպ ի մի*
*մեայլ և չար մարդ։ Նա ատում էր աշխարհը, ատում էր իւր առաջին օրերի*
*բարեկամները և իւր եղբայրն իսկ, որ ամենևին հրաժարուել էր նորանից,*
*երբ որ նորա բոլոր յորդորանքը և խնդիրքը անօգուտ էին մնացած։ Այնու-*
*հետև դառնացած սրտով թաղեց նա իւր անձը իւր հին ապառաժեայ ամ-*
*րոցի անմխիթար միայնութեան մէջ։ Աղքատին կերպով կարդեց նա այս*
*տեղ իւր անտեսութիւնը և անդուլ ու անդադար թափառումներ շրջակայ*
*մեայլ լեռնածերպերի և անապատների մէջ։ Երբէք կարող չէր նա առաջին*
*փառաւոր օրերը մոռանալ, և քանի որ մտաբերումներ դորանց, այնքան ևս*
*անգոհ, տհաճ և քրիստոնեայ էր դառնում նա։ Նա կարօտով ցանկանում էր*

իւր միայնութենից վերադառնալ դէպ ի աշխարհի փառքը. և ինչպէս ուրորուրը աչք է ածում իւր որսի վերայ, նոյնպէս աչք էր ածում նա իւր եղբօր մահուան վերայ, որոյ ահագին գոյքը, ինչպէս կարծումէր նա, պիտի հասանէր նորան, իբրև ամենամօտ ժառանգաւորին։ Որչափ յաճախ սպասաւորը թողումէր նորան, ցած գալու դէպ ի դաշտը, կոմսը դորան պատուէր էր տալիս վերահասու լինելու վալտեր կոմսի որպիսութեանը, և ամեն մի տեղեկութիւն նորա ողջ և առողջ կեանքի մասին բազմապատկումէր նորա կատաղութիւնը և ատելութիւնը և ամբողջ շաբաթներ շինումէր նորան ևս առաւել անտանելի և մարդատեաց, քան թէ սովորաբար էր նա։

Ըստ ժամ հասկանալի է մեզ, թէ ինչու կոմս վալտերը ժառանգութենից զրկեց իւր եղբայրը և մտածումէր իւր մեծ կալուածները թողուլ իւր քուերորդուն։

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՕԴՈՒԱԾ.

### ԱԶՆՈՒԱՏՈՀՄԻԿ ԳԷՈՐԳԸ.

Մենք թողեցինք այդ երիտասարդը այն տեղ, երբ որ նա արձակելով շունը իւր եղբօր որդու սպասաւորի վերայ, հեծաւ ձին և վազեց դէպ ի անտառը, որս առնելու համար։ Աղնիւ որձ ձին արաբական ցեղից, որ կրումէր նորան, սկսաւ կաքաւել նորա տակին հպարտութեամբ և զօրութեան լիութենից, և կարելի չէր հեշտ մի աւելի գեղեցիկ բան տեսանել, քան թէ այդ մանուկ ձիաւորը, որ աջողակութեամբ և կատարեալ վայելչութեամբ սանձահարումէր յետին ոտքերի վերայ բարձրացող, թուչող, թնդացող սեւ ձին։ Այժմ թոյլ տուեց նա սանձը, խթեց ձիու կողերը, և ծտի պէս արագ, փառաւոր արշաւանքով վազեց ձին կարճաբոյս հաւասար խոտադաշտի վերայ։ Ցետոյ դարձեալ պինդ քարշեց սանձը, արշաւանքը փոխարկուեցաւ մի կարճ, թեթև վազք, մի կաքաւողական քայլափոխութիւն։ Գեղեցիկ անասունը թուչումէր մի նրբակազմ եղնի նման հողի վերայ։ Նորա աչքերը փայլատակումէին, փրփուրի տարափներ խայտաճամկումէին նորա փայլուն սպիտակ մորթը և մի արագ կարճ շնչառութիւն ցուցանումէր տաքացած ձիու անհամբերութիւնը։

Վնորգը անտես արեց այս բոլորս։ Թէպէտ նա պինդ և ապահով նստած էր ձիու վերայ, բայց ակնյայտնի էր, որ նորա մտածմունքը զադարումէին ոչ թէ ձիու, այլ ամենևին ուրիշ բաների վերայ։ Այդ կարելի էր, նկատել նորա երեսի շուտով փոփոխուն տպաւորութեան վերայ, նորա սաստիկ շարժողութիւններից, նորա լոյոր ընթացքից։ Նա հասաւ անտառին, շրջեց ձին դէպ ի ծառաստանի ամենախիտ թանձրութիւնը և յառաջ էր գնում, առանց ուշադիր լինելու ճանապարհին, խորդաբորտ տեղերով։

Ձին Թռաւ մի բաւական լայն առուի վերայից — նա անփոյթ արեց այդ. ձին սայթաքեց մի խաշոր քարի վերայ — նա հոգս չունէր դորա մասին. ձին պար էր գալիս մի ծաղկաւէտ մարգագետնի վերայ, դադարումէր, խոտ էր դուրս քարշում գետնից — Գէորգը թոյլ տուեց նորան արածել։ Վերջապէս մի շատ ցած կաղ ընկած ծառաճիւղ խլեց նորա գլխից գդակը. այնուհետև գդաստացաւ նա։ Զարմացած նայումէր իւր չորս կողմը, և այժմ իսկապէս նկատեց իւր ձիու վաստակածութիւնը և թէ նա գտանվումէր անտառի խորքի մէջ։

«Դու անբաղդ անասուն», ասումէր նա քթի տակին, «դու չարչարուած ու տանջուած ես ինձանով։ Սպասի՛ր, ահա ես կ՚ազատեմ քեզ, և դու մի ժամիկ պիտի այս տեղ շրջիս ու արածես, ամենևին, ինչպէս հաճոյ է քեզ»։

Գէորգը թևթևութեամբ և աղնիւ վայելչութեամբ ցած Թռաւ թամբից, սանձը վեր կալաւ ձիու վերայից, թուլացրեց թամբի կապերը և թոյլ տուեց նորան վազվզել ազատաբար։ Ո՞չ ապաքէն դիտէր նա, որ այդ ձին իսկոյն չետ էր գալու, միայն թէ ձայն տար նորան։ Զուարթութեամբ խրխնջալով արաբացին, Թռաւ, հեռացաւ և աղնուատոհմիկ Գէորգը արձակեց վերայից որսորդական դանակը, հրացանը և որսորդական պարկը դրեց խոտի վերայ և ինքն ևս Հանգստացաւ անտառի փափուկ մամռի վերայ. կարօն, սրավազ որսորդական շունը այս միջոցին հալածումէր որսը թռչուների մէջ։ «Իմ բնութեան անբաղդ տաքութիւնը կարող էր ինձ, այո՛, զրկել իմ բարի հօրեղբօր ընորհից», մտածումէր Գէորգը, երբ որ իւր վառուն երեսը ձեռի վերայ հաստատած, տարածուած էր գետնի վերայ։ «Ի զուր աշխատեցի ես զսպել իմ անձը, ի զուր ջանացի մեղմացնել իմ վայրենի արիւնը, որ ամեն մի չնչին առիթով սաստիկ վազումէ իմ երակների միջով և առնում տանումէ ինձ դէպ ի այնպիսի խօսք ու գործ, որ ես մի փոքր չետոյ դառնապէս պիտի զղջամ։ Ի՛նչ էր արել ինձ այն խեղճ տղան, հօրեղբօրս ծառան, որ ես կարօն արձակեցի նորա վերայ։ Ո՞չ ապաքէն նա լցուցել էր միայն իւր տիրոջ հրամանը, և դորա փոխարէն արժան էր նորան գովաստնութիւն ասելն, քան թէ պատիժ։ Նա կը համարէ և պիտի համարէ ինձ մի լուռնակալ, մի արիւնածարաւ Ներոն, որպիսի ես — վկայ է Աստուած — չեմ։ Բայց այս իմ բարքս պիտի փոխուի։ Ես կը սանձահարեմ իմ անձս, կ՚աշխատեմ յաղթել իմ ախտերին, ես կը լինիմ հեզ, համբերող և մեղմ, որպէս մի գառն։ Այնուհետև ինձ կը սիրեն այն մարդիկը, որ այժմ ատումեն ինձ և գարշումեն ինձանից. այնուհետև նոքա չեն համարելու ինձ մի հպարտ, մեծամիտ և անգութ տղայ»։

Գէորգը ծածկեց երեսը ձեռների մէջ և դողումէր ներքին շարժողութենից։ Նա արդարև սրտի խորքից և անկեղծաբար զղջումէր իւր անիրաւութիւնը, և բոլոր խորհուրդները, որ նա յղանումէր, լցուցանելու շատ բարի կամք ունէր։ Բայց ցաւալի է ասել, որ նորա սրտի բարի շարժողութիւնքը այնպէս կարճատև էին և անցողական, որպէս չար շարժողութիւնքը, և մի ժամ յետոյ նա արած կը լինէր նոյն բանը, ինչ որ մի ժամ

չառաջ արել էր։ Գէորգը չէր մի վատթար, բայց ախտաւոր մարդ։ Հպարտութիւն, մեծամտութիւն և գահասիրութիւն նորա սրտի մէջ բարձակից էին բարեսրտութեան և աղնուամտութեան հետ. ինչպէս որ նա բարկութեան մէջ առանց տարակուսելու սպանած կը լինէր մի մարդ, նոյնպէս և առաւել ևս իւր յաւտուկ կեանքը վտանգի տակ դրած կը լինէր միւսի կեանքը փրկելու համար։ Նա մի պատուական երիտասարդ եղած կը լինէր, եթէ կարողացած լինէր սանձահարել իւր անձը։

Յաւելի է ասել, որ նորա ծնողքը անիոյթ էին արել մանկութեան օրերից նորա ուշադրութիւնը դարձուցանել իւր սխալանքների վերայ։ Փառաւոր կեցութեան մէջ դաստիարակուած իւրեանց տնուն, ամենեցուն կողմից փայփայուած և գովասանուած և սոլորած միշտ հրամայելու, բայց ոչ երբէք հնազանդելու, նորա բնաւորութեան ընդարձոյս պակասութիւնքը աճեցին, զօրացան և խոր արմատացան նորա հոգու մէջ։ Այն օրերում երբէք մտածել չէր նա սանձի տակ դնել իւր կիրքը։ Տակաւին մի բաղդատութիւն էր նորա համար, որ նորան տալիս էին մեծ գովասանութիւն, երբ որ նա մի բարի բան էր արել։ Գովասանութիւնը քաղցր էր նորա սրտին, և զորան գտանելու համար, զանցառու չէր ոչինչ պատեհ միջոցի, զորան արժանի կացուցանելու իւր անձը։ Միայն թէ այդ պատեհ միջոցները շատ սակաւաթիւ էին, որովհետև նա չէր որոնում նորանց աւելի ջերմեռանդութեամբ։

Երբ որ մեռան նորա ծնողքը, որ ապրած էին մեծատնաբար և ահագին ծախքեր էին արած, Գէորգը տասն և չորս տարեկան էր։ Նոքա ոչինչ թողել չէին նորան բաց ի պարտքից։ Նորա մօրեղբայրը վճարեց զորանց, ընդունեց մանուկը իւր մօտ և սիրեց նորան, նորա ազնիւ յատկութիւնների պատճառով։ Երբ որ յետոյ նորա պակասութիւնքը, մանաւանդ թէ անպայման գահասիրութիւնը, դուրս երևեցան, մանուկը արդէն այնպէս խոր նստած էր քեռու սրտի մէջ, որ սա կարող չէր յանձն առնուլ խստութիւն գործ դնել նորա ընդդէմ։ Նա շատ սիրումէր այդ պատանին, քան թէ կը կամենար պատժել նորան։ Նա մտատանջվումէր, մի՛ գուցէ ցաւեցնէ նորա սիրտը, և այդ պատճառով թոյլ տուեց գործին գնալ, ինչպէս կամէր։ Բայց երբ որ այդ մանուկը արդէն փրկել էր իւր քեռու կեանքը, այնուհետև սա երբէք փակում չէր նորա կամքը, և հազիւ միայն գալիս էր մի յանդիմանական խօսք նորա շրթունքի վերայ։ «Բորբոքուն կրակը կը հանգչի, բոցավառ ջերմութիւնը մանկութեան կը մեղմուի», մտածումէր նա։ «կը գայ ժամանակը և կը բերէ իւր հետ ճարը»։

Երբեմն նկատ ժամանակը և բերեց իւր հետ ճարը, բայց մի այլկերպով, քան թէ մտածել էր կոմսը։ Դաստիարակութիւնը, որ անհոգ էին արել ծնողքը և քեռին, յանձն առաւ յետոյ ձախորդութիւնը։

Այլ թէ Գէորգը ինչպէս էր փրկել իւր քեռու կեանքը, ահա դորա պատմութիւնը։

Ընդհանն վերջին միջոցում, երբ որ հողմը ցամաք տերևները թափումէր ծառերից և անձրևի հեղեղներով գետինը լպրծուն էր դարձել, կոմս Վալ-

տերը և Գէորգը մի օր դուրս գնացին դէպ ի անտառը կինջ (վայրի խոզ) որսալու։ Շուները զուարթութեամբ հաչելով թռչտուքին ձիաւորների չորս կողմ, և անտառի մէջ հասած, շուտով յայտնի կացուցին մի հսկայ-յամարմին վայրի խոզն հետք, որ իւր որջից դուրս հալածուած, գոռալով և սպիտակ ատամները բարկութեամբ սրելով վազեց անտառի թանձրութեան միջով։ Շների բաղմութիւնը ոռնալով ընկաւ նորա քամակից և ամենարագ ձիարշաւութեամբ հետևեցան նոցա կոմն Վալտերը և Գէորգը։ Կոմսը աւելի հմուտ էր ձիընթացութեան քան թէ աղնուատոհմիկ պատանին, վասն որոյ մի փոքրիկ տարածութիւն յառաջ էր վազել նա։ Մի փոքրիկ միջոց որսորդքը հալածելով հալածեցին որսը, դադար չտալով նորան։ Վերջապէս մի թանձր թուփ արգելից վայրի խոզի յառաջադիմութիւնը և նա կատաղութեամբ յետ դարձաւ ընդդէմ իւր հալածողներին։ Սաստիկ վազողութենից հևալով յարձակուեցան շուները թշնամու վերայ և ամուր բռնեցին նորան, թէպէտ մի քանիսը նոցանից իւրեանց համարձակութեան փոխարէն մահ գտան։ Կինջը փրփրալով կատաղութենից յարձակուեցաւ այս և այն շան վերայ և իւր սուր ատամներով հասուց նոցա խոր և մահացուցիչ վէրք։

Մի վայրկեան յետոյ արշաւելով մօտեցաւ կոմսը, տեսաւ կինջը շներից բռնած, բայց տաքացած լինելով որսորդութեան ուրախութենից, զանց արեց արձակել նորա վերայ մի մահացուցիչ գնդակ հրացանից, և ցած թռաւ ձիուց, որսորդական սրով մէջից ճեղքելու նորան։ Բայց այն րոպէին, երբ որ կոմսը հարուած հասցրեց վայրի խոզին, ոտքը սահեց լքըծուն կանաչ խոտի վերայ. Թէպէտ նա ցաւեցուցիչ կերպով վիրաւորել էր անասունի թիկունքը, բայց ոչ դէպ ի մահ։ Վէրքի ցաւից կատաղած անասունը գործ դրեց իւր բոլոր զօրութիւնքը, որ աղատէ իւր անձը շներից որ տակաւին ամուր բռնած ունէին նորան, և այդ բանը յաջողեցաւ նորան։ Նա յարձակուեցաւ կոմսի վերայ, թեքեց իւր խոշորամարմ գլուխը և կամէր ատամներով պատառել անօգնական գետնի վերայ տարածուած կոմսի փորը, և ահա կոմսի փրկութեան համար սոյն վտանգաւոր րոպէիս վերայ հասաւ աղնուատոհմիկ Գէորգը և մի հայեացքով աչքի տակ բովանդակեց իրերի կորստաբեր որպիսութիւնը։ Առանց մտածելու իւր անձնական ապահովութեան վերայ, թռաւ ձիու վերայից, հրացանը իսկոյն քարշեց թշնի, մի րոպէ ուղղեցրեց դէպ ի նպատակը և բաց թողեց հրացանի ոտքը։ Գնդակը թէպէտ չդիպաւ, բայց արգելեց ամենամօտ և ամենամեծ վտանգը, որովհետև վայրի խոզը բաց դարձաւ կոմսից և շրջեց դէմքը դէպ ի նոր թշնամին։ Գէորգը ամուր ոտքով սպասեց կատաղի գազանին և մի ծնկի վերայ ցած նստած, իսկ միւս ծնկի վերայ ղէնքը հաստատած, երկու ձեռքով բռնած ունէր դուրս հանած սուրը ընդդէմ գազանին, որ վզի ոսկրի մօտ ներս կոխէր նորա կուրծքի մէջ։ Կատաղութենից կոյր և մոլեգնուած գազանը յառաջ վազեց հալածուելով շներից։ Նա չտեսաւ սուր ծայրը գաշնակի, միայն թշնամին աչքի տակ պահելով։ Իւր մարմնի բոլոր ուժին բերմամբ և առաւել զօրացած ծանրութեամբ վազեց գազանը ուղ-

*ղակի սուր զէնքի վերայ և դէպ ի գետին խորտակուեցաւ, և պատանին իւր հետ միասին ցած գլորելով։*

*Մի ահալլից աղաղակ կոմսի կողմից, որ, մինչ այս մինչ այն, ժողովելով զօրութիւնքը դէպ ի վեր էր բարձրացել և ականատես էր եղած վտանգաւոր տեսարանին, հնչեց օդի մէջ, երբ Գէորգը ցած գլորուեցաւ և թաւալվումէր կանաչ խոտի վերայ։ Բայց ողջ և առողջ վեր կացաւ նա դարձեալ և լի խնդութեամբ զրկախառնեց իւր փրկուած քեռին։*

*Կոմս Վալտերը քնքշութեամբ սրտին սեղմեց իւր քուերորդին և թոթովեց շնորհակալութեան և ուրախութեան խօսքեր յաջողութեամբ յաղթած վտանգի մասին։ Ապա հետև նորա ձեռների վերայ և վերադարձան դէպ ի տուն, որ մարդիկ ուղարկեն դէպ ի անտառը, սպանած գազանը բերելու դէպ ի ամրոցը։*

*Վայրենի խողն մահաբեր ատամները, գեղեցիկ պատած ոսկով, այնուհետև զարդարումէին կոմսի սենեակը, և կոմսը երբէք մոռանում չէր իւր քուերորդու քաջագործութիւնը։ Ներողամտութեամբ անմեղադիր էր առնում նորա սխալանքը, երբէք ասում չէր նորան մի կոշտ կամ դառն խօսք, և աղնուատոհմիկ Գէորգը զարձաւ այնպէս, ինչպէս էր. մի անսանձ, մեծամիտ, գահասէր և բարկացկոտ պատանի։*

*Տակաւին հանդստացած էր նա կակուղ մամուռի վերայ, մտածումէր ինքն իւր վերայ և յղանումէր իւր մէջ ամենալաւ խորհուրդներ, և ահա մի ձիու ոտնաձայն հնչեց անտառի թանձրութեան մէջ, և կոմս Վալտերը դժուարութեամբ ցած ծառերի և փշոտ թուփերի միջով յառաջ էր շարժվում դէպ ի իւր քուերորդին։ Գէորգը վեր թռաւ և ձայն տուեց իւր քեռուն մի զուարթ և ուրախալից ողջոյն բարով եկար։ Մի րոպէի մէջ ղողջման և ուղղութեան բոլոր խորհուրդները մոռացուեցան և դոցանից ոչինչ հետք նկատելի չէին նորա երեսի վերայ։ Եւ ամենափոքր ստուերը ջնջուած էր և մի շատ խիստ կամակորութիւն յաջորդել էր նորա տխմարութեանը։ Նա կատակումէր այն տառապանքի վերայ, որոյ հետ ունէր պատերազմելու կոմս Վալտերը, և բարձրաձայն ծիծաղումէր, երբ մի սուր փուշ այս տեղ պատառումէր մի ծուէնք նորա հանդերձից, իսկ այն տեղ մի լայն ծակ էր առնում։ Վերջապէս ձայն տուեց նորան, որ յետ դառնայ և աշխատ չլինի աւելի։ Նա ինքը շուտով լինելու էր նորա մօտ։ Կոմս Վալտերը դադարեցրեց իւր ձին և Գէորգը սաստիկ սուլեց, մատը դնելով բերանին։ Իսկոյն վազելով եկաւ նորա մօտ մի կողմից հնազանդ արաբացի ձին, միւս կողմից Կարօն, արագավազ շունը։ Աղնուատոհմ պատանին ձգեց սանձը ձիու վերայ, դարձեալ ամրացրեց ձիու գօտին, կապեց մէջքին որսորդական դանակը, կախեց ուսին հրացանը և որսորդական պարկը, հեծաւ ձիու վերայ և արշաւեց դէպ ի քեռին։ Ոչինչ էր համարում նա, արդեօք փուշերը պատառոտումէին նորա երեսը, նորա ձեռները և հանդերձքը։ Ուրախութեամբ թռաւ վազեց նա ձիու վերայ, և անցանելով քեռու մօտից ձայն տուեց նա, թո՛ղ աշխատի հասանել նորան, եթէ կամէր խօսել նորա հետ։ Ի զուր աշխատումէր կոմսը յետ պահել անզգամ պատանին։ Նորա ձայնը*

ցնդեցաւ օդի մէջ, առանց լսելի լինելու, և ծանր արշաւանքով վերջապէս ուղևորուեցաւ կոմսը յառաջ շտապողի յետքից։

«Դա մի վայրենի տղայ է» ասաց նա քթի տակին։ «Ա՛յո պիտոյ էր ինձ միանգամ օրինաւոր պատժել դորան»։

Խակոյն դարձեալ ժպտեցաւ նա, ուրախացած իւր սիրականի համարձակութեան և աջողակութեան վերայ, և երբ որ վերադարձած էր դէպ ի տուն, վաղուց արդէն ներել ու մոռացել էր իւր որդեդրի անզգամութիւնը։

Մինչ կոմն վալտերը տակաւին ծանրընթաց կատարումէր իւր ճանապարհը, Գէորգը արդէն տուն հասած, դարձեալ գործումէր անկարգութիւնք։

Ազնիւ թէ նա ցած էր թռած ձիուց և իւր որսորդական հանդերձը փոխել էր մի թեթև տնական հանդերձի հետ, և ահա փոքրիկ Բերթան ներս մտաւ նորա սենեկի մէջ և քաղցրութեամբ խնդրեց նորանից, իւր հետ միասին ցած գնալ պտղին և իւր համար մի քանի ծաղիկ քաղել։ Խակոյն պատրաստ էր Գէորգը լցուցանել փոքրիկ աղջկայ խնդիրը։ Նա բռնեց նորա ձեռնից և տարաւ նորան դէպ ի տնկատունքը։

Այն տեղ երկար շարակարգերով դրած էին փայտեայ պատուանդանների վերայ շատ սակաւագիւտ և գեղեցիկ ծաղիկներ ամենայն կլիմաներից։ Ծաղիկ ծաղկի մօտ փթթումեր և մինը փայլումեր և անուշահոտ էր քան թէ միւսը։ Արձակ համարձակ Գէորգը քաղումեր ծաղիկներ և կապեց մի մեծ փունջ։

Կոմսի պտղպանը եկաւ և տեսաւ իւր սիրելի, ջուր տուած և խնամարկած ծաղիկների մէջ արած աւերանքը։ Բարկութիւնը այս բանի վերայ յաղթեց պտղպանին և սա փոքր ինչ անքաղաքավարութեամբ պատասխանատուս կացուց աղնուատոհմիկ պատանին։

«Չէր կոմսը հրամայել է, որ ոչ ոք չհամարձակուի կողոպտել տնկատունքը առանց նորա առանձին թոյլտուութեան», ասաց նա։ «Ամէն տէր կոմսը չէ արել ոչինչ բացառութիւն նախամեծարութեամբ դէպ ի մանուկ պարոնը. վասն որոյ պիտի խնդրելով խնդրէի, որ իմ ծաղկի կճոյճները հանգիստ թողուիք, աղնիւ երիտասարդ»։

Գէորգը զարմացած նայուեր համարձակախօս պտղպանի երեսին։ «Դու խակոյն դո՛ւրս գնա այդուց, ապա թէ ոչ . . .» հրամայեց նա տակաւին բաւական հանդարտ ոճով։

Պտղպանը չշարժեցաւ տեղից, որ աղնուատոհմիկ երիտասարդի հրամանը լցուցանէ, այլ հաստատուելով իւր իրաւունքի վերայ, յառաջ բերեց զանազան ընդդէմ պատճառներ։ Գէորգի բարկութիւնը զարթեցաւ։ Նորա աչքերը վառուեցան և հրամայողական ձայնով բացագանչեց, «Դո՛ւրս, դէպ ի դո՛ւրս։ Հեռացի՛ր, եթէ չկամիս զգալ իմ ձեռնի ծանրութիւնը»։

Երբ որ պտղպանը չկամեր հնազանդիլ, Գէորգը վեր կալաւ մի ձող,

որ ընկած էր ճանապարհի վերայ և այնպիսի սաստկութեամբ նետեց Նորան այգեպանի գլխի վերայ, որ այն խղճալի մարդը ցած գլորուեցաւ և մնաց այն տեղ ուշաբարձութեան մէջ։

Փոքրիկ Բերթան աղաղակեց ահից։ Բայց Գէորգը, որոյ կիրքը այժմ գրգռուած էր, հրամայեց Նորան սպառնալով, որ լուռ կենայ։ Նորա բոցավառ հայեացքը ահ բերեց երեխայի վերայ և նա գնաց Նորա յետքից հանհանդարտ և տրտմած։ Գէորգը հեռացաւ, անտես առնելով այգեպանը, և ուղղեց ընթացքը դէպ ի ծովակը որ, ինչպէս յիշուեցաւ արդէն, շրջապատուէր այգու մի կողմը։

«Մինչ մեք այժմ գնանք զբօսնելու ջրի վերայ, մինչև քեռին կը վերադառնայ դէպ ի տուն», ասաց Նա։

Ծովակին հասած փորձ փորձեց Նա նաւակը արձակելու։ Բայց սա մի ամուր շղթայով և փականքով կապած էր երկու ցիցերի վերայ և Գէորգը չունէր իւր մօտ բանալին։ Դիպուածով անց էր կենում այն տեղից մի մըշակ կացինը ուսին։ Գէորգը մօտ կանչեց Նորան, որ մէջից կտրէ շղթան կամ թէ ցիցերը։

«Այդ համարձակ չէ ինձ, ողորմած պարոն», ասաց տղամարդը և հեռացաւ։

Այժմ Գէորգի համբերութիւնը չգիտէր ոչինչ չափ ու սահման աւելի. կատաղութեամբ յարձակուեցաւ Նա մշակի քամակից, խլեց կացինը ուսից, առաւ կացնի կոթը և դորանով, որչափ կարող էր, սաստիկ թակեց տղամարդը որ չհամարձակուեցաւ պաշտպանել իւր անձը։ Նորա աղաղակը մօտ ժողովեց և այլ միւս այգեգործներ, որ զարհուրած կանգնած էին շրջակայքում, բայց համարձակվում չէին Գէորգի կատաղութեանը խափանարկու լինել։ Սա վերջապէս բաց ձգեց կացինը և հեռացաւ։ «Թո՛ղ դարձեալ միևը ձեղանից, շներիդ, անհնազանդ գտանուի ինձ. այնուհետև..» ձայն տուեց Նա և չքացաւ։

Փոքրիկ Բերթան հետևեցաւ Նորան լաց լինելով և երկիւղ ընկած սրտի մէջ։ Բայց աշխատաւոր մշակները կծկումէին ձեռները, շարժումէին բուռները և բթի տակին խօսումէին կատաղութեամբ. «Թո՛ղ միայն մեր կոմսը խփէ աչքերը, այնուհետև դժուար կը լիներ այդ անզուսպ երիտասարդի վիճակը»։

Երբ որ կոմսը հասած էր տուն, Գէորգի բարկութիւնը անցել էր արդէն և նա երևումէր միամիտ, զուարթ և ուրախ, ինչպէս միշտ։ Այգու մէջ պատահած անցքը նա մոռացել էր դարձեալ, և ոչ միևը Նորա ձեռնով վըշտացածներից համարձակվում չէր գանգատել Նորա վերայ։ Նըքա լաւ գիտէին, որ դորանից ոչինչ օգուտ յառաջանալու չէր։ Գէորգը էր և մնաց կոմսի փայփայանքով աւերուած սիրականը։

Այդ նըքա ինչպէս ատումէին Նորան։ —

ՎԵՑԵՐՈՐԴ ՅՕԴՈՒԱԾ·

## ՈՒՍՄԱՆ ԺԱՄԸ·

*Ո՛չինչ յետոյ պարոն Հելդը, աղնուատոհմիկ մանուկի ուսուցիչը և կառավարիչը եկաւ նորա սենեակը։*

«Դուք բոլոր առաւօտը վատնել էք, աղնուատոհմիկ Գէորգ», ասաց նա։ «Հարկաւոր կը լինի այդ կորուստը դարձուցանել»։

Գէորգը այդ րոպէին մտադիր էր եղած մի զբօսանք առնելու ձիով դէպ ի մերձակայ քաղաքը։ Ուսման ժամերը ամենևին մոռացել էր։

«Մենք կարող ենք էգուց մի ժամ աւելի վաղ սկսանել ուսումը, պարոն Հելդ», ասաց նա քրթմնջելով և կամեր բայ սողալ վարժապետից։ «Այսօր, ուղիղն ասեմ, չունիմ և ոչ ամենափոքր կամք չարչարելու անձնապրքերի և գիտութիւնների հետ»։

«Ինչպէս հաճոյ է Ձեզ, քաջատոհմիկ մանուկ», հանդարտութեամբ պատասխանեց պարոն Հելդը։ «Դուք գիտէք, որ ես չեմ ուսանողը, այլ Դուք։ Ուրեմն ձեր զանցառութեամբ միասում չէք ինձ, այլ ձեզ յատկապէս։ Գնացէք ուրեմն»։

Իւր Գէորգը հանդիպումէր տեղատուութեան, ուր չէր դիմադրվում նորան հակառակութիւն, այն տեղ նա հնազանդ էր, որպէս մի երեխայ։ Ուսուցչի անխռով խաղաղութիւնը յաղթահարեց նորան, և նա ամաչեց իւր հեղգութենից։ Նա բաց ձգեց ձիու մտրակը և գդակը, մօտ քարշեց մի աթոռ դէպ ի աշխատութեան սեղանը և ասաց. «Ուրեմն, սկսեցէք, որպէս հաճոյ է Ձեզ, պարոն Հելդ։ Ես կամիմ հանդարտ նստել իրրև մի գառն»։

Պարոն Հելդը նստաւ և խօսեց. «Վաղուց արդէն պատմել եմ ձեղ հին ժամանակների քաջ մարդերի, նոցա գործերի, խորհուրդների, առաքինութիւնների և արատների մասին։ Բայց ինձ երևում որ այս և այն բանը Ձեր մտքից գնացել է։ Թոյլ տուեցէք ինձ այսօր նորոգել Ձեր հիշողութեան մէջ Ալեքսոս և Մակեդոնացի Աղէքսանդր մեծի պատմութիւնը։»

«Դուք կը մտաբերէք, որ Աղէքսանդրը, մի փոքրիկ բայց քաջ ազգի իշխանը, իւր աթոռանստութենից յետոյ զինուորած ձեռնով յաղաղաց աշխարհների վերայ, որ նա Պարսից հզօր թագաւորութիւնը խորտակեց ղօրաւոր բազկով և յաղթութեամբ պսակուած խորամուխ եղաւ առակաճոխ Հնդկաստանի մէջ։ Անչափ անլսելի էին նորա յաղթութիւնքը, այնպէս բոլորովին տարապայման էին նորա տիրապետութիւնքը, որ մեծ Աղէքսանդրին, տակաւին նորա կենդանութեան միջոցում, ցոյց էին տալիս աստուածային մեծարանք։ Այնու ամենայնիւ այդ բարեբանուած քաջազունը ծրտափ հեռի էր վանմական աստուածայնութենից, ինչ մի այլ բան էր նա, քան թէ մի թոյլ, թշուառ, այո՛ յանցաւոր մարդ իւր սխոտերի բորբոքման րոպէում, իւր տարաստհման պատուասիրութեան, հըպարտութեան և մեծամտութեան մէջ, որով նա ցած էր նայում աշխարհի բոլոր արարածների վերայ»։

«Լսեցէ՛ք»։

«Աղէքսանդրը ունէր մի բարեկամ Կլիտոս անուն։ Շատ կանուխ մանկութենից սա զաստիարակուած էր նորա հետ միասին և նորա խաղակիցն էր, նորա մանկական գործերի ընկերակիցը։ Նա ուղեկից էր նորան նորա կռիւների և պատերազմների մէջ. նա կռւում էր նորա փառքի, նորա զէնքի պարծանքի համար։ Այո՛, միանգամ, իւր յաւուկ կեանքը վտանգի տակ դնելով, փրկեց իւր արքայական բարեկամի կեանքը մի արիւնաշաղախ պատերազմի մէջ ընդդէմ Պարսից։ Աղէքսանդրը սիրում էր նորան և ցուցանում էր նորան իւր շնորհակալութիւնը։ Նա գիտէր, որ շատ սակաւ սիրտեր աշխարհի մէջ այնպիսի հաւատարմութեամբ և սիրով նուիրուած էին նորան, ինչպէս իւր կաթնեղբօր և փրկող Կլիտոսի սիրտը։ Նա գիտէր, որ Կլիտոսը իւր արիւնի վերջին կաթիլը թափելու էր նորա համար. և թէպէտ այս բոլոր անձնանուէր սէրը և հաւատարմութիւնը, ամենամեծ շնորհակալութեան հարկը անդամանդեայ վահանի պէս պիտի պաշտպանէին Կլիտոսին, այնու ամենայնիւ Կլիտոսը գտաւ իւր մահը Աղէքսանդրի սպանողական ձեռնից։

«Յրժանամեծար Պերսեպօլիսը, նուաճած Պարսից սրբազան ազգային յիշատակարանը դղրդուեցաւ յաղթող Մակեդոնացոց յաղթական ցնծութենից։ Հին աւուրց հոյակապ, փառահեղ սրահի մէջ նստած էին երկար սեղանի վերայ Աղէքսանդր և նորա առաւել պատուական քաջազունքը և սոցա մէջ Կլիտոս։ Նորա արբեցած էին յաղթութեան բաժակով, արբեցած էին Պարսկաստանի և Յունաստանի կրակոտ գինիքից։ Աղէքսանդրի ձայնը հնչում էր առաւելապէս գահլիճի մէջ։ Նա մեծամտութեամբ և հպարտախօսութեամբ պարծենում էր իւր գործերով, իւր քաջասրտութեամբ, իւր ընդարձակ աստուածեղինութեամբ։

««Դուք բոլորդ եանդ իմ ձեռքիս գործիքն էք»», ձայն տուեց նա։ ««Դուք իմ ծառայքն էք, ընչին աստղեր, որ ինձանից, իբրև մի ճառագայթաւէտ արեգակից, ստանում էք ձեր լոյսը։ Ես Ձեր աստուածն եմ, Դուք իմ երկրպագողք։ Դուք այն փոշին էք, որ ես ոտքով կոխոտմամ։ Դուք ոչինչ էք առանց ինձ, ամենակարող քաջազունիս ամենայն ժամանակների և ամենայն ազգերի»»։

Յասպիսի և աւելի ևս ամբարտաւան խօսքեր թափուեցան Աղէքսանդրի բերանից, որ երբէք եղած չէր աւելի փոքրիկ և աւելի անարժան, քան թէ այն րոպէին, երբ որ նա իւր անձը համարումէր առաջինը մարդերի կարգում։ Նորա զօրապետների սիրտերը վառուեցան բարկութեամբ նորա արհամարհութեան վերայ, և Կլիտոսը վեր կացաւ և յետ թափեց Աղէքսանդրի հայհոյութիւնքը իւր ինքեան վերայ։ Փայլատակող աչքերով և սաստիկ շարժողութեամբք ձայն տուեց նա. «Ինչ կը լինէիր դու առանց մեզ, որ յարգարել ենք քեզ ճանապարհը դէպ ի յաղթութիւն և փառք։ Ո՞նչ կը լինէիր դու առանց ինձ, որ մի փոքր յառաջ փրկեցի քեզ մահու ձեռնից։ Լո՛ւր, Աղէքսանդր, լո՛ւր։ Մի՛ պարծենար քո քաջագործութեամբք։ Մե՛ք ենք, մեք ժողովածքս քո շրջակայքում, որոց դու պարտական ես փառք

*ու պատիւ։ Առանց զօրքի, առանց զօրապետների դու կը լինէիր աւելի նուաստ, քան թէ քո զօրախումբերի ամենանուաստ պատերազմողը։ Մենք ենք քո զօրութեան շարժող պատճառը։ Մենք էլ վայելում այն փառքը, որ դու յափշտակում ես քեզ»։*

*Պատաղութենից գունաթափուած, վեր թռաւ Աղէքսանդրը և աչքերը արիւնով լցուած, ձեռք ձգեց իւր սուրը։ Բորբոքուած ախտի րոպէական ազդեցութեան էր բարեկամի հին հաւատարմութիւնը և սէրը, մոռացուած էր նորա քաջագործութիւնը, որին ինքը պարտական էր իւր կեանքը։ Կլիտոսի բարեկամները գուշակութեին մի չար բան։ Բարկացածը դուրս տարան դահլիճից։ Բայց Կլիտոսը դարձեալ եկաւ և դրան մէջ կանգնած, նորոգեց իւր աղդարարութիւնը։ Այնուհետև թնդալով թռաւ Աղէքսանդրի սուրը, նորա յատուկ ձեռնով նետուած, օդի մէջ. այնուհետև դա մխուեցաւ Կլիտոսի հաւատարիմ սրտի մէջ, այնուհետև դուրս հոսեց սպանածի արիւնը, և մարմարիոնեայ յատակի վերայ բեկուած աչքով ցած գլորուեցաւ թագաւորի փրկողը։ Աղէքսանդրը, որ իւր անձը համարուէր աստուած, դարձել էր մարդասպան։*

*Մի ցաւալից աղաղակ սասանեցնելով թնդաց մարմարիոնեայ պատերի մէտ, և ահաբեկուած յիւր փախան Մակեդոնացիք իւրեանց թագաւորի եւրեսից։ Բայց սա նստած էր այն տեղ շառագունած և քարացած, անօրէն գործը լցուցանելուց յետոյ, և Եւռիպիդը, վըկայութենդրութեան անգութ աստուածուհիքը շարժեցին նորա գլխի վերայ հատուցման բոցեղէն ջահերը։*

*«Երբէք չմոռացաւ Աղէքսանդրը այս ահաւոր գործը։ Գիշերային եռաղների մէջ երևումէր նորա հոգու առաջև սպանած բարեկամի արիւնոտ պատկերը, արթնութեան մէջ ուղեկից էր նորան իւր արիւնոտ յաղթութիւնների ճանապարհի վերայ։ Ոչ մի ժամանակ և ոչ մի տեղ չգտաւ նա հանգիստ, բայց միայն մահու մէջ։*

*«Մի՛տ բեր այս պատմութիւնը», եղբայրակից պարոն Հէլդը, «եթէ ախտի դևը կամի և Ձեզ յաղթահարել, աղնուատոհմիկ Գէորգ։ Միակ անզգաստ րոպէ կարող է Ձեր բոլոր կեանքի բաղդաւորութիւնը ոչնչացնել։ Ես անտեսանելի վկայ էի այն գործին, որ Դուք այսօր գործեցիք ընդդէմ անմեղ այգեպանին։ Աստուածային տեսութիւնը միայն պահպանեց Ձեզ ախտի մի յանցանքից։ Որչափ սակաւ տարակոյս ունեցաք Դուք դէպ ի ցած գլորելու այն տղամարդը մի ցցով, նոյնպէս սակաւ դանդաղելու էիք սրով սպանել նորան, եթէ մի սուր մէտ եղած լինէր Ձեզ։ Պաղատեցէք առ Աստուած, Գէորգ, որ նա Ձեզ զօրութիւն տայ արտաքսելու Ձեր սրտից այն թշուառ բարկացկոտութիւնը, այն տարապայման գահասիրութիւնը, որ կարող չէ համբերել և ամենափոքր հակառակութեան։ Դուք կ'անբաղդանաք, եթէ չուսանիք սանձահարել Ձեր ախտերը»։*

*Գէորգը չպատասխանեց։ Կա զգուաէր, որ ոչինչ խօսքեր կարող էին սրդարացնել նորան։ Լուռութեամբ ծածկեց երեսը ձեռներով և չընդդիմացաւ իւր խղճի յանդիմանութիւններին, որ փոթորկի պէս յարձակվու-*

մէին նորա վերայ։ Պարոն Հէլդը թողեց նորան, և Գէորգը յղացաւ դարձեալ բարի խորհուրդներ, նորոգեց դարձեալ իւր բարի ուխտերը։

Ուրիշ օր պղաբեր գտանուեցան իւր ուսուցչի խրատտուութիւնքը, իւր խղճի ապդարարութիւնքը։ Ապա հետև Գէորգը դարձեալ այն հին տղան էր և այլևս չմտաբերեց Կլիտոսի և Աղէքսանդրի պատմութիւնը։ Իսկ Հէլդի աչքից, որչափ կարող էր, հեռանում էր նա։ Բայց Հէլդը արդարև խելամուտ եղաւ, որ ծանր ձախորդութիւնք միայն կարող էին Գէորգի սրտից արմատախիլ առնել չար մոլախոտը, և հառաչեց։

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ԳՕԴՈՒԱԾ։

### ՏՐՏՈՒՄ ՎՃԻՌԸ։

Ա՛օտ մի տարի ժամանակ անցած կը լինէր վերևում պատմած անցքից յետոյ, և ահա միանգամ ձաշից յետոյ կոմն Վալտերը և Գէորգը նստած էին միմեանց մօտ ծանր խօսակցութեան մէջ։

«Ընդէն ժամանակ է, իմ որդի», ասաց կոմսը, որ դու հոգաբարձու լինիս գտանել մի կանոնաւոր պարապմունք, որ պատշաճաւոր լինէր քո իմացականութեանը և քանքարներին։ Տակաւին չես մտածել դու այն խընդրի վերայ, թէ ինչ ասպարէզ կամիր դու ընտրել, որ պատիւ ու մեծարանք ճարիր քեզ աշխարհի առաջև»։

«Ա՛յ, իմ քեռի», եղաւ շուտափոյթ և վճռական պատասխանը։ «Այլև, երբէք կամք չունիմ ես թողուլ Ձեզ, քանի որ Դուք կենդանի էք»։

«Այց ինչպէս կը լինի, երբ որ ես մեռած էի, իմ սիրելի մանուկ»։

«Ա՛յդ ինչ խօսք է, քեռի։ Դուք տակաւին երկար կ'ապրիք։ Դուք զօրութեան և առողջութեան օրինակ էք։ Խնդրեմ Ձեզանից, որ այսուհետև չխօսէք դորա մասին»։

«Ընու ամենայնիւ կարևոր է այդ, իմ որդի։ Մի անպատշաճ բան էր, որ դու քո գեղեցիկ մանկութիւնը վատնէիր անգործ հեդոնութեան մէջ։ Ընտրիր, ինչ ասպարէզ կամիր դու մտանել։ Եթէ գրաւումք քո սիրտը զինուորական գործի շքեղ փայլինը, ապա ես հոգաբարձու կը լինիմ, որ դու շուտով և առանց դժուարութեան յառաջ գնայիր այդ ասպարէզի մէջ։ Եթէ սիրելի են քեզ պօլիտիկայի (քաղաքագիտութեան) ծածուկ և մութ շաւիղները — ես քեզ կը բանամ այն դուռները, որով դու կարող էիր սողալով ոտք կոխել դոցա վերայ։ Եթէ հրապուրիչ է քեզ կայսերական պալատների փառահեղութիւնը, եթէ ցանկանում ծանօթանալ իշխանական պալատների կեցութեանը և նորա շողշողուն շրջանակների մէջ շարժել քո անձը, ապա, ինչպէս յայտնի է քեզ, արժէր ինձ մի խօսք միայն, որ ճարէի քեզ պաշտօն թագաւորի նախանձելի մտերակայքում։ Վճռիր խնդիրը և արա՛ քո ընտրութիւնը»։

«Ընտրութիւնը արած է արդէն, սիրելի քեռի», պատասխանեց Գէորգը կիսով չափ անհամբերութեամբ։ «Ես ցանկութիւն չունիմ իմ ազատութիւնս փոխանակել զինուորական ստրկութեան, քաղաքական նուր

ու բարակ խորամանկութիւններէ, կամ թէ պալատներու երեսպաշտութեան հետ։ Ազատ ու ինքնիշխան կամիմ ես լինել։ Ոչ ոքից կամիմ ես հրամաններ ընդունել, բայց միայն Ձեզանից, քեռի։ Ինձ բաղդը է տպրել ձեր մօտակայքում։ Ես Ձեզ թողնելու չեմ»։

Վուերորդու կամակորութիւնը տրտմեցրեց Կոմսին։ «Ցառաջատես եղիր, Գէորգ», ասաց նա, «որ դու չապաշաւես մի օր այն բանը, որ այժմ թեթևամտութեամբ խօսել ես։ Եթէ մեռանէի ես, ոչ ոք ունենալու չէիր, որ սիրէր և խնամէր քեզ, ինչպէս ես. այնուհետև դու....»

«Նայց, քեռի, ես արդէն ասել եմ Ձեզ, որ Դուք այնպէս շուտով մեռանելու չէիք։ Ժամանակ տուեցէք ինձ. գուցէ էգուց կամ թէ մի կամ երկու շաբաթի մէջ, Ձեզ հաճոյանալու համար, կը պարտէի ընտրել որ և իցէ պաշտօնի վրայ։ Այժմ թո՛ղ մի փոքր դուրս գնանք ձիով դէպ ի արձակ դաշտը։ Գլուխս անապատ է դարձած այն բոլոր բաներից, որ Դուք զրուցել էք իմ հետ։ Ի՛նչ հարկաւոր էր հոգածել, քանի որ ժամանակ է ուրախ լինել։ Եկէ՛ք, քեռի, եկէ՛ք»։

Գէորգի կամակորութեան վերայ հոգոց հանելով, մեր կացաւ Կոմս Վալտերը և ծանր քայլով դիմեց դէպ ի ախուռը, որ հրամայէ ձիանք դուրս բերել, դէպ ի դուրս գնալու։

Ընդան շաբաթներ, և Գէորգը անհոգ եղաւ որոշել իւր համար մի ապագայ ասպարէզ կեանքի, և Կոմսը այնպէս շատ հաւաստի էր իւր յորդորանքի անօգտութեան մասին, որ չմիշեցրեց իւր քեռերորդուն նորա արած խոստումը։ Գուցէ նա լինելու չէր այնքան ներողամիտ, եթէ Գէորգի անուշնուշ արած կտակի թուղթը չլինէր զգուշութեամբ պահած ու ամփոփած իւր գրասեղանի մէջ։ Մի՞ թէ տեղիք ունէր նա խրթնալու թէ Գէորգը մի օր կարօտ կը լինէր պաշտօն որոնելու իւր համար։

Այնպէս մտածումներ Գէորգը։ Քանի որ իւր քեռին կենդանի էր, ոչինչ կարող չէր պակասել նորան։ Եւ քեռին այնպէս առոյգ, այնպէս ծաղկափթիթ առողջութեան մէջ էր։ Ի՛նչ երկիւղի տեղիք ունէր Գէորգը։ Ի՛նչ խորհուրդ ունէր նորա համար մի զինուորական պատուազգեստ, մի քաղաքական պատիւ, մի պալատական սենեկապետի բանալիք, որ նա գուցէ ձեռք կը բերէր մի օր։ Ոչ, ոչ։ Քեռու ամրոցի մէջ կարող էր նա հրամայել, բայց դուրսում, աշխարհի հրապարակի մէջ պիտի ուսանէր հնազանդութիւն։ Հնազանդութիւն. փա՜ռ, այդ ի՛նչ տգեղ խօսք է։ Դա այնպէս անտանելի հնչումէր Գէորգի ականջում։ Դա ամենևին անհանելի էր նորան։

Ցիտու ամենայնիւ փոքր ինչ յետոյ Գէորգը շատ բան տուած կը լինէր, եթէ նա կանուխ արդէն իւր անձը տալորեցուցած լինէր հնազանդութեան։

Ժամանակը աշուն էր, երբ լուսացաւ մի հրաշալեայծաւ օր։ Իւր ծիրանի ամպերէն առագաստից դուրս բարձրացաւ թագուհի արեգակը և մեծավայելչութեամբ շրջումէր երկնակամարի վերայ։ Ուր և ընկնումէին նորա ճառագայթները, այն տեղ շողշողումէր երկիրը և երեւումէր, որպէս թէ նա, որչափ հնի կարող էր տարածուիլ տեսութիւնը, ցանած էր փայլա-

տակող անդամանդներով։ Ամեն մի խոտի հասկի վերայ, ամեն մի աշնանային փոքրիկ ծաղկի վերայ կախուած էր մի շիթ ցօղ, որ ըմբռնելով արեւի ճառագայթները, բացարձակումեր նորանց հաղարապատիկ գեղեցկութեամբ։ Անտառները փայլըմէին Թուխս, Ծիրանի և ոսկի գոյներով. Նոքա հագել էին իւրեանց ամենագեղեցիկ զգեստը, Լայտաճամուկ, պանծալի աշնանային զգեստը։ Բայց ոչինչ երգեցողութիւն հնչըմ չէր այլևս նոցա ատրածութիւնների մէջ։ Հազիւ միայն լսումէին խայտարղետ կաչաղակի միատեսակ, անբարեհնչիւն աղաղակը, կամ թէ սուր ձայնը փայտատ Թռչունի կամ թէ աղօտ թակողութիւնը ծառավաղիկի, որ ծառերի կեղևի տակից դուրս էր քարշում իւր կերակուրը։ Բոլոր փառաւոր երգեցող Թռչունները, ամենայն տեսակ սոխակներ և տորդիկներ, սրնգաձայն պիրօլը, Լայտաճամուկ կարմրագլխիկ դեղձանիկները, ամենքը, ամենքը կամ Թաղել էին արդէն անտառների վայրերը, կամ թէ մնադիր էին Թողուլ, որ ազատուէին ձմեռան մերձակայ ցրտից։ Անբարբառ, կուրծքը առաւօտեան պայծառ լուսի մէջ լողացնելով, աչքին հազիւ նկատելի, ուղևորվումեր մի բարեկարգ խումբ վայրենի կարապների դէպ ի ափերի ջերմ հարաւը։ Դոցա քամակից շարժվումեր մի բազմութիւն ծիծեռնակների։ Ապա մի տարմ շատախօս ագռաւների, իւրեանց անթիւ շատութեամբ նեսմացնելով երկինքը։ Յետոյ կռունկներ, տպա սագեր և բադեր, ամենքը շտապելով դէպ ի մեղմաշունչ հարաւային կողմերը։

Կոմնի ամրոցում, այս առաւօտուն, շատ կանուխ արդէն նկատելի էր մի զուարթ կեանք։ Ծանուցուած էր մի մեծ որսագնացութիւն և մօտից ու հեռուից կոմնի բարեկամները եկած էին իւրեանց քաջ դիպեցուցիչ հրացաններով, որ Թափառին դաշտերի և անտառների մէջ, որսան նապաստակներ և կաքաւներ, ցած գլորուն եղջերուներ և Թեթևոտն այծեամներ։ Ամբողջ գաւիթում կանգնած էին արդէն ազնիւ ձիանք սանձած ու Թամբած, աշխուժութեամբ զարկումէին ոտքը տափին և խրխնջումէին առաւօտեան դալար օդի մէջ։ Զուարթութեամբ հաչելով, ոստոստումէին այս տեղ ու այն տեղ Թռուցիկ, ամրակազմ, երկարականջ շուներ, արձակ շրջանակներով պտոյտ գալով գաւիթի մէջ։

Ամրոցի ներսում, մի փառաւոր դահլիճի մէջ որսորդները ժողովուած էին և մի զօրաւոր հացկերութեամբ ու Թունդ գինիքով ամրապնդումէին իւրանց անձը դէպ ի գալոց աշխատութիւնը։ Որսագնացութեան պատմութիւնք, ուղղորդ թէ սուտ, արուեցան այս տեղ և արժանապէս գնահատուեցան։ Զուարճախօսութիւնք և սրամիտ զրոյցք Թռան այս կողմից այն կողմ, ազնիւ որսորդների ախորժակը սաստկացնելով մինչև դէպ ի մեծամտութիւն. հնչեցին ծիծաղներ, զարկուեցան միմեանց բաժակներ, կենացներ խմուեցան և ոչ մի քրթմնջոց կամ մռայլ երես չպղտորեց ուրախ որսորդակիցների զուարթութիւնը և ստահակութիւնը։ Բայց ոչ միևը դոցանից չերևեցաւ այնպէս զուարթ և կենդանի, որպէս ազնուատոհմիկ Գէորդը։ Անհանգիստ վազվզումեր նա հիւրերի մէջ. երբեմն այս տեղ որսորդի կենացը խմելով, երբեմն այն տեղ մի սրամիտ խօսք ասելով, դարձեալ

ծիծաղելով, քչփչալով և երգելով սրտի խնդութենից և մեծամտութենից, առաւելապէս ձեռնտու էր ոտքի վերայ պահպանելու և նոր ի նորոյ զուարթացնելու որսորդների ուրախամտութիւնը։ Ուր նորա պայծառ ձայնը լսվումէր, ուր նորա աչքերը ճառագայթվումէին և նորա թշերը վառվումէին, այն տեղ ևս աւելի բարձրաձայն էր ուրախութիւնը, աւելի աղմկալից էր ցնծութիւնը, այն տեղ ևս աւելի զիլ ձայնով զարկվումէին միմեանց դինու բաժակները։

Վերջապէս ժամանակ էր դէպ ի ճանապարհ դուրս գնալու. որսորդքը ձգեցին ուսերի վերայ իւրեանց որսորդական պարկերը, ձեռք առան իւրեանց երկփողվակեայ լցրած հրացանները և աղմուկ առնելով, ամրոցի յայն սանդուղներից ցած իջան դէպ ի ամրոցի գաւիթը։ Աղնուատոհմիկ գէորգը առաջինն էր, որ հեծաւ ձին և որսի ուրախութեան մէջ մեծամտուած յառաջ վազեց փողը ինչ ճանապարհ։

Լսյս միջոցիս կոմս Վալտերը կանգնած էր սանդուղների վերջին աստիճանի վերայ և քննողական աչքով նկատումէր իւր հրացանը։ Նորա թիկնապահ որսորդը կանգած էր նորա մօտ։

«Լսիր», ասաց նա դորան, «բեր ինձ մի այլ հրացան։ Այս շատ ծանր է ինձ այսօր։ Դու կարող ես առնուլ երկփողվակեայ հրացանը, դամասկոսեան շէնքով և արծաթի զարդարանքով փականքի և կոթի վերայ։ Դա թեթև է և չէր ինձ ծանրաբեռնելու։ Գնա, շուտ արա»։

«Ձկամիք մի այլ հրացան, պարոն կոմս», մեծարողապէս պատասխանեց թիկնապահ որսորդը։ «Ինձ երևումէ, որպէս թէ հրացանի փողվակներից մինը վերջին որսումն ջնասել է. և ես նորան յետ եմ դրել, որ քննել տամ»։

«Լսյդ ինչ խօսք է», ձայն տուեց կոմսը։ «Այդ հրացանը լաւ է, ես միւս հրացան չկամիմ առնուլ։ Շուտ, շուտ արա և բեր ինձ նորան»։

Թիկնապահ որսորդը միւս ևս չհամարձակեցաւ հակառակել կոմսին և գնաց բերեց հրացանը։ Կոմսը քննեց հրացանի փականքը, նկատեց նորա փողվակները — բոլորը կարգի էր։ Միայն մի փոքրիկ, հազիւ նկատելի ճեղք տեսանվումէր ձախակողմեան փողվակի մի տեղում, և թիկնապահ որսորդը զարձուց տիրոջ ուշադրութիւնը դորա վերայ։ Կոմսը ծիծաղեց և շատ ուրախութեամբ և միամտութեամբ։

«Տխմարութիւն, տխմարութիւն», ասաց նա։ «Ես արդէն աւելի վատ հրացաններով գործ եմ կատարել, առանց ջնասելու ինձ։ Այդ հրացանը լաւ է»։

Այս ձգեց ղէնքը ուսի վերայ, վեր թռաւ իւր կատաղի պարսկական որձ ձիու վերայ և արշաւակի գնաց իւր հիւրերի քամակից, որ արդէն փոքր ինչ ճանապարհ յառաջ էին ընկել։

Հասան որսի տեղին, հրացանները ճայթեցին։ Շուները անդադար դուրս քշեցին իւրեանց ծակամուտքից վախկոտութեամբ կծկուած որսերը, հալածեցին դողդոջուն նապաստակները իւրեանց որջից և ստիպեցին կաքաւները դուրս գալ իւրեանց թագուն պատսպարաններից։ Թնդումէր ու

ճայթումէր դէպ ի աջ ու ձախ. ուր մի հրացան արձակուեցաւ, այն տեղ ևս ցած էր գլորվում մի որս, և անտառի սահմանը շուտով բացուեցաւ։ Որսի արդիւնքը հաւաքեցին և այնուհետև մտեցան անտառին, որ սպանեն եղներ և եղջերուներ։ Ա՛յժմ մեծագոյն մասը որսորդների փոխանակեցին իւրեանց աւելի թեթև երկփողանոց հրացանները երկայն գնդակարձակ հրացանների հետ։ Բայց Կոմս Վալտերը պահեց իւր հրացանը։ Ո՞ւ ապաքէն դա մի փոքր յառաջ ցոյց էր տուել իւր պատուականութիւնը։ Միայն թէ հրամայեց նա լցուցանել դորան փոքրիկ գնդակներով, փոխանակ մանրորդների։

Յառաջ գնացին այնպէս սաստիկ, որչափ կարող էին ձիանքը, արշաւելով անտառի մէջ, Գէորգը ամեններից յառաջ ընկած, որպէս սովորաբար։ Նա ամենևին սանձակոտոր էր դարձել այսօր։

Ձիանքը յանձնուեցան ծառաների հոգաբարձութեանը, որսորդները ձգուեցան մի երկայն գծով, հրացանները պահեցին պատրաստի և ոտքով խորամուխ եղան անտառի թանձրութեան մէջ։ Երբեմն ճայթումէր այս տեղ մի հրաբուխ փողվակ, երբեմն այն տեղ։ Երբեմն դէպ ի աջ, երբեմն դէպ ի ձախ որոտումէին և թնդումէին հրացանները։ Տակաւին Կոմս Վալտերը արձակել չէր իւր հրացանը և արդէն կորուսանումէր համբերութիւնը։ Բայց այժմ — զգուշութեամբ այս կողմ, այն կողմ նայելով, բարակ վիզը թեքած, նուրբ փառաւոր եղջերաղարդ գլուխը յետ ձգած, գլորուն աչքերով և սրած ականջներով, ծանրաքայլ յառաջ վազեց մի եղջերուղղակի դէպ ի Կոմսը։ Բարակ ոտերը շատ սիրուն կաքաւումէին կանաչ խոտի վերայ։ Կոմսը բարձրացնումէ հրացանը և ուղղեցնումէ նորան։ Մի քանի քայլ ևս, և ահա կարելի է զարկել եղջերուն հրացանով։ Ա՛յժմ պադարումէ նա, ոտք է հաստատում, յառաջ է թեքում գլուխը։ Նոյն րոպէին Կոմսը արձակումէ հրացանի ոտը և մի զօրաւոր ոստիւնով դէպ ի մի կողմ է շեղվում եղջերուն, որ վախչէ։ Դարձեալ ճայթումէ հրացանի ոտը, հրացանի ձախակողմեան փողվակից ուղարկելու գնտակը փախստական անասունի քամակից։ Մի ճայթիւն, մի աղաղակ, վառօդի գոլորշին — և ահա ամենևին լռութիւն։ Եղջերուն անվնաս փախչումէ և սրընթաց վազողութեամբ անհետանումէ անտառի թանձրութեան միջով։ Բայց Կոմսը արիւնաշաղախ, անդամախեղ, դժուարութեամբ շնչելով, տարածուած է գետնի վերայ և պատերազմումէ մահու հետ։ Հրացանի փողվակը փշրուել էր հաղար կտոր, և մի լայն վէրքից գլխի վերայ անընդդիմանալի դուրս էր հոսում Կոմսի կեանքը։

Վհկնապահ որսորդը, որ փոքր ինչ հեռաւորութեամբ հետևումէր իւր տիրոջ յետքից, արձակեց մի աղաղակ, երբ որ տեսաւ նորան, և վազեց նորա վերայ։ Նորա դէպ ի օգնութիւն կանչող ձայնը սաստկութեամբ հնչեց անտառի տարածութիւնների մէջ, և որսորդները գուշակելով անբաղդութիւնը, ամենայն կողմից շտապեցին այն տեղ։ Դունաթափ և քարացած շրջապատեցին վիրաւորուած Կոմսը և չգիտէին, թէ ինչ հնար ու ճար գործ դնեն. այնքան յուզմունքաւորուած էին ահից։ Ողբալով մօտ վազեց

Գէորգը, որ արդէն լսել էր անբաղդութեան լուրը։ Արտասուելով ծանր խոնարհեցրեց նա ծանրութեամբ շնչողի մօտ և հեղեղեց նորան իր արտասուքով։

Տ՛ւեց մի փոքր միջոց, մինչև կոմսի ուշը դարձեալ վերան եկաւ։ Նա բացեց աչքը և անշարժ նայումեր իւր չորս կողմը, իբրև մի վայրենացած։ Գէորգը տակաւին ծնկի վերայ չոքած էր նորա մօտ և բռնած ունէր նորա ձեռը։

«Որդե՛կ իմ, Գէորգ», ասաց կոմսը թոյլ ձայնով և ժողովելով զօրութիւնքը. «մահը անակնկալ հասել է ինձ։ Այլևս մի քանի րոպէ, և ես լինելու չեմ։ Խելացի՛ եղիր, սանձահարիր քո ախտերը — և բաղդաւոր եղիր։ — Գրասեղանը — դու նորա մէջ — կը գտանես մի բան—Աստուած օրհնէ քեզ — օրհնէ քեզ, իմ որդի»։

Մի հառաչանք, մի վերջին կծկողական շարժողութիւն, մի աշխատութիւն շունչ առնելու և ահա կոմսը չկար այլևս։

Յաւը կամեր արդէն անբաղդ քուերորդու սիրտը պատառել, նա չհեռացաւ իւր քեռու կողքից, ամուր բռնած ունէր իւր ձեռնումն նորա սառցապաղ ձեռը և անփոյթ էր այն բոլոր բաների մասին, որ լինումէին նորա չորս կողմում։

Ի՜նչպէս շուտով փոխարկուած էր նորա տարապայման ուրախութիւնը դէպ ի ամենախորին տրտմութիւն։

Ա՜ղջապէս ծառի ճիւղերից հիւսեցին մի նաշ, դրեցին նորա վերայ կոմսի անշնչացած մարմինը և տրտմութեամբ վերադարձան դէպ ի ամրոցը. որսորդակից բարեկամները, որոց ուրախութիւնը մի քանի ժամ յառաջ կենդանացուցել էր վառաւոր դահլիճները, ամենևքեան թողեցին և գնացին, հրաժարական ողջոյն անգամ չտուած Գէորգին, և սա վերջապէս մնաց միայն իւր տրտմութեան և թշուառութեան մէջ։

Չգիտենք մի քօղ Գէորգի անմխիթար, յուսահատ, ուտող մաշող ցաւի և տրտմութեան յայտնութիւնների վերայ։ Նա կորցրել էր իւր բարերարը, այն մի հատիկ սիրտը, որ հայրական սիրով և հոգաբարձութեամբ սիրել էր նորան։

Կոմսը թաղուեցաւ իւր հայրենական գերեզմանատունում, և այնուհետև անապատացան սենեակները, որ մի ժամանակ կենդանացած էին նորա սրտի ծիծաղով, նորա սիրալից խօսակցութեամբ, նորա զուարճամիտ զըպրնեռով։ Գէորգը, սկսեալ պատահած ձախորդութենից, ոտք չէր կոխել այն տեղ, և առհասարակ փոյթ չէր նորան ոչինչ բան, որ լինումէր ամրոցում։ Լուռ և մեայլ նստած էր նա իւր սենեկում և որոճումէր մտքի մէջ իւր ցաւը։ Նա չկամէր ոչ ոք տեսանել իւր շրջակայքում, բայց միայն փոքրիկ Ֆերթան, որ նորա հետ միասին արտասուումէր նորա հայրախնամ քեռու մահը։ Նա ընկատեց սպասաւորների փոխարկուած ընթացքը. նա չըտեսաւ նոցա արհամարհական հայեացքը, լսեց նոցա այպանողական և յանդուգն խօսքերը, որ բարձրանումէին նորա վերայ։ Նորան փոյթ չէր, որ սուրհանդակ ուղարկուեցաւ դէպ ի կոմս Հուգօն, եղբայրը հանգուցեալ

վալտերի, նորան տեղեկութիւն տալու պատահած անբաղդութեան մասին և խնդրելու հրամաններ, թէ ինչպէս պէտք էր նորան վարուիլ։

Ամեն մարդ համարումէր կոմս Հուգօն օրինաւոր տէր և իշխան կոմսութեանը, և ոչ ոք գուշակում էէր, թէ կոմս վալտերը կտակ էր արել և ժառանգ էր կացուցել իւր քուերորդին։ Ոչ ոք կարող չէր այդ մասին տեղեկութիւն տալ ծառաներին։ Դատարանի ալևոր պաշտօնակալը, որ սորոտարրել էր կտակը, մի փոքր յառաջ վախճանուած էր, և միւս վկան, նոտարիոսը փոխադրուած էր դէպ ի մի հեռաւոր գաւառ տէրութեան։

Այս պատճառով և ծառայքը կարծումէին, թէ աղնուատոհմիկ Գէորգը իւր կարողութեան ասպարէզը աւարտել է արդէն, և երկիւղ չունէին անպատուութեամբ հանդիպել նորան։ Մեզ յայտնի է արդէն, որ Գէորգը կոմսի կենդանութեան միջոցին երկիւղէ, բայց ոչ սիրոյ նիւթ էր եղած։ Այժմ, երբ որ երկիւղը վերջացած էր, նորա փոխանակ երևեցաւ արհամարհանք։

Գէորգը անտես արեց այդ, չնկատեց այդ, մինչև որ ցած գնաց դէպ ի անկատունքը, որ այն տեղ մի քանի պտուղներ քաղէ փոքրիկ բերթայի համար։ Նա կտրեց մի քանի ճուռթ խաղող, մի քանի նարինջ, դրեց նորանց մի սապատի մէջ, որ այդ խորհրդով առել էր իւր հետ, այլև կամէր իւր քաղած մրգերի վերայ յաւելացնել մի հիւթալից անանաս, և ահա մի մարդ պինդ բռնեց նորա ձեռը և խոշոր ձայնով հառայ տուեց նորա վերայ. այդ մարդը այգեպանն էր։

«Ինչպէս կարող էք համարձակուիլ, երիտասարդ, կողոպտել այս տեղ ծառերը և կճոյճները։ Իսկոյն դուրս գնացէք, եթէ չկամիք որ Ձեզ դլխիվայր դուրս ձգեմ այս տեղից»։

Գէորգը վեր նայեց և մի վառուն կարմրութիւն բարկութեան վազեց նորա դունաթաւիւ, ցաւից ու գիշերային հսկողութենից տգեղացած երեսի վերայ։

«Ներեցէք ես դու, ով մարդ», պատասխանեց նա։ Մոռանո՞ւմես դու, թէ ով եմ ես և դու ով ես։ Հեռացի՛ր, եթէ չկամիս դարձեալ միանգամ ղգալ իմ բազկի ծանրութիւնը»։

Փոխանակ հեռանալու, բարձրաձայն ծիծաղեց այգեպանը և աշխատեց խլել Գէորգի ձեռից նորա քաղած մրգեղէնքը։

«Մի՛ համարձակուէք, երիտասարդ, շօշափել ինձ»՝ ճիկ հանեց նա արհամարհաբար։ Ձեր փառքի ժամանակը անցել է ահա, և անպատիժ մնալու չէք, ձեր ցանկութեան կամքին ազատ ընթացք տալով։ Ով ձեզ մինչև այժմ պաշտպանումէր, մեռած է, ուրեմն և ձեր կարողութիւնը ոչինչ է։ Տո՛ւր այս տեղ այդ սապատը»։

Գէորգը դողումէր կատաղութենից։ Մանկութեան և բորբոքուած ախտի բոլոր ոյժը գործ դնելով յետ ածեց այգեպանը, նետեց նորան դէպ ի ծաղիկների պատուանդանքը, այնպէս որ այգեպանը բոլոր բանները իւր հետ քարշելով, դէպ ի գետին գլորուեցաւ, իսկ երիտասարդը հեռացաւ հպարտութեամբ, առանց իւր վշտացուցիչը որ և իցէ հայեացքի արժանացնելու։ Բայց երբ որ վերադարձած էր իւր սենեակը և մրգերը մատուցել էր

փոքրիկ Բերթային, ձգեց իւր անձը սօֆայի վերայ, սեղմեց երեսը լարձի վերայ և լաց եղաւ դառնապէս։ Այժմ, առաջին անգամը մտածեց նա իւր ապագայն, և դա մեայլ ու սպառնալից արձանացաւ նորա հոգւոյ աչքի առաջև։ Նա ի՛նչ պիտի լինէր այժմ, երբ որ իւր բարի քեռին, իւր բարեկամը և պաշտպանը դրած էր գերեզմանի մէջ։ Ի՛նչ պիտի ձեռնարկէր նա առանց գոյքի, առանց հիմնաւոր բանագիտութեան, առանց զօրութեան և աջողակութեան դէպ ի աշխատասիրութիւն։ Նա սկսաւ հառաչել։

«Ո՞նչ ցաւ ունիս, Գէորգ», հարցրեց փոքրիկ Բերթան, որ լի կարեկցութեամբ իւր փոքրիկ բազուկները փաթաթեց նորա վզին։ «Խնդրումեմ, ասել ինձ, ինչո՞ւ ես դու լաց լինում։ Կամիս դու մի քանի նարինջ, կամ թէ խաղող։ Ո՞չ. ուրեմն ասա ինձ, ի՞նչ է ցաւդ, սիրելի Գէորգ. ապա թէ ոչ, ես շատ տրտում կը լինիմ»։

Գէորգը երեսից սրբեց արտասուքը, բայց քերեց թուխ մազերը, որ ծածկումէր ճակատը և հառաչեց։ «Ո՜հ, դու խղճալի երեխայ», ասաց նա. «քո վիճակը լինելու չէ աւելի լաւ, քան թէ իմն։ Մի օտար տէր կը դայ այս տեղ և կ՝արտաքսէ մեզ տնից, դուրս կը ձգէ դէպ ի փողոցը և կը մատնէ մեզ թշուառութեան։ Կամ թէ նա կոշտ կը վարուի մեր հետ, եթէ թոյլ տար մեզ մնալու ամրոցի մէջ, և չէ լինելու այնպէս քաղցը և գթած, ինչպէս իմ քեռի Կոմն Վալտերը»։

«Ինայց մեզ պիտոյ չէ իսկ հեռանալ այս տեղից», ջերմութեամբ ձայն տուեց փոքրիկ Բերթան։ «Ոչ ապաքէն քեզ է պատկանում այն ամենայն, ինչ որ պատկանումէր քո քեռուն։ Եւ ի՛նչ հարկաւոր էր քեզ լաց լինել այդ մասին, Գէորգ, խնդրե՛մ, ուրախ կաց։ Ո՞ր այլ մարդը, բացի ի քեզանից պիտի հրամայէ այս տեղ»։

«Կոմն Հուգօն կը գայ», ասաց Գէորգը։ «Նա է այժմ տէրը և մեք նորա ողորմութենից կախ կը լինինք։ Այո՛, եթէ իմ քեռիս այնպէս յանկարծ վախճանուած չլինէր, որ կարողացած լինէր կտակ առնել, այնուհետև յիրաւի հոգաբարձութիւն արած կը լինէր մեր երկուսի մասին։ Բայց այդպէս— —»

«Այդ ի՞նչ խօսք է», ձայն տուեց Բերթան ջերմութեամբ. ի հարկէ քո քեռին կտակ է արել։ Արդարև ես ներկայ եմ եղած, երբ որ դատարանի պաշտօնակալը Կոմսի մօտ էր և իւր մեծ կնիքը դրոշմեց կտակի վերայ և իւր անունը ստորագրեց նորա տակ։ Վաղուց չէ, որ այս բանս եղած է»։

Գէորգը սրեց ականջները։ «Եւ ո՞ր լսած ու տեսած ես դու, ով երեխայ, ինչ որ ահա պատմում ես», հարցրեց նա։

«Իոլորը քո քեռու սենեկի մէջ», պատասխանեց Բերթան, և այնուհետև մանրամասնաբար պատմեց, ինչ որ վախճանուած Կոմսը դատարանի մարդերի հետ տնօրինել էր։

Անկեպտ երեխայի ազդարարութիւնը խառնաչփոթ և երբեմն մութ էր, բայց դորանից դուրս էր երևում այնքան, որ Գէորգը կարող չէր երկմիտ լինել թէ կայ մի կտակ։ Այլև նա պայծառապէս մտաբերեց այժմ մեռած նողի խօսքերը, թէ գրասեղանի մէջ նորա համար մի բան ամփոփած է։

Նորա աչքերը բոցափայլեցան և նորա թշերը վառուեցան։ «Արի՛, Բերթա», ասաց նա։ «Թո՛ղ իսկոյն ստուգենք, թէ ինչ բան ճշմարիտ և ինչ բան սուտ էր քո ասածից։ Ես կարող չեմ խաղաղութիւն գտա-նել, մինչև չորոնեմ գրասեղանի մէջ և չգտանեմ այն բանը որ պիտի ունե-նայի ձեռնուն, այս տեղ իրրև տէր հրամայելու և կառավարելու համար»։

Ներկուբն ևս գնացին կոմսի սենեակը, փակեցին դուռը, որ ոչ ոք չըլսէ նորանց, գրասեղանի փականքը գտան իր տեղում կախած, և գէորգը բա-ցեց սեղանի արկղները և պահարանները։ Այս բանս արեց նա հևալով և դողդոջուն ձեռքով։ Ամեն տեսակ թուղթեր, նամակներ, վճարած և վճ-կայուած հաշիւներ, հատուկոտոր լրագրերի համարներ, մի քանի պա-տուանշանք խայտաճամուկ ժապաւէնների վերայ, զանազան գէնք, պաշնակ-ներ, թափանչէք և միւս այդպիսի բաներ շատ ընկան որսողների ձեռքը և անտես արուեցան։ Բայց այն, ինչ որ խնդրելով խնդրում էր, չգտաւ։ Կրկին և դարձեալ վեր ի վայր արեց նա ամենայն բան, քննեց մին մին ամեն թերթ, թափ տուեց ամեն թուղթ, բայց չգտաւ ոչինչ տակաւորանը որ պիտի նորան շինած լինէր փառաւոր կոմսուհիան կալուածատէր։ Վերջապէս չքացան նորա յոյսերը։

«Դու պիտի խարուած լինիս, մանո՛ւկ», ասաց նա Բերթային։ «Ո՛չինչ տեղ տեսանում չեմ մի կռակի հետք, թէպէտ վեր ի վայր որոնել էի բո-լոր արկղների և պահարանների մէջ։ Չկայ այդ տեղ կռակը»։

«Ընդհա՛ն ամենայնիւ ես խարուած չեմ», պատասխանեց Բերթան ջեր-մութեամբ։ «Ահն տեղ, պատուհանի խորշում, վարագոյրների քամակում կանգնած էի ես և խաղում էի իմ պատուճաղատանների հետ։ Ոչ ոք տեսաւ-նում չէր ինձ, և ես յուսով եմ ամենայն բան, ինչ որ խոսում էին։ Ես յուսով, երբ որ կոմսը պատուիրում տանէի պաշտօնակատարներին ոչինչ բան չտակի մնային, և մանաւանդ թեզանից թղթապան պահել նորա պարտա-կոմիներ, բան որում դու վարչապետարար էիր, դու Չպարտասպար և տանձակոտոր զօրավար էիր, եթէ խնդրեիր ինձ մի ժամանակ տանէիր ժա-ռանգելու Չարտասպարին և կարգալսելին։ Ես ափսոսում չեմ, Գէորգ, ամենևին ոչ, և կռակը պիտի այն տեղ լինի»։

Ներեսայի խօսքերը այնքան բայցայտուն էին, որ Գէորգը կարող չէր երկ-միտ լինել նոցա ստուգութեան մասին, վասն որոյ զարձեալ սկսաւ նա վեր ի վայր որոնել այն խորհրդաւոր գրասեղանի մէջ, բայց զուր և անօգուտ ջանք։ Դա կարծում էր, գուցէ մի ծածուկ պահարան պիտի լինի այդ սե-ղանի մէջ, և սկսաւ թակել ու կտանել նորա վերայ։ Ի զո՛ւր։ Կռակը ան-հետացել էր։ Դա վերջապէս հրաժարուեցաւ այդ անպտուղ գործից և սիրտը կտրած վերադարձաւ դէպ ի իւր սենեակը։ Անով և ծածուկ երկիւղով իւր մէջ սպասում գալստին Կոմս Հուգոյի, որ տակաւին տեսած չէր։

Ս. Նազարեանց.

(Շարունակութիւնը յետոյ.)

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ

—

## ՕՓԵԳԼԻՆ ՆԱՒ•

(ԼԵՐՄՈՆՏՈՎԻՑ·)

(ՀԻՒՍԻՍԱՓԱՑԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՂԻՆ ՆՈՒԻՐ)

Ովկիանոսի ջրեր-ում կապուտակ,
Ասղերը հաղիւ երկինքում փայլուած,
Եւ ահա մի նաւ շրջում մենակ,
Շրջում է բոլոր թևերը պարզած։

Խարձր կայմերը երբէք թևքվում չեն,
Հանդարտ են նոցա հողմացոյց դրօշներ,
Եւ բաց խորշերից լռիկ նայում են
Զոլած երկսթից հրձիգ անօթներ։

Չէ յոխո՛ր այդ տեղ ձայն նաւ ափերի,
Ոչինչ նաւ ստուեր չեն այդ տեղ ներկայ,
Բայց ծովամարտներ, ահ ապա՛տաք գագաթնի
Եւ փոթորիկներ նորան կայ թէ չկայ։

Լոյր ովկիանում գրած է մի կղզի
Ապառած քարից, լուռ ու թողատած.
Իւր մէջ գերեզման ունի այդ կղզի,
Մի խնկերաւոր նորա մէջ թաղած։

Ծաղած է առանց պատուի գերական
Խճում, աւազում, թշնամիներից,
Եւ նորա վերայ մի ծառեր փակարան,
Որ վեր չկենայ իւր գերեզմանից։

Նորա վախճանի տարին լրացած,
Կէս գիշերի մէջ, նոյն տխուր ժամում
Կղզու բարձր ափին մի նաւ օդասլաց
Մօտեցավ կամաց, դադար է առնում։

Լսվերատօրը ապա զգաստացած,
Ցայտնվումէ յանկարծ իւր գերեզմանից,
Գդակը եռանկիւն իւր գլխին դրած,
Գորշ զինուորական զգեստը վերայից։

Կարող ձեռները խաչաձև կնքած,
Կուրծքի վրայ գլուխը թողած ի խոնարհ,
Երթում նստումէ ղեկին մօտակայ
Եւ շուտ ընկնումէ դէպ ի ճանապարհ։

Դիմումէ դէպ իւր Գրանսիա սիրելի,
Ուր թողեց իւր փառք, իւր գահ մեծութեան,
Թողեց իւր ժառանգ մի հատիկ որդի,
Իւր հին թիկնապահ գունդ կայսերական։

Աշխարհ ընտանի հազիւ թէ տեսած,
Գիշերի մթնում. դարձեալ դողումէ
Նորա սիրտ ծոցում սաստիկ դղրդուած,
Եւ աչքը վառուած, կրակներ թափումէ։

Կ'ա դէպ ի ցամաք արագ քայլերով
Դիմումէ ուղիղ և վստահութեամբ.
Կանչումէ ընկերքը լարձրագոչ ձայնով,
Իւր մարշալները, ահ'ղ որոտմամբ։

Վրաջ Գրենադերքը քնած են հողում
Ամն դաշտի մէջ ուր գոռումէ Էլբան,
Ցուրտ Ռուսաստանի ձիւների տակում,
Ջերմ աւազների մէջ եգիպտական։

Նոյ մարշալներ լսում չեն նորան,
Ոմանք կռուի մէջ ընկած ու մեռած.
Միւսերը վատթարք, տիրոջ դաւաճան,
Իւրեանց սուր, պատիւ ուրշին վաճառած։

Նոյ ոտքը տափին զարկելով սաստիկ,
Վեր, վայր շրջումէ լարկացած սրտով
Ծովափի վերայ անխօս ու լռիկ.
Դարձեալ կանչումէ ուժգին բարբառով։

Կանչումէ նա իւր սիրելի որդին,
Անհաստատ բաղդի նեցուկ և պաշտպան.

Նորան տալիս է կէս աշխարհ բաժին,
Իւր համար միայն Թողումէ Ֆրանսիան։

Այլ զուարթ յուսոյ ծաղիկ հասակում
Խամրացաւ նորա ուստր արքայական.
Երկար սպասելով դորան ծովափում,
Խիզերատօրը կանգնած է միայն։—

Կանգնած է այն տեղ, խոր հառաչումէ
Մինչև փայլելը արևաբացի.
Եւ դառն արտասուք աչքից Թափումէ
Ի վերայ ծովու սառն աւազի։

Ալպա կուրծքի վրայ գլուխը ցած Թեքած
Դիմումէ դէպ իւր նաւ կախարդական.
Այնուհետև նա, ծովափը Թողած,
Ընկնումէ ուղի դէպ իւր օԹևան։

Երեմիա Սահակեանց։

10 Յուլիսի 1864 Թ.
Մոսկուա։

---

Les decrets du ciel sont eteanges et mysterieux. Quelle a donc été l'intention de la Providence en abaissant l'homme qu'elle avait elevé et en elevant celui qu'elle avait abaissé!

Տեսչութեան խորհուրդ խոր է, անքննին,
Անկար է մարդու միտք մահկանացին
Կշռել, որոշել, Թէ մարդու որպէս
Վճռել է երկինք վիճակ յատկապէս։
Դրսից Թուումէ մարդ առաքինի,
Բազմութեան ձայնով կոչվումէ բարի.
Բայց նա օրէ ցօր խոնարհումէ ցած
Այն բարձր աԹոռից, ուր էր նա բազմած։
Այո՛ փորձանքի տուն է այս աշխարհ,
Այո՛ անուի պէս պտտում վեր ի վայր.
Բայց տեսչութիւնն է նորա կառավար,
Տեսուչն է նորա միակ հոգատար։
Արժանի՛ է նա, կոչումէ աշխարհ,
Բարի գործերի կցորդ միշտ և յար.
Ուրեմն բարուն արժան է բարին,
Ինչու՞ հեծումէ ցաւերի տակին։

Երբ մարդ տեսնում ալևիւ վշտացած,
Իւր սենեկի մէջ նա առանձնացած,
Կշռում մի մի անցեալն և ներկայ,
Չէ հասնում մտքով բաղդին խաւսելայ։
Հանճար, ձիրք ու խելք ունի ընական,
Լեզու, գրիչ ճարտար ունի բաւական,
Չէ պակաս նրանից Աստուծոյ շնորհ,
Բայց օր ըստ օրէ թաղվում նա խոր։
Ոչ մի քայլ թևքվում չէ ուղիղ շաւղից,
Չէ՛ նա հեռանում արդար վաստակից.
Աղքատ, որբ, կարօտ նորա յարկի տակ
Գտնում են հաց, ջուր, նպաստ օժանդակ։
Չէ՛ նա, ասում են, վարթամ մեծատուն,
Գանձի տէր չէ նա, և ոչ մեծանուն.
Իւր համեստ, նուաստ սեղանից օրհնած
Չէ պակսում բաժին աղքատին սուված։
Սիրտը ծերացած է շատ ցաւերից,
Հոգին խռոված դառն վշտերից,
Բայց լեզու, երան օրհնում են Աստուած,
Վերառաքելով բարի խնդրուած։
Չէ լսում ոչ ոք մի ժամ, մի վայրկեան,
Նորա բերանից ձայն տհաճութեան.
Եւ վշտացնողին նա դարձեալ անհատ
Մաղթում է բարի, սիրով անարատ։
Տաճարում կանգնած, միտք դէպ ի Աստուած,
Առաջի բեմին նա բազկատարած,
Իւր սրտի խորքից խնդրում է ներում,
Բաղդ, յաջողութիւն, նախ իւր թշնամուն։
Դարձեալ ամբոխին նա ճնում անյայտ,
Դարձեալ նորա սիրտ է սիրով առատ.
Դարձեալ յուսալով յոյս վերհանձնական,
Մնում Աստուծոյ անօթ ընտրութեան,
Վճիռ երկնային անհաս, անքննին,
Այս է ստուգապէս մարդուն հողածին—
Անսալ, խոնարհիլ Աստուծոյ օրէնքին,
Միշտ աղօթելով «Կամք քո եղիցին»։

Եղեմէա Սահակեանց.

20 յուլիսի 1864.
Մոսկուա.

## ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ.

I.

Ի՛նչ անուշութեամբ սահումն ժամեր
Գեղեցկատեսիլ, խնկահոտ գարնան.
Որքան ոգելից վառվումն սրտեր,
Անձնատուր եղած քաղցր անդորրութեան.
Եւ բնութիւն ոսկի ժպիտով,
Զգեստաւորուած վարդագեղ քօղով,
Հանդիպումէ օր։ Նորեկ առաւօտ։
Ցոլան շաղ գոհար. ճօճումէ արօտ.
Եւ ծածանուելով կայտառ շատրուան,
Ցայտումէ շիթեր իւր ադամանդեան.
Եւ նորա տրտունջ այնքան սիրելի
Գրաւումէ աչերդ և սիրտ և հոգի։

II.

Երկինք կապուտակ։ Առոյգ, զուարթ
Հնչումէ ղեփիւռ։ Գառներ և որթեր
Խաղումեն դաշտում։ Թնդումէ անտառ։
Երգումէ սոխակ։ Դողումեն թփեր.
Ամեն մի թռչուն, ամեն մի էակ
Վերածնումէ այս շնորհաբեր
Աւազանի մէջ, և ձոր ընդարձակ
Եւ հովիտ կանաչ և վառ բլուրներ։
Թէև խռոված լինիս, ո՛վ օտար,
Հակառակ կամքիդ, այդ կանաչավառ
Տեսարանները քեզ կը հրապուրեն,
Որ քաղցր ստուեր վերադ տարածեն։

III.

Ձորս կողմըդ գարհն, կանաչ կատարով
Հողաբլուրներ յառաջ են գալի.
Եւ խաղաղ, անոյշ, հանգուցիչ քնով
Մոռանում ես դու վիշտը աշխարհի:
Վարսագեղ տնկած ծառերի շարքեր
Մեղմիկ շարժվում են: Ուրախ և զուարթ
Վազում առու ակ: — Սիրելի պատկեր.
Ճղած կոկոնից դուրս նայում վարդ.
Կարմրում վարդ, վառ արշալուսի
Ձքնաղ դուստրը. բայց համաձայն չեմ,
Որ դա սքօղէր ամօթխած կուսի
Գեղեցկութիւնը, որին սիրել եմ:—

IV.

Սիրոյ համբոյրներ նորա շրթունքին
Ծաղկում են գարնան հոգևից կեանքով,
Կարծես սաստում են երիտասարդին,
Երբ կամէր քաղել դորանց հայեացքով.
Եւ մարմարիոնը նաղուք ձեռների,
Եւ իբրև փրփուր, լանջ.քը ձիւնափայլ,
Եւ այն շողշողուն մետաքս մազերի,—
Անհոգ թոյլտուած ուսերի վերայ—
Ստնում են նորան հրեշտակ կատարեալ,
Որ ամբոխէր վիշտերդ գժնեայ.
Եւ տղայական մաքուր ցնորքով
Բացում էր քեզ կեանք անվերջ հոսանքով.

V.

Այս կարող էի այն սիրողային
Ցարմարել դորան խօսքերը Լօրդի,
Որ նա տալիս է Լեդի Եանթայլին*),
Նախերգանքի մէջ Թաւիսա Հարօլդի.
Ո՛վ. Բայրո՛ն, Բայրո՛ն, դա ոգևորեց
Քո կարող գրիչ: Դա քեզ ներշնչեց

*) Լեդի Շարլօտտէ, Հերլէ Օքսֆօրդեան Կոմսի դուստրը, որ այդ ժամանակ (1812 թուակ.) դեռ ևս տառն և մի տարեկան էր:

Ա՛յն վերին թռիչք բանաստեղծութեան.
Երկիւղած սրտով, քո վեհ մեծութեան
Եւ անբռնադատ քո հոգու զեղման
Պէտք է նախանձեն բոլոր պոյէտներ.
Որպէս հանճարիդ մի համեստ նուէր,
Երկար կը պատուեն յիշատակդ ազգեր. —

## VI.

Համաշխարհական պոյէտ պանծալի,
Դու քեզ կանգնեցիր երկնահաս արձան.
Ինչպէս մռռանանք, փառքդ Անգլիայի
Որ բարձրագոյն է, քան սարերն ալպեան,
Փառք — որ ծնել է քո անգին քնար,
Որ աւերակներ երգեց ցոյների, —
Որպէս հեղեղատ է հրաշափառ։
Ո՛վ Բայրօն, ասա, ո՞վ քո մէջ դրեց
Ա՛յն վսեմ թախիծն յուսահատութեան.
Ի՞նչպէս քո հոգին իւր մէջ ամփոփեց
Ա՛յն խոռոչ դժոխք ամենակործան։

## VII.

Ու ես զմայլած, շատ տեղ ման եկայ,
Հանդիսարանները լեցուն մարդկան. —
Ես գեղեցկութիւն միանգամ գտայ,
Երբէք չտեսայ գեղեցկիս նման։
Ոչ երազի մէջ, ուր վառուն հոգին
Հրաշագործումէ պայծառ տեսիլներ.
Ոչ գարնան շունչը, ոչ հարաւային
Ինձ չստեղծեցին այդպիսի պատկեր.
Նորան աւանդել ես ձեզ չգիտեմ,
Ինքնանք պիտ՝ տեսնէք — ես ի՞նչպէս ասեմ։
Մեծ գեղեցկութեամբ — առաւել հոգով.
Եւ պայծառացած գիտութեան լուսով.

## VIII.

Լսեցի և ես խօսքերի հնչիւն,
Երբ ոգեխառնուած երկու սիրահար
Խօսակցումէին. բայց այն շշնջիւն,
Ա՛յն կենդանարար գրաւիչ լեզուն, —

Արդեօք դոցա հետ կը հաւասարի՞մ—
Եթէ իմ կեանքում մի ևս նշմարեմ—
Ա՛յն աստուածեղէն ներդաշնակութիւն—
Խլեցի՛ երկնքի ես արքայութիւն.
Ա՛յն խօսքերի մէջ կար ամենայն բան,
Ե՛ւ դրախտ անոյշ և՛ կեանք անսահման,
Ափսո՛ս, որ չունիմ խօսք բացայայտիչ.
Կարո՛ղ էք զգալ— ոչինչ է գրիչ։

## IX.

Վարուն է։ Սի՛րտ իմ, ի՞նչ ես հառաչում,
Մի՛ թէ չկամիս ողջունել նորան.
Քանի՛ տարի է դու չես շօշափում
Նախկին օրերի շունչը քաղցրութեան.
Քանի՛ տարի է, որպէս թշնամի
Չկամիս հաշտուիլ քո վհճակի հետ.
Ինչո՛ւ կծու վիշտ — որպէս մտերմի,
Օրով, գիշերով է քեզ կարապետ.
Գարուն, ո՛վ գարուն, ո՞րքան ծանրութիւն
Ածումես վերաս, ո՛րքան տխրալի
Ցիշումես րոպէք։ — Ո՛վ դառն յայտնութիւն.
Նիրհած է հոգիս, նա կը նորոգուի՛.

## X.

Ո՛այց գիւղական կեանք բնութեան ծոցում,
Քանի՛ պարզութիւն և զեղեցկութիւն.
Եդեմյ դրախտն է այն տեղ փայլում,
Նորից ծնումես և նոր մանկութիւն.
Մարդաշատ աղմո՛ւկ մայրաքաղաքի,
Իմ բարեկամներ, չէք լսում այդ տեղ.
Ոչ դղրդիւնը վաղող կառքերի,
Ոչ խոշոր յիշոցքը ամբոխի տզեղ.
Խորհուրդ եմ տալի, և այն փրկարար,
Եւ այն մի խորհուրդ քաջառողջութեան.
Երէք ամսով չափ — թէ ունիք հնար —
Դուրս գալ քաղաքից դէպ ի ծոց բնութեան։

## XI.

Ա՛յն տեղ ծաղիկներ թևթև շշշիւնով
Թափումեն ամբրոս և բուն փափկութեան.

Եւ ժրագլուխ մեղուն բզզալով,
Երթումէ գործել մեղը պատուական.
Այն տեղ մանկագեղ ժամ առաւօտեան
Վարդեայ ձեռներով հանգիստ է սփռում,
Եւ սիրտդ հեռու աշխարհիս ունայն
Նենգից, կոյր բաղդից, սէր է ճաշակում։
Բայց աւա՜ղ, ե՛ղբարք, չլինի՞ կարծէք,
Որ ես իմ ներկայ կեանքն եմ նկարում։
Այդպէս չէ, ե՛ղբարք, ինձ հաւատացէք,
Անցած, գնացած օրերս եմ յիշում։—

## XII.

Ոօղրո՛զակ, գիտեմ, ո՛վ գեղեցիկ գիւղ,
Ականջ գործըս մի կողմ դնելով,
Երգ իմ բերել եմ քեզ. Թոյլ տուր ինձ
Քաղեմ բերեօղից քնարիս ձօնելով.
Նա միւսանգամ գուցէ կը վառուի
Տեսնելով այդ շիւղն՝ ո՛վ կանաչ Թիւեր,
Ստուեր տուեցէք մի օտար Հայի,
Որ այց է գալիս ձեզ ամեն գիշեր.
Բայց, ո՜հ, չեմ տեսնում՝ ես ուրախութիւն.
Վայր մի զգացի նորա արձագանք,
Ճեմումեմ ձեր տակ, բայց ոչ հաճութիւն
Գգվումէ կուրծքս. ո՛չ. սև օձ, կապա՜նք...

## XIII.

Վխտէ՛ք, ես կեանքից այլ չեմ սպասում
Ոչ յաջողութիւն, ոչ պերճ ապագայ,
Ես խանգարվումեմ և չեմ աւիսոսում,
Ոչինչ չեմ Թողնում աշխարհիս վերայ...
Ես դեռ մատաղ եմ. բայց մոռածելով
Մաշել եմ կեանքս, ունայն ապրելով.
Արդէն իմ կուրծքը այլ բարձրանում չէ,
Եւ առաջուայ պէս չգիտէ ընչել.
Հանգիստ է խնդրում, բայց կը գտանէ
Նորան Հողի տակ... նա կամի՞ ննջել...
Այսպէս նաւորդը կոծուելով երկար,
Ալիքների մէջ գտնում դադար.

## XIV.

Ալ աղ առաւօտուց մինչև խոր գիշեր
Ես թափառել եմ ուրիների տակ,
Երբ բոլոր լուսին գեղեցկանուագը
Ամպերի միջից՝ հնչուածք սոխակ.
Երբ ոսկենշոյլ ալիքն առուակի,
Թաւալվուածին մանկական խաղով
Քաղցր քան ձայնը արծաթեկ զանգի,
Իւրեանց հոսանքի խոխոջ հանելով.
Եւ բնութիւնը այս պատկերներից
Կարծես նոր ծնաւ Արարչի ձեռից.
Երկինք ու երկիր նոյնպէս գեղեցիկ.
Անտառի խորքում քնքուշ դայլայլիկ.

## XV.

Ես այս տեղ ես շատ երգեր եմ հիւսել
Հայոց բարբառով և հայոց խօսքով.
Ես Հայաստանի կսկիծն եմ լսել,
Ապրուել եմ սրտով, պրուել եմ հոգով. —
Ես մտածել եմ. երկրիս երեսին
Թէ այս ազգը իւր պահեց գոյութիւն
Ինչաւի վտանգից, ցաւից մոլեգին,
Ունի մի խորհուրդ վերին և թաքուն.
Ի՞նչ է, ո՛վ հայ մարդ, զարմանո՞ւմես դու,
Որ հիւսիսային մութ երկնքի տակ
Հանդիսանում հարազատ լեզու,
Երբ քո գերութեան զգում եմ կապանք.

## XVI.

Երբ օրհասական դամբանի ծոցից
Ներկայանում հոգուս առաջև,
Երբ արտասուքը հայիդ աչքերից
Թափում երկիր որպէս յորդ անձրև.
Երբ յուսահատուած սովից մահաբեր,
Թխտումես կրօն և կնիք ազգի.
Երբ վատիկանի հրապուրիչ օձեր
Առաջարկումեն քեզ թիւնոտ ոսկի,
Ոսկի, որ գին է մարդասպանութեան

Վերջին հացի գին խեղճ ժողովրդեան, —
Եւ այգ, անունով Աւետարանի։

## XVII.

Ո՛վ կաթոլիկեան կուրութեամբ խոցուած
Շար քարոզիչներ երկպառակութեան,
Ո՛վ մոլի Հռոմ, ով նեռն աւերած
Սուրբին պետրոսի առաքելութեան,
Ինչով, ասացէք, ձեր անմիտ ծխեր,
Կարկատած շքով հեթանոսական,
Նախամեծար են, քան խաղաղասէր
Դաւանութիւնը լուսաւորչական.
Եւ ամօթ չէ՞ ձեզ, ազգ խեղճ, ազգ անմեղ
Փոխել կրօնից, որ Յիսուսի էր։—
Արդեօք խնդրելու չէ՞ ձեզ ըզհեղեզ,

## XVIII.

Ո՛չ Քրիստոսի, այլ սատանայի
Գայթակղութեան էք աշակերտներ.
Ի՞նչ է պատուիրում ձեզ Գողգոթայի
Անմահ նահատակն — Աստուածիւն, թէ սէր.
Եւ այդ նահատակ, որ Աւետարան
Իւր մահի գնով կտակեց աշխարհին.
Եւ Լուսաւորիչն — զոհ ճշմարտութեան —
Ո՞չ դոյն իսկ ուսումն աւանդեց Հային.
Ո՞չ Թադէոսի աթոռ նստելով,
Նմանեցաւ նորան խօսքով ու գործով,
Զարե՛ր, լսեցէ՛ք ձեր խղճի ձայնին։

## XIX.

Այդ զգոյշ կացէք դուք փարիսեցոց
Խմորից, այն է կեղծաւորութիւն,
Որոնք բառնալով և կական և կոծ,
Կամին ցուցանել բարեպաշտութիւն,
Որ խոնարհութեամբ առաջի մարդկան,
Արդար, միամիտ, իւրեանց կարծիքով,
Թայց մեռեալների իսկ են գերեզման,
Լի ապականեալ, պիղծ ոսկրներով.

Ա՛յսպէս Քրիստոս երբեմն վշտացած,
Դարձաւ կեղծաւոր Հրէից ցեղին.
Ա՛յսպէս և այսօր մեք վերաւորուած,
Դառնում՛ենք խարդախ Եղուիտներին։

## XX.

Դոցա բերանից մեք լսելու չենք
Սուրբ սիրոյ ուսմունք և ճշմարտութիւն.
Դոքա պիտոյ է — մեք այդ լաւ գիտենք—
Միշտ կեղծաւորուին և մնան սողուն.
Դոքա պատրաստ են առնել ամեն բան,
Երբ զօրաւոր էլ արծաթ և ոսկի,
Երբ փաղաքշելով, մի ակնածութեան
Կայծ բաշխեց դոցա Պապը Հռոմի.
Թայց ձեր լեզուքը թող չյանդգնին
Օրէնքը սիրոյ պլապէս հնչել.
Թող անմեղ զոհից երկինք չփակուին,
Որպէս սովոր էք ձեզ աշակերտել.

## XXI.

Ես դու, հա՛յ կղեր. բաւական է քեզ.
Նայի՛ր դու, հա՛յր իմ, ինչ մեծակշիռ
Եկել են օրեր. դու այդ չգիտե՞ս.
Մի բա՛ց աչերդ և լաւ ըմբռնիր.
Թէ կենդանի է դեռ քո մէջ հոգի,
Թէ քո կուրծքի մէջ չէ մեռել աստուած։
Թէ դու տեսնում՛ես լոյս արեգակի,
Ձէ՛, դու չես կարող ճնալ քնէած.
Թէ կամակոր ես, քեզ կորո՛ստ թշուառ.
Իսկ Թէ ուշադիր, քեզ կեա՛նք մեծափառ.
Գո՛րծ ենք պահանջում՛, գո՛րծ, արիութի՛ւն,
Ոչ անիծեալ հանգիստ և դատարկութիւն։

## XXII.

Խա՛րձր քարոզներ սուրբ Աւետարան,
Որպէս ճանապարհ դէպ ի գիտութիւն.
Թո՛ղ լցուին սրտերն մխիթարութեան
Սուրբ աղաղակով, եղի՛ր դու արթուն,

Որպէս արթուն էր միածին Որդին,
Իւր անմեղ կեանքը տալով աշխարհին։
Քե՛զ եմ բարբառում, որ աշակերտ ես
Այդ մեծ Ուսուցչին. դու ինձ լսո՞ւմես։
Ո՛վ կղերը, կղերը, ծանր է քո լուծն
Աստուծոյ առաջև, եթէ դու այսօր
Հոգի չզգենուս, չպարզես քո՛ձեռն
Դէպ ի սուրբ վաստակ — մի կեանք ժիր և նոր։

## XXIII

Մի նայի՛ր անբաղդ քո ազգի վերայ,
Տե՛ս, ի՜նչ ալէկոծ ծովի մէջ է նա,
Առագաստ պատռած, կայմը խորտակուած,
Շանթեր, կայծակներ մահով զինուորուած։
Վե՛ր կաց Հոգևոր Հայր վերաւորի,
Ո՞ւր ես դու, ձայն տուր, թո՛ղ լսենք քո ձայն,
Լսե՛նք քո քարոզ Հայրենասիրի,
Որոյ համար սուրբ է խեղճ Հայաստան.—
Ձայն չկայ, աւա՜ղ. ե՛զբարք, ի՜նչ անենք,
Ինչպէս դարմանենք այս մեր վտանգիս,
Եւ Հոգևորի սիրտը դըղդենք,
Եւ հասարակին կարդանք աւետիս։

Ս. Շահազիզեան։

1864
Ցունիս, Ցուլիս.
Խոզոբօղակ գիւղում։

## ԿՆՈՋ ԶԷՆՔԸ.

Ես մի օր այցելութիւն գնացի Խաթնուհի Վ. ին և գտայ նորա սենեակը ծաղիկներով զարդարած, մինչ նա ինքը խորին տրտմութեան դէմս կրումէր իւր վերայ: Ես ներհակութեանս վերայ զարմացած, հարցրեցի նորանից, արդեօք ծննդումէր նա այսօր մի յիշատակի ծոն:

«Այսօր իմ սիրելի հանդուցեալ ամուսնակից տղամարդի ծնընդեան օրն է», պատասխանեց նա, իւր արտասուալից աչքը վերուղղելով դէպ ի հանգուցեալ նոյնպէս դալար ծաղիկներով զարդարած պատկերը:

Ներէ իմ զարմացքը եղած էր յառաջ մեծ, այդ խօսքերը ևս առաւել ստոկացուցին իմ զարմացքը: Խաթն Վ. նկարագրած էր ինձ իբրև մի մարդ շատ անսխրելի բնաւորութեամբ, որ երբէք մի բարեկամ ունեցած չէր և որոյ մօտ ոչ մի սպասաւոր կարողացած չէր երկար ծառայել: Ո՞նչպէս կարող էր նորա այրին այդպէս խորին սուգ առնել նորա վերայ: Խաթնուհին երևոյթէր ինձ ամենայն կեղծաւորութենից ազատ ու վեր. այնու ամենայնիւ կարող էր նա արդարև անկեղծութեամբ սիրել մի տղամարդ որ, իմ լսածովս նորա մասին, պիտի անբաղդացրած լինէր իւր ամուսին կինը: Մինչ ես տակաւին մտածումէի այս օտարոտի հակառակաբանութեան վերայ, ներս մտաւ Տիկին Ա., Խաթնուհու մանկութեան բարեկամը և ցոյց տուեց իւր առ իմ սրտէ կցորդութիւնը նորա յաւին: Ես այս կինս, ինչպէս ես ձանաչումէի զորան, շատ ու շատ հեռի էր խաթերայական ցոյցերից. ես աւելի և աւելի շփոթուեցայ և հարցասէր դարձայ, և վերջապէս որոշեցի մնալ, մինչ տիկին Ա. կը հեռանար, որ ուղեկից լինիմ նորան և խնդրեմ նորանից այս տարակուսանքի լուծումը: Մտքումս դրած ու արած: Երբ որ տիկին Ա. պատրաստվումէր

բաց գնալու, և ես տանտիկնոջը հյուժարական ողջոյն տուեցի և հետևեցայ Լ. տիկնոջը: Շ՚ատ բնական էր, որ մեր խօսակցութիւնը դարձուեցաւ Յարօնուհու և նորա հանգուցեալ ամուսնակից տղամարդի վերայ. վասն որոյ կարող էի ես ըստ երևութին ամենևին պարզմտութեամբ հարցանել նորան. «Պիտի որ տէր Յարօն Ս. մի շատ պատուական տղամարդ եղած լինի»:

«Յարօն Ս.ԷՆ», պատասխանեց Լ. տիկինը ալմացած. ոչ, նա ամենևին անտանելի տղամարդն էր, որոյ վերայ երբ և իցէ արեգակը ծագել է իւր լոյսը»:

«Ընպա ինչո՞ւ համար պատասխանեց նորան իւր պրիացած կինը. ես կարծումեմ, որ նա ունէր ամենայն պատճառ գոնեայ մոռանալու նորան», հարցրեցի ես:

Ես այս հարցումը, և առաւել իմ խօսքի շեշտը և հայեացքս Լ. տիկնոջը գուշակել տուեցին իմ խորհուրդը: Մի անհաւան հայեացքով պատասխանեց նա ինձ. «Դուք վշտացնումէք նոյն իսկ առաքինութիւնը, եթէ կամիք թէև ամենափոքր երկմտութիւն յղանալ Ձեր մէջ Յարօնուհու անկեղծութեան վերայ: Բայց ձեզ նեղելն է այդ, յաւելացրեց նա մի քաղցր ժպտմամբ, «որովհետև Դուք ծանօթ չէք այդ պատուական կնոջ անցած կեանքին: Ելէք իմ կառքս, ես կը տանիմ Ձեզ դէպ ի տուն և մեր ուղևորութեան միջոցին կը բանամ ձեր առաջև անցած օրերի գրքից մի քանի թերթեր: Շ՚նորհակալութեամբ ընդունեցի ես այդ բարեկամական առաջարկութիւնը, և ինչ որ լսեցի այդ կնոջ բերանից, կամիմ համառօտ կրկնել այս տեղ:

Լ՚ուիզէն մի ազնուական տոհմից Գ. շատ մանուկ հասակում կորուսել էր իւր մայրը. նորա շատ զբաղուած հայրը յանձնեց նորան մի դաստիարակութեան գպրոցի հոգաբարձութեան: Երբ որ Լ՚ուիզէն թողել էր այդ գպրոցը, հայրը իսկոյն յայտնեց նորան իւր ցանկութիւնը ամուսնացնելու նորան Յարօն Ս. էի հետ: Նա չհաքցրեց իւր դուստրից, որ Յարօնը մի բարկացկոտ, վոխոխամիտ, այո՛ կուռասէր մարդ էր. բայց յաւելացրեց նա, թէ այս բանս համարում չէր նա ոչինչ պատճառ մի այդպիսի, այլ մտքով ամենևին շահաւէտ, ամուսնութիւն բաց թողուլ ձեռքից, ըստ որում նորա սիրտը վկայումէ, որ մի հեզ և առաքինի կին, թող վնեէին հանգամանքը որպէս և էին, կարող է ձեռք բերել ամուսնութեան երջանկութիւնը: Բայց ի սորանից, Յարօնի վեհասյու-

թիւնը լինելու էր ծնողին շատ սիրելի, որովհետև սա պարտական նուիրիւնք ունէր դէպ ի Նարօնը, և յոյս ունէր պատշաճապէս պարտավճար լինել, հարմնացնելով նորան իւր դուստրը: Լուիզէն յայտնեց իւր անձը պատրաստ լցուցանելու իւր հօր կամքը և մի փոքր յետոյ դարձաւ Նարօնի ամուսնակից:

Ներ բարեկամուհու հայրը թէպէտ և դարձուցել էր իւր դատեր ուշադրութիւնը նորա ամուսնակից տղամարդի դժուարին բնաւորութեան վերայ, բայց Լուիզէն մտքից էս անցուցել չէր այն, ինչ որ սպասումէր նորան: Ոչ բարեկամիներ և ոչ ծառայք կարողացել էին երբէք համբերել այդ անտանելի արջի մեռակայքում, Նորա ամուսնակցութեան առաջին տարիքը էին այդ անբաղդ կնոջ համար մի ահաւոր, ծանր փորձանքի ժամանակ. բայց նա յաջողութեամբ յաղթեց դորան: Իւր արժանաւոր հեզամտութեամբ, որ չէր ամենևին մի չիմար անձնահլուժարութիւն, որ աւելի գրգռումէ, քան թէ շարժումէ այն մարդը, որոյ ընդդէմ դուրսից ցոյց է տրւում դա, այլ որ ցուցանումէ վայելչութիւն, ուշադրութիւն, այո՛ հաստատութիւն անդամ, մի գրաւիչ ջանադրութեամբ հաւանելի լինելու նորան, ոչ թէ մի ծառայի կրաւորական ստորադրութեամբ, յաջողեցաւ կնոջը հնչեցնել իւր ամուսնակցի սրտի մէջ մի լար, որ միևչև այն ժամանակը անլսայատ էր մնացել ինքեան իսկ: Նա շօշափեց նորա հոգին և այս րոպէից ձեռք էր բերել յաղթութիւնը:

Նարօնի սովորութիւնքը ենթարկուեցան մի բոլորովին վոխարկութեան, որչափ դա յարակցութիւն ունէր դէպ ի իւր ամուսին կինը: Ընթնայ, կատաղի զազանը փոխարկուեցաւ դէպ ի մի շատ ուշադիր, յառաջամտոյց ամուսնակից այր է՛ր ինչ համան, բայց բոլոր միւսերին մնաց նա անտանելի, ինչպէս եղած էր: Սակայն նորա վարքը և դէպ ի արտաքին մարդիկը երևումէր աւելի մեղմ, որովհետև Նարօնուհին նոյնպիսի քնքշութեամբ, որպիսի բարեսրտութեամբ, աշխատումէր վոքրացնել և ծածկել նորա անտանելի ախտի վերերևութիւնքը. Այս փորձերը էին մի նոր ամուր կապ, որ Նարօնին շաղկապեց իւր ամուսին կնոջ հետ: Նորա քնքշութիւնը, նորա վստահութիւնը դէպ ի սա, անսահման էր: Ինչ որ կինը առնումէր, ինչ որ նա խօսումէր, ուղիղ էր. նա բովանդակապէս տիրումէր իւր ամուսնակից տղամարդին իւր գեղեցիկ հոգու վեհութեամբ. նորան յաջողուել էր մի գրաստ

*չհնել իւր հպարտ այն տան մէջ, որ ամէն մի ուրիշ ոչ այնքան հեզ, ոչ այնքան առաքինի կնոջ համար դարձած կը լինէր դժոխք:*

*Ողբա անձնանուէր սիրոյ ամենագեղեցիկ ապացոյցները տեսաւ կինը, երբ ինքը հիւանդացել էր մի ցաւեցուցիչ հիւանդութեամբ, որ նորան երկար ժամանակ բանտարկեց մահճի մէջ: Այս միջոցիս Խարօնը երբէք չհեռացաւ կնոջ կողքից, ցերեկով զբօսեցնում էր նորան, դիշերը հսկում էր նորա վերայ, ցոյց էր տալիս նորան ա- մենայն խնամք և հոգաբարձութիւն, որ մի սիրող մայր կարող էր ցուցանել իւր մանուկին:*

*Այժմ կը հասկանաք դուք, որ մեր պատուական բարեկա- մուհին ունի լիովին իրաւունք ողբալու նորա վերայ, որ նորա- յին սիրել է երկրիս վերայ: Գիտէք, թէ նա գնել է այս սէրը շատ թանգ գնով և թէ շատ սակաւ կանայք ունեցած կը լինէին այն- պիսի քաջութիւն, որ ձեռք բերէին նորան այսպիսի կերպով, այ- նու ամենայնիւ բարերարութիւնը որ հասաւ նորան, չէ երևում ինձ անչափ թանգ գնով ստացած: Ո՞նչ պիտի եղած լինէր, եթէ նա սկսած լինէր մի պատերազմ, որոյ համար մեղ կանանցս պակաս են պատշաճաւոր զէնքը: Այս անդադար պիտի կռուած լինէր իւր տղամարդի հետ, դառնութիւնը երկու կողմից էս պիտի աստի- ճած լինէր և վերջապէս բանը պիտի հասանէր քակտման: Այլ կամ աշխարհիս երեսին մի աւելի թշուառ էակ, քան թէ մի բա- ժանուած կին: Խարօնուհին ընտրեց իւր համար աւելի բարի մասը. նա իւր խոհեմ և պարկեշտ վարքով ստացաւ իւր ամուս- նակցի սէրը, աշխարհի մեծարանքը և, անտարակոյս, Աստուծոյ շնորհը: Հեղ-մարդ-ին, սէր և անձնանուէրութիւն են կնոջ ժառան- գութիւնը:*

*Այս խօսքերիս վերայ կառքը դադարեցաւ դրան մօտ, ես հը- րաժարուեցայ բարեսիրտ պատմողից շնորհակալութեամբ և ամե- նատպարտուած, և որպէս ապաշխարանք, որ ես կարող էի մի րոպէ կասկածանք յղանալ այնպիսի անձի մասին, որպիսի Խարօնուհին է, այլև իբրև վրէժխնդիր կարատ դրեցի այս տեղ այն, ինչ որ լսեցի վերոյիշեալ կնոջ բերանից:*

Գ. Մալխասեանց.

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ.

—

### ՎԱԽՄԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՔ ԲՆՈՒԶՆՈՒԹԻՆ ԵՒ ՆՈՐԱ ՆԻՒԹԱՊԱՇՏԱԿԱՆ ՄԱԼՈՐՈՒԹԻՆՔԸ.

Non minus vera sunt quae animo complectimur quam quae oculis intuimur.

*Ոչինչ պակաս ճշմարիտ են այն բաները, որ մտքով ըմբռնումենք, քան թէ այն բաները, որ աչքով նկատումենք։*

*Ես հետևումեմ մի նեղբին հարկապրանքի և զգումեմ իմ վերայ մի տեսակ պարտք, միանգամ հրապարակով խոստովանել իմ սրտի վկայութիւնը մի նիւթի վերայ, որին ընծայումեմ ես մեծ խորհուրդ և ընդհանուր կշիռ։*

*Ես կարծումեմ յատկապէս, թէ լաւ էր, այն պարտականութիւն էր, որ մի պատշաճաւոր տեղում առանձին գիտութիւններին պարապող մարդիկ իւրեանց կարծիքը հրատարակէին իւրեանց կոչման ընդհանուր հայեացքների վերայ և իւրեանց մշակած գիտութեան գերագոյն խորհուրդների վերայ։*

*Սրանով ոչ թէ անհիմն կասկածոտութեան առաջքը կը փակուի և ծուռ հայեացքներին դիմադարձութիւն կը լինի, այլև կը յառաջանայ այն ևս աւելի մեծ օգուտը, որ գատողութիւնք մի այդպիսի կողմից գալով, բերումեն իւրեանց հետ մի առանձին յաղթողական զօրութիւն, որ, սակաւ կը պատահի, որ չգործէ իւր ազդեցութիւնը։*

*Արդիկեղէն գիտութիւնը լինելով շատ ու շատ աստհանալիակ, ի հարկէ և շատ հմուտը և փորձառուն իսկ ընկնումէ շատ անգամ սխալանքի մէջ, և ոչինչ այնքան դժուարին չէ, որչափ մի անվրիպելի գատողութիւն ընդհանուրի վերայ։*

Ըսվ հետև այս պակասութիւնը սեփական է ինձ նոյնպէս, որ-պէս ամեն մի ուրիշն, վասն որոյ շատ ու շատ հեռի եմ մտածելուց, թէ իմ կարծիքս անսխալ էին. բայց հաւատացնել կարող եմ, որ այն, ինչ որ ես կամքի մտնաւորել այս տեղ, մի վկայութիւն է սրտի ամենանեղքին խորքից:—

Ընչաւ ևս զանազան էին գաղափարները, որ մարդիկ կազմու-մեն իւրեանց մէջ բնութեան մասին, այնու ամենայնիւ գտան-ուելու էին շատ սակաւ, մտածող մարդիկ, որ համարձակուէին պնդել թէ մեզ պիտոյ չէր երբէք փորձ լինել բնութեան մասին, թէ այդ միաստակար էր, որչափ և իրէ տեղեկանալ նորան:

Երդ՝ւև, ամենայն ժամանակ եղած են այնպիսի ներանձնա-կան մարդիկ, որ կամաւ և պիտութեամբ իւրեանց հայեացքը բաց են դարձուցել արտաքին աշխարհից և ըստ երևութին լոկ ու միայն ուղղեցուցել են իւրեանց ուշադրութիւնը դէպ ի այն շարժմունքը, որ սրտի ներսում կատարվում են, որովհետև նոքա հաւատացած էին թէ այդ տեղ միայն գտնում էն այն աղբիւրը, ուսկի կարող էր հանուիլ ճշմարիտ գիտութիւն, ուր և կարելի էր գտանել հոգու դերագոյն պիտոյքների լրացումը. բայց, դորա հակառակ, պարա-պումը բնութեամբ և նորա զննութեամբ, միայն ցան ու ցիր է առնում, շփոթում սիրտը, այդ խոտորեցնում նորան իւր սկզբ-բնապատճառից:

Ինձ ինքեանս այդչէն պատահած են այդպիսի ներանձնական մարդիկ, և դոցանից մի քանիսի հետ ունեցել եմ ես ընտանի յա-րաբերութիւն անգամ, թէպէտ նոքա վճռաբար խորշումէին տե-սանելի աշխարհից, իսկ ես շատ սիրումէի բնութիւնը. պատճառ, դոքա հոգով ու սրտով ճոխ էին, և իմ զգայարանս վատած չէր նոյնպէս ընդդէմ նոցա նեղքին աշխարհին:

Բայց որչափ ևս շատ ներանձնական էին այդ մարդիկը, սա-կայն նկատել եմ ես, որ նոքա իւրեանց աչքը երբեմն թողումէին ընկնիլ մարմնաւոր բաների վերայ և մտնում էին լինում այնպիսի բաների, որ նոցա սրտից դուրս էին:

Եւ ինչպէս կարելի էր, կամ պիտի որ այլապէս լինէր:

Մարդս այնպէս խոր արմատացած է զգայականութեան յա-տակի մէջ, նորա գոյութիւնը այնպէս խիտ և ամուր հիւսած է արտաքին աշխարհի հետ, նա գտանվում մի այնպիսի անընդհատ

ստորագիր յարակցութեան մէջ դէպ ի բնութիւնը, որ կարող էր մի րոպէ ինքն ըստ ինքեան և առանձին ապրել:

Այժմ մի առանձին էակի շատ խոր անկախից է ձգտողութիւնը դէպ ի անձնապահպանութիւն, ամենափոքրիկ ընչաւորին նոյնչափ, որչափ մարդուն:

Որովհետև արտաքին աշխարհը այնքան բազմօրինակաբար ներգործումէ անհատական կեանքի վերայ, երբեմն օգտաւէտ, իսկ երբեմն վնասակար կերպով, վասն որոյ անձնապահպանութեան օրէնքն արդէն պահանջումէ մեզանից տեղեկանալ այդ արտաքին աշխարհին:

Այժմ եթէ և հարևանցի հայեացողին նկատելի է, որ բնութիւնը անդադար և անընդդիմանալի ազդումէ մարդուս վերայ, ապա ինչպէս կարող էր սա անընտրողաբար նայել այդպիսի հանդիպակաց զօրութեան վերայ և չզգալ իւր մէջ մի շատ սոխպագին հարկաւորութիւն ճշդագոյն ծանօթանալու դորան, թէև դորա պատճառը չլինէր միւս այլ բայց միայն վախչել նորանից այն տեղ, ուր նա ահ էր տալիս մեզ, իսկ հանդիպել նորան այն տեղ, ուր նա երևումէր մեզ օգտակար և ձեռնտու:

Այժ որովհետև բնութիւնը, ամենևին այլապէս, քան թէ մարդս, չգիտէ ոչինչ փոխոխամտութիւն և օրինքից դուրս բան, այլ միշտ և ամենայն տեղ գործունեայ է անմիջական կանոնների հիման վերայ. մի տեղ իրրև զօրութիւն, որ անողոքմտաբար կործանումէր անհատ էակը, միւս տեղ իրրև հոգատարձու պաշտպան անհատի կեանքին. մի տեղ երևումէ իրրև անզգայ բռնակալ, միւս տեղ իրրև քնքշասիրտ մայր, վասնորոյ պիտի հարկաւոր լինի մարդուս, որչափ կարելի էր աւելի մեծատարուընակ չափով տեղեկանալ բնութեան օրինագրքին:

Այժմ մարդս չկամի լոկ և միայն պահպանել իւր կեանքը առ ժամանակ մի. նա կամի նոյնպէս, որչափ կարելի էր, աւելի քաղցր և վայելուչ կացուցանել դորան, և այս ձգտողութեան նպատակին կարող չէ նա հասանել երբէք, եթէ ուշադիր չէ իւր ստորագիր յարակցութեանը բնութեան հետ. եթէ նա անդիտանումէ այն կացութիւնը, որ սահմանած է նորան սիեզերական կարգի մէջ. եթէ նա պահումէ իւր անձը տգիտութեան մէջ նիւթական աշխարհի մեծակայ կամ հեռաւոր բաների մասին: Ընդհակն, եթէ կամինք մեք լուսցանել այս խոր ընդարձակ կարիքը, ապա անհրաժեշտ

*հարկաւոր է մեզ ամենայն հոգւաբարձութեամբ զննել բնութիւնը թէ իւր ամբողջութեան և թէ իւր առանձին մասների մէջ, այն կանոնները, որոց հիման վերայ ստեղծուած և կործանուած նա. և մանաւանդ պարտ է մեզ ջանահնար լինել ճշդապէս ծանօթանալ այն կապերին որ զուգաւորուածն մեզ արտաքին աշխարհի հետ, այն ազդեցութիւններին, որ նա գործում մեր վերայ:*

*Սակայն, եթէ մարդս պիտի լիովին երջանիկ լինի և լցուցանէ այն կոչումը որ նա ստացել է, ոչնի ոչ թէ միայն ուշադիր լինելու այն բանին, որ օգտակար է նորա զգայէ դոյութեանը և անդորժելի է նորա մարմնաւորին. մարդուս էութեան երկպատիկ բնութիւնը ունի և երկպատիկ պիտոյք. Միտքը և ոգին կարող չէ ինքն ըստ ինքեան և առանձին կերպով ոգի վերայ պահուիլ որպէս և մարմինը կարող չէ. այս բանս այնչափ ևս պարզաբար, որչափ ճշմարտապէս նշանակում սուրբ գիրքը խօսքերովս թէ «մարդը չէ ապրում հացով միայն»:*

*Եւ արդեօք արտաքին աշխարհի տեղեկութիւնը, մի ճիշդ ծանօթութիւն բնութեան էութեան և ազդեցութեան հետ կապող էր որչափ և իցէ ձեռնտու լինել մարդուս սրտի և հոգու պիտոյքը լցուցանելու:*

*Այս կարծում եմ, շատ և շատ:*

*Այս մասին ամենևին մեծ տկարութիւն է այն հիմնական գաղափարը, որ մարդիկ կազմում են իւրեանց մէջ բնութեան մասին:*

*Երբէն մեր սեռի տղայութեան հասակում գուշակել է մարդկային սիրտը, որ զգայարանների միջոցով ներտնել առարկաների և յայտնութիւնների անվերջ բազմօրինակութիւնը ունի մի աւելի, քան թէ լոկ պատահական պատճառ, և մի հիմք, որ կարող չէր աչքով տեսանուիլ, ականջով լսուիլ. թէ կային գերագոյն կարողութիւնք որոց սարքերը էր երկրաւոր աշխարհը, և որոնք ամենայն բան որ կար, ունի իւր էութիւնը և հաստատութիւնը:*

*Այս կանուխ գուշակութիւնը թէ կար մի անտեսանելի հիմն տեսանելի աշխարհիս, այս հաւատը դէպ ի գերագոյն կարողութիւնք, որ յայտնվում են բնութեան գոյութիւնների մէջ, շատ զանազան կերպով ծանուցուած է և կազմում հիմքը բոլոր կրօնների, թէ միաստուածեան կրօնի և թէ այնպիսիների որ բնութիւնը սարսափելոյ աստուածների իշխանութեան տակ:*

*Բոլոր կրօնների հիմքը է այն վկայութիւնը սրտի, թէ բնու-*

թիւնը ինքն ըստ ինքեան անհատականալի է. թէ նա պիտի տեսանուէր իրրև մի ածանցած և ստորադրած բան:

Այս, մարդկութեան բոլոր կեանքի մէջ ծայրէ ծայր ընթացող խոստովանութիւնը սրտի, է մի իրողութիւն որոյ կշռոյը և խորհուրդը արժանի է ամենամեծ ուշադրութեան: Պատճառ, ինչ այլ եղբակացութիւն կարող էինք մեք առնել դորանից, եթէ ոչ այն, թէ ինչ որ մարդկութիւն առաւել մեծ տնօր տալայական պարզմունութեան ժամանակներում, բարբարոսութեան երկար ու ձիգ միջոցներում և ամենավերին կրթութեան դարերում, ամեն հաւատացել է և պահել է, չէ մի մոլորութիւն, այլ սրտի խորքից յառաջացած և դոյն այդ պատճառով էապէս ճշմարիտ էր:

Այո, կանուխ արդէն աշխատել է կշռոյ առանալ և մի այլ կարծիք, որ բնութեան մէջ կամէր միայն տեսանել լոկ բնութիւնը և չկամէր ոչինչ դիտել մի Աստուծոյ կամ աստուածների տեսչութենից:

Այս կարծիքի հիմամբ աշխարհը մի սկզբնական բան էր, ինքն ըստ ինքեան ոտքի վերայ, ոչինչ բանից կախ, իւր ընթացքը յաւիտենից յաւիտեան կոյր հարկաւորութեամբ ինքը որոշելով, մի հանջենաւոր շարժուն մնայուն (perpetuum mobile), անակիզն և անվախճան, որ կարող էր նոյնպէս լինել կամ չլինել իսկ:

Անվիտակից նիւթը, անվիտակից շարժողութիւնը, սոքա էին ահա արարչական զօրութիւնքը, որ դոյացուցել էին ամենայն բան. մի կոյր խաղից, որ մի ևս աւելի կոյր դիպուած խաղամէջ հիւլէների (ատոմների) հետ, իրրև թէ յառաջացել էր այս փառաւոր, զարմանալի տեսարանը, որ բնութիւնը միշտ և հանապազ պատկերացնում մեր առաջև: Ատքերի և զգացողութիւնների աշխարհը, ամենայն գեղեցիկ և մեծ բան, որ ունի իւր արմատը այդ սահմանի մէջ, դա իրրև թէ չպիտի աւելի խորհուրդ ունենար քան թէ զուգադառնութիւնը երկու կաթիլ ջրի կամ թէ մի փոշեղէն ամպի վեր պտոյտելը:

Ընչ ասպաքէն բոլորը սկզբնական փոշու մի լոկ վեր ի վայր շարժողութիւն է, հիւլէների ատանդական տարութերութիւն, կապակցութիւն միմեանց հետ և բաժանումն միմեանցից:

Մի այսպիսի հայեացք աշխարհի վերայ պիտոյ էր միայն նըշանակել աւելի պարզ և որոշ բացայայտիչ խօսքով, այնուհետև կը զարհուրէինք մեք դորա անմխիթար խորհրդից, ես յաւելա-

ցնուվեմ, այնուհետև սրտի աչքի առաջև ամենևին մերկանդամ և անհիմն գուրս կ'ելևէջը գա։

«Ընդգամնելը առումն իւրեանց սրտի մէջ. Ստուած չկայ»։ այս է դատակնիքը, որ արդէն հաղարաւոր տարիներ յառաջ հը-րատարակուած է այսպիսի աշխարհահայեցուԹեան վերայ, և մի առնլե կարճ ու առնլե ճշմարիտ դատակնիք կարելի չէ ոչ այժմ և ոչ հազարաւոր տարիներից յետոյ տալ։

Ընդարակայս, այդ է պատճառը, որ մի աստուածուրացմարդ ի սկզբանէ եղած է իւր ընկերների աչքում ևս առաւել ատելի քան, քան Թէ նոյն իսկ խելագարը. պատճառ, նա դատապարտում է իւր անձը ամենամեծ մեղքով, որ կարող էր միայն գործուիլ. Ուրանալով իւր յատուկ գոյուԹեան սկզբնապատճառը։

Ուշադիր ևս դժուար հասկանալի էր, Թէ ինչպէս կարող էր իմացականուԹիւնը մինչև այդ չափ կուրանալ, և սիրտը այդքան ատելի մոլորուիլ, սակայն պատմուԹիւնը ուսուցանում է, որ այդ ամենայն ժամանակ պատահած է. այդ չէ մնացել օտար և այն վերջին (atheismus) դարուն, որ, նորա գիտուԹեան և կրե-ԹուԹեան մասին, այնքան յաձախ վեր են գոստում յառաջադնաց դարերից. պատճառ, այդ դարում երևեցած են շատ մատենա-գիրներ, որ ջանահնար եղան ապացուցանել Թէ պիտոյ չէր ոչինչ Ստուած, այն խորհրդով, որ մեք յայտնեինք մեր հարցասի-րուԹիւնը, վերահասու լինեինք աշխարհին և նորա մէջ տարրերինք կատարեալագոյն երջանիկ։

Այդ աստուածուրաց մատենագիրների մէջ մի տեսուր պարզ-ծանք առացել է բարօն Հոլբախը իւր գործով, մանագրուԹեամբ Système de la Nature, որ 1770 ԹուականինԷպէ ի լոյս ընծայ-ուելով, իւր համարձակուԹեամբ և տարապայմանուԹեամբ հիացք ու զարհուրանք բերից բոլոր կրԹած աշխարհի վերայ։ Ազգով գերմանացի, բարօն Հոլբախը 1723 ԹուակՀ. ծնած էր Հեյդելհէյմ քաղաքում Պերմանիայի, բայց արդէն կանուխ եկած էր Փարիզ և ատացել էր ամենևին ֆրանսիական դաստիարա-կուԹիւն։ Նորա առաջին ուսումնասիրուԹիւնքը նուիրած էին բնագատում պիտուԹիւնների, մանաւանդ Թէ քիմիաբանու-ԹեանՀ բայց յետոյ, մանաւանդ Դիդերոտի քաջալերուԹեամբ, դարձաւ Էպէ ի փիլիսոփայուԹեան ուսումն։ Հոլբախը մեռաւ Փարիզում 1789 ԹուակՀ 66 տարու հասակում։ Արդարու-

թեան հարկը պահանջումէ ասել, թէ նա մի կարծրակեղև մարդ էր փափուկ մէջով, ամենևին ազնիւ և վեհանձն, իւր բարեկամ նեղին հաւատարիմ բարեկամ, չքաւորներին և ճնշուածներին ձեռնտու և օգնական*). մի բացայայտ ապացոյց թէ Ֆօլբախի աստուածաբաց նիւթապաշտութեան ընդդէմ այնու ամենայնիւ յաղթող ու գերակշիռ են եղած նորա մէջ բարոյական պիտոյքը մարդկային սրտի, որ չեն ամենևին նիւթական օրէնքի տակ:

Նթէ այնպիսի մարդիկ, որ հեռուից միայն նկատումեն բնութիւնը, որոց և նորա անտեսութեան ներքինքը մօտիկ ծանօթ չեն —եթէ այդպիսի մարդիկ բնութեան մէջ տեսանումեն միայն մի մեռած մեքենաշարժութիւն և ուրանումեն թէ նկատելի էր նորա մէջ մի անվախճան հոգու կատարելութիւն — այդ որչափ և իցէ պիտ էս հասկանալի էր:

Բայց թէ զգայութիւնք և հակազդողութիւն ունեցող մի մարդ, մի մարդ, որ մօտաւորէս ընտանեցած էր բնութեան այս կամ այն կողմին, կարող էր հասանել այն տեսութեանը թէ տիեզերքում ոչինչ աւելի բան չկայ, բայց միայն շարժուն նիւթ և թէ յաւերժ պէս այն, ինչ որ մեք ասումենք դիտութիւն, խորհուրդ, բարեբանողութիւնք, խիղճ և պարտականութեան հասկացողութիւն, ոչ այլ ինչ է, բայց գարձեալ սոյն այս նիւթի այսպիսի կամ այնպիսի կազմութիւնը և գործունէութեան տեսակը—այս բանս, խոստովանումենք մերկապարանոց, մի անմեկնելի առակ է մեր համար:

Չէ յաւելի է ասել, որ այսպիսի կարծիքներ մեր օրերում աշխատումեն կշիռ ձգել իւրեանց համար և ապարդիւն ստանալ բնութեան այս և այն սահմանում, մանաւանդ թէ կենդանական կեանքի յայտնութիւնների սահմանում:

Ընդարձակ վաղուց չէ, որ այս և այն ուսումնականը համարձակուած է անպատուական բոլոր աշխարհի առաջև հրատարակել թէ մի մտածութիւն չէ ոչինչ աւելի կամ պակաս բան, քան թէ մի արտաճ որութիւն ուղեղի, դէպուղիղ այնպէս, որպէս մեզը է երիկամների ճնուղք:

Աւելի վկայութիւնք մեղ հարկաւոր չեն. ով որ խօսումէ այդ-

*) Ովոր կամի մեր գերմանագէտ Հայերից աւելի մօտ տեղեկանալ Բարօն Հօլբախի Système de la Nature դրքի համառօտ բովանդակութեանը, կարող է գտնել Հեռմանն Հեմների գրքում, մակագրութեամբ Literaturgeschichte des achtzehnten Jahrhunderts. Երկրորդ հատ. երես 340—349

պէս, նա ուրանում էր ոչ թէ միայն մարդուս հոգին, այլ հոգին առ հասարակ և աստուածեղէնը:

Մի այդպիսի ուրացութիւն այն ամենավերին բանի, որ կայ և իսկ եկած է մարդու միտքը, վշտացնում էր ոչ թէ միայն սրտի ամենաքնքուշ կողմերը. դա նոյնքան էս շատ հակառակում ամենապարզ հասկացողութեանը և ամենավերին բանականութեանը որ ինքեանք էս պիտի համարուէին շատ ու շատ անհասկանալի և անխորհուրդ իրողութիւնք, եթէ դոքա ոչ այլ ինչ էին, բայց նիւթի շարժողութեան յայտնութիւնք կամ ուղիղ արտայայտութիւնք:

Եթէ մի հոգեւոյս և աստուածուրայ բնաւինութիւն թոյլ է տալիս և անպատճառ պիտի թոյլ տայ, որ այս աշխարհը կազմած է այնպիսի յարմարաւոր և պատշաճաւոր կարգով, որ մի աւելեակ, ամենիմաստ հոգի կարող չէր նորան աւելի լաւ ստեղծագործել, ապա մարդս, ինչպէս նա հաղարաւոր տարիներից ի վեր ած է և մինչև այս ժամն է, իւր հոգեղէն և բարոյական պիտոյք ներով, պիտի համարուի ամենաթշուառ կազմուածք բնութեան, մի արարած, որ ընտրած էր կոյր ճակատագրից յանձն առնուլ և կրել ամենամեծ չափը անբաղդութեան, որ կարող էր սահմանած լինել մի անհատ մարդու համար:

Ո՞չ ապաքէն անհամեմատ աւելի լաւ էր լինելու, եթէ մեր թշուառ սեռը երբէք ստացած չլինէր գոյութիւն և կեանք. այո՛, եթէ նա միանգամայն պիշերի մէջ թաղած միացած լինէր: Պատճառ, կարող էր մարդուս համար լինել մի աւելի անմիսիթար բան, քան թէ շատ ու շատ ցաւից ու աստւածպանքից յետոյ խնայմանաւ լինել, թէ ինքը էր մի աւելի բան, քան թէ մի կտոր շարժուն նիւթ, առ ժամանակ մի կոյր հարկաւորութեամբ երբեմն այս կողմը, երբեմն այն կողմը քարշուած, որ իւր անհատական կեանքի շրջանաւորութիւնը աւարտելուց յետոյ, դարձեալ յետ ընկղմուէր անգիտակցութեան սկզբնական խաւարի մէջ, կամ թէ նոր ի նոյոյ խաղալիք դառնալ կոյր բնական զօրութիւնների և նիւթ ապ այս կամ այն պատահական կազմածին:

Ինչպէս յիմարական և անխորհուրդ պիտի երևի ամենամեծ բանը, որ մեր սեռը իւր լինելութենից մինչև այսօր մտածել, զգալ, գործել և արդիւնաւորել է, և յատկապէս ոչնչի ծիծաղելի պիտի լինի այն հին խոստովանութիւնը մարդերի սրտի մէջ, թէ

*կայ բարի ու չար, առաքինութիւն և ապատ, իրաւունք և անիրաւութիւն:*

*Նիւթը չգիտէ ոչինչ բարոյական պատուէր. արդիօք դատաւոն էր նա, թէ շարժուն, այսպէս էր նա, թէ այլապէս, ամենևին անընտրող էնա:*

*Արդիօք մարդկութիւնը զգո՞ւմէր իւր անձը երջանիկ, թէ ոչ. արդիօք սիրո՞ւմէր նա, թէ ատում էր, արդիօք նորա մէջ տիրո՞ւմէր խաղաղութիւն, թէ մարդիկ ուտո՞ւմէին միմեանց միս, արդիօք շինո՞ւմէին դրան, թէ քանդո՞ւմէին; արդիօք մարդկութիւնը տեո՞ւմէր և պահպանվո՞ւմէր, թէ աւեր ու անապատ էր դառնում — ինչ խորութիւն կայ. ոչ ապաքէն բոլորը մի լոկ շարժուն նիւթ է:*

*Աբեմն թող գնայ կորչէ այն յիմար խիղճը, գնայ կորչէ այն տխմար պատասխանատուութեան, թող բաց դրուի այն հին մոլորական կարծիքը, թէ պիտոյ էր սիրել իւր ընկերը, որպէս իւր անձը: Այլ ինչ խորհուրդ ունի իրաւունք կամ անիրաւութիւն, առաքինութիւն և բարոյականութիւն, մարդասիրութիւն և հայրենասիրութիւն: Դա մոլորութիւն և խաբէութիւն է. բայ ի նիւթից չկայ ոչինչ բան, և սա ոչինչ պահանջողութիւն յառաջ չէ բերում: Ուտենք, խմենք, վայելենք, ինչ բանի ցանկանում էք մեր սիրտը և ինչ որ կարող էինք ձեռք բերել. պատճառ, էդուց մեռած էինք:*

*Նթէ մի առաւել տեղեկութիւն բնութեան պիտի տանէր դէպ ի այդպիսի վերահասութիւն, ապա պիտոյ էր մեզ սրտի խորքից ողբալ ամենայն մարդ, որ ստանալու էր մի այդպիսի վատաբաղդ գիտութիւն. այլև օրհնատուքը և իշխանքը, միա գնելով մարդկային ընկերութեան պահպանութեանը, չունէին ոչինչ աւելի տխրկոյուսիչ գործ, քան թէ հրատարակելով ամենախիտ պատուէրներ և գործ գնելով ամենազօրաւոր հնարներ, որ այսու հետև վերջանալ ամենայն ուսումնասիրութիւն բնութեան և վերացուէին ամենայն դպրոցք, որ ձեռնտու էին նորան:*

*Եւ ամենից յառաջ պիտոյ է նոյն ինքն բնագէտքը բանադրուէին իրրև ամենավտանգաւոր մարդիկ և հեռացուէին ամենայն հաղորդակցութենից միւս մարդկութեան հետ: Այոյց, բաղդատողութեամբ, այդպես չէ գործը. ճշմարիտ բնագիտութիւնը տանում դէպ ի մի այլ վախճանական նպատակ, քան թէ այն,*

որ է ուրացութիւն հոգու, կործանումն բարոյական օրէնքի, բացառութիւն աստուածեղէնին:

Վերևում յառաջ բերած կարծիքները և հիմնական կանոնները արդարև ողբալի մոլորութիւնք են, որովհետև այս և այն սիրտերը խոովումեն, խառնակումեն, անբաղդացնումեն, այո՛ աւերումեն:

Այդ ձշմարտութեան կարողութիւնը մեծ է, հոգու անտեսութիւնը և ապրեցութիւնը բնութեան ու մարդու մէջ բացայայտ է, մարդկային սրտի մէջ շատ խոր անկած է իւր աստուածեղէն ծագման դիտակցութիւնը, քան թէ երկիւղի պատճառկար, մի գուցէ մեր սեռը երբ և իցէ այնպէս թշուառանար և բաձի թողի լինէր Աստուծուց, որ համբերնաբար նուաճուէր մի նոյնքան ևս խոշոր, որքան անմիտ նիւթականութեան լծի տակ:

Թող այդպիսի մեփիստոփելեան ուղղութիւնք երբեմն վեր եւ բևին մեծ հոգեղէն երաշտութեան ժամանակներում, բայց հաստատել մի անպայման իշխանութեան երբէք կարող չեն, դոնեայ ոչ երկար ժամանակ, որովհետև ժողովրդի սրտի պիտոյքը առնեւրին անլցուցանելի են թողնում — ժողովրդի սրտի պիտոյքը, որ վերջ ի վերջոյ աւելի զօրաւոր են և խորաթափանց, քան թէ զգայականութեան ամենատատակ ցանկութիւնքը և անձնասիրութեան ամենակատաղի պահանջողութիւնքը:

Ընդէն պատմութիւնը ուսուցանում, թէ ձշմարտապէս մեծ բնաքնիկք, փոխանակ մարմնաւոր աշխարհի պիտութեամբ առաջնորդուելու դէպ ի հոգեսրացութիւն և աստուածասրացութիւն, օրէ օր աւելի խորին սրտով վկայել են հոգին և Աստուածը, որչափ աւելի խորամուխ էին եղած բնութեան գաղտնիքի մէջ:

Ընդհակառակ Նիւտոնը իւր հանճարի խորամուխութեամբ և սուրու մեծապարծանակ դիտութեամբ էր մի տղամարդ, որպիսիքը շատ սակաւք միայն եղած են: Նորա աչքը աւելի հեռատեսիկ էր, նորա հասկացողութիւնը աւելի խորամուխ, քան թէ մարդկային որպիսների մեծագոյն մասի հասկացողութիւնը: Նա յայտնագործեց այն բնութիւնը զօրութեան, որ տարածուած է բոլոր տիեզերքի մէջ, որին և հնազանդութեան երկրային և երկնային մարմինքը: Նա ձանաչեց այն մեծ և պարզ օրէնքը, որոց հնման վեսյայ դիւթը ներգործում դէպ ի հեռակայք և շարժվում թէ

փոքրի և թէ մեծի մէջ, և այդպէս գարձաւ նա հայր գիտութեան, որ ամենափառաւոր յիշատակարանն է, որ կառուցանուաւ իւր համար մարդու մնացող հոգին:

Նիւտոնը էր նոյնպէս այն մարդը, որ խորամուխ եղաւ բոլոր բաներից առաւել զարմանալի բանի մէջ, այսինքն է այն էակը, որով բնութեան հոյակապութիւնը և ճոխութիւնը մարդու աչքին երևելի է դառնում և բացայայտվում. նա հանդիսացրեց լուսի ամենաճաճանչ որպիսութիւնքը, ամենանուրբ գործողութիւնքը և ամենագաղտնի օրէնքները:

Այս այս սքանչելի մարդկային գիտութեանը տուել է այդքան մեծ տարածութիւն, բնագիտութեան սահմանքը այդքան գերօրինակ չափով ընդարձակել է, որ մեծ ու փոքր բաների աշխարհը այնպէս ճիշդ գիտացել է,— այդ սքանչելը ուրացել չէ Հոգի և Աստուած, այլ սրտի մաքով խոստովանել է, թէ բնութիւնը գերագոյն հոգու յայտնութեան տեսարանն է, Աստուածութեան ղեսան է: Նիւտոնը ոչ թէ իւր գիտնական մեծութեան ընդդէմ, այլ դորա պատճառով եղած է մի երկիւղած և ցածուն աստուածապաշտ:

Ես առանց գիտատարութեան յառաջ ենք բերում այս տեղ Հալլեր բնաքնիչը, որ իւր աշխատասիրութեան ստպարէզ էր ընտրել ուսանիլ և ճանաչել կենդանի բնութեան յայտնութիւնքը, բայց առաւելապէս մարդկային մարմնի կազմուածք և նորա լուացանելի պաշտօնքը — Հալլեր, որ իւր մեծամեծ արդիւնաւործութեամբք այս գժուարալուծներին սահմանում սասացել էր իւր համար մի անմահ անուն գիտութեան պատմագրքի մէջ:

Ով ինչ աչքով քննել է նա բնութիւնը, ինչ խորին հիացմամբ լուսած էր նորա սիրտը դէպ ի նորա մէջ անտեսող հոգին, թէ ինչպէս ամենայն բանից տեսանում նա լուսափայլ դուրս ելևելով մի գերատատ իմաստութիւն, մի կատարեալ հատակացութիւն — այդ բանը բազմերիմակարար ծանուցել է մեզ մեծ Ֆիզիօլոգը իւր բանատատեղծութեան և արձակ գրուածների մէջ:

Եթէ հարկաւոր էր օրինակ բերել այս տեղ մի տակաւին կենդանի բնաքնին, ապա թող գրուի այս տեղ անունը Վալտէի, որ, անատակոյս, է մինը մեր ժամանակի առաւել խորամիտ և բազդատուր բնաքննիչներից:

Ով ինչպէս մանկական է նորա սիրտը, ինչպէս հաճատ նո-

*լա հոգին, ինչպէս ամենիւ պարզմտութեամբ լի նորա սիրտը և ինչպէս ջերմ կրօնասիրական նորա բնաքննութիւնը և աշխարհագրական հետաքրքրութիւնը, դիտէ ամենայն մարդ, որին շնորհել էր բաղդը ունենալ մերձաւոր յարաբերութիւն այդ ականաւոր մարդու հետ:*

*Ցաւը, որով այդպիսի հայեցողութիւնքը յայտնվում են, չէ այնքան մեծակշիռ, որքան էութիւնը և հիմքը, ուստի դոքա յաւիտենական են:*

*Եւ ի՞նչ հարկաւոր էր զարմանալ, որ մի աւելի խորին բնաքննութիւն տանում դէպ ի այդպիսի նպատակ:*

*Ով որ ուշադրութեամբ և անպղտոր հոգով քննում բնութեան թէև ամենափոքր մասը, նա կարող չէ այլապէս դատել. նա ստիպուած է, որչափ աւելի նկատում, որչափ աւելի խորքննում, նոյնչափ ևս պարզ ճանաչել, նոյնչափ ևս հաստատապէս վկայել, որ բնութիւնը լի է խորհրդով, իմաստութեամբ, հոգով, աստուածայնութեամբ:*

*Նրաւացի զարմանումներ շատ կարգերի վերայ, որ հնարել են մարդիկ, որովհետև նորա ցուցանումն մեծ հանճար և հնարագիտութիւն: Այլ ի՞նչ են նոյն իսկ հիացուցիչ ճարտարապետական գործերը մարդկային հմտութեան և գիտութեան, համեմատելով ամենափոքր միջատի կազմուածքի և գործողութիւնների հետ: Մի այդպիսի էակ կազմակերպելու համար անհամեմատ աւելի հասողութիւն և ճարտարութիւն պիտոյ է, քան թէ առաւել ճարտարապետական և ամենամեծ մեքենայի հնարատեղծութեան համար:*

*Եւ մեք ձգելով մեր հայեացքը բնութեան տեսութեան ամենամեծ մասի վերայ, և նկատելով նորա խորհուրդների յարաբերութիւնը միմեանց հետ, այնպէս նուրբ հաշուած ու համարած և այնպիսի իմաստութեամբ հնարագործած, որպէս ոչինչ մարդկեղէն գիտութիւն կարող էր սահմանել ու որոշել, մի՞թէ կարող ենք, թէև մի լուսէ ըմբռնել մտքով, թէ այդպիսի դաղափարներով և մտածութեամբք ծայրէ ծայր լցուած մի աշխարհ էր կայր հարկաւորութեան ծնունդ և ոչինչ չկար, որ կարողանար բովանդակել դորան տեսութեամբ և ըմբռնել իբրև մի ամբողջութիւն:*

*Ի՞նչ կարծիք պիտի ստանայիք մի մարդու հասկացողութենից, եթէ նա հաստատապէս պնդէր. Հեռադիրը (տելեգրաֆը) կամ շոգեշարժ մեքենան յառաջացել էր մի անգիտակից բնական*

հարկաւորութենից: Եւ այս ճարտարագործութիւնը մարդկային իմացականութեան — ոչնչի չնչին բաներ էին դրքա, համեմատելով տիեզերքի մեծութեանը և հոյակապութեանը: Եւ այս պիտի լինէր անհոգի զօրութեան գործ, մի կոյր բնական զօրութեան ճնոնդ:

Ինչպէս անմիջիթար և դիշերային մթով պատած պիտի լինի սիրտը մի մարդու, որոյ աչքում հոգին մի ցնորք է. ինչպէս պանդուխտ և օտար պիտի նա զգար իւր անձը մի աշխարհի մէջ, ուր նա կարող չէ տեսանել ոչինչ աստուածեղէն բան, ուրեմն և ոչինչ սէր: Պատճառ, ինչ բան կարելի էր մտածել այնպէս սառն և սարսափելի, որպէս մի բնութիւն, հոգուց և աստուածուց դատարկ, ինչ բան կարող էր լինել այնպէս ահաւոր, որպէս այն մտածութիւնը, թէ նոյն իսկ կարողութիւնը, որ ստեղծել է աչքը, տեսանում չէ, որ ստեղծել է ականջը, լսում չէ. թէ սիրում չէ այն կարողութիւնը, որոյ ծոցից ամենայն բոպէ դուրս են բղխում միլիոնաւոր էակներ, սիրոյ ամենախորին կարօտութեամբ, որոյ լըցուցումը հասուցանում նոցա ամենավերին բաղդաւորութիւն:

Մեծ մեծամիտ ամբարտաւանութիւն և թերադիտութիւն, չափազանց վայելչասիրութեան և ինքնասիրութեան հետ զուգաւորուած, կարող է տանել դէպ ի մի այդպիսի նոյնքան ևս անվերնիթար, որքան անխորհուրդ աշխարհահայեցութիւն:

Դէպ ի խորութիւն, բարձրութիւն և լայնութիւն միջամուխ եղած միտքը սկզբից մինչև այժմ միշտ ոտք է հաստատել մի և նոյն հայեցակէտի վերայ և այդ տեղից քննել է բնութիւնը և մարդկութիւնը:

Երկուսի մէջ ևս տեսանում նա հոգու հանապազորդ յայտնութիւնը, մի դէպ ի դուրս երևելութիւն այն բանի որ ծածկած է աստուածային գոյութեան անքննելի խորքի մէջ:

Եւ ինչ բանով բնութիւնը պարզ ու բացայայտ կերպով ծանուցանում նորան իւր յատուկ յատկութիւնը, այդ է ոչ թէ միայն ամենատես ճոխութիւնը խորին խորհուրդների, որ անդադար բացում նորա առաջև, այլև դա է մանաւանդ այն վսեմ սարսափելութիւնը և զարմանալի անփոփոխութիւնը նորա մէջ իշխող կամքի, այսինքն սիրեղական օրէնքների որ այնպիսի են, որ յայտնութիւնների անդադար փոփոխութեան մէջ թագաւորում ամենավերին կարգ, շէն և հաստատ կայ ու ճնում բոլորը, և ամե-

*նապարզ հնարներով և անթերի ճշդութեամբ լրացանվում են ա-
մենամեծ և ամենաբազմերիանակ խորհուրդները:*

*Երդ, եթէ բնութեան մէջ յայտնվում հոգին և հրատարակ-
վում աստուածայինը, այնուհետև բնութեան մօտաւոր տեղեկու-
թիւնը ստանում մարդուս համար ամենավերին խորհուրդ. պատ-
ճառ, նա տանում նորան դէպ ի սկզբնապատճառը իրերի, ար-
մատը կեանքի, դէպ ի այն հիմքը, որ ամենայն բան կրում, ա-
մենայն բան բովանդակում, որոյ մէջ մեք կամք, շարժվումնք և
եմք:*

*Սիրտը ճանաչելով և խոստովանելով թէ երևելին մօտ կապա-
կից է հոգու հետ, աշխարհը անքակտելի կապով զուգաւորուած
է աստուածեղէն էակի հետ, մի այդպիսի սիրտ արչափ այլապէս է
զգում իւր անձը, քան թէ այն սիրտը, որ ամեն բանի մէջ տես-
սանում միայն մի կոյր զօրութիւն, մի լոկ դադար կամ շարժո-
ղութիւն նիւթի.*

*Այդ խոստովանութիւնը սրտի միայն, տալիս է հոգու խա-
ղաղութիւն, առանց որոյ կեանքը մի տանջանք է. նա միայն հան-
դուցանում հոգու պիտոյքը, որ եթէ մնայինն առանց լրացման,
անմոռանալի բան է մի ճշմարիտ բաղդաւորութիւն: Որպիսի պայ-
ծառ աչքով և կատարեալ խաղաղութեամբ նայում այդպէս խոս-
տովանող մարդը անցածի, ներկայի և գալոցի վերայ. որովհետև
նա ապահով է և կարող չէ երկմիտ լինել, թէ ամենայն բան, ինչ
որ նորա բովանդակումն, անհամեմատ աւելի լաւ է, քան թէ
մարդերի միաբանուած միաքը կարող էր հնարաստեղծել, և քան
թէ մեք ինքներս կարող էինք բաղձալ:*

*Ինչ աղբիւրից, եթէ ոչ այս խոստովանութենից սրտի պիտոյ
էր մեզ հանել աղնիւ շարժառիթներ գործելու: Ինչ տեղից պիտի
յառաջանային բարոյականութեան կանոնքը, ինչ տեղից սէրը դէպ
ի ընկերը, ինչ տեղից զօրութիւնը յաղթելու մեր անձնասիրա-
թեանը, եթէ ոչ, այն դիտակցութենից թէ մեք մարդիկս ունինք
մի վերին հաստատակաց ծագումն, որ մեք աստուածեղէն ազգա-
տոհմից ենք և մեր գոյութիւնը մշտնջենաւոր է:*

*Եւ որպիսի զօրաւոր ազդեցութիւն պիտի ներգործէ մի այդ-
պիսի խոստովանութիւն այն մարդու վերայ, որ զգում իւր անձը
կոչուած ընդարձակելու բնագիտութիւնը և յառաջադէմ կացու-

*ցանելու մարդկային հասկացողութիւնը բնութեան յայտնութիւն-*
*ների միմեանց հետ հաստակցութեան։*

*Բնութեան մէջ աստուածային իմաստների բացայայտութիւնը*
*նկատելով զննիչը, կը ցուցանէ նորան պատիւ և մեծարանք, կը*
*մօտենայ նորան մի տեսակ ակնածութեամբ, կ'աշխատի մաքուր*
*ձեռներով շօշափել նորան. նա կը վկայէ պտոյզ, թէ նորան, եթէ*
*կամէր հասկանալ բնութիւնը, ամենից յառաջ հարկաւոր է մի և*
*նոյն հոգին և մի և նոյն զօրութիւնը, ուստի ինքն բնութիւնը*
*յառաջացել էր. որովհետև միայն նմանը կարող է ըմբռնել նմանը,*
*վերինը կարող է ըմբռնել վերինը։*

*Իսկ այս ցածուն հոգով, այլև ամենամաքուր շարժա-*
*ռիթներով դրդուած, ոտք կը կոխէ նա զննութեան շաւղի վերայ,*
*ուր թէև շատ յաջող գտանուէր, ոչինչ բան մնալու չէր նորանից*
*աւելի հետի, քան թէ ունայնասիրութիւն և մեծամտութիւն,*
*յանդգնութիւն և գոռոզութիւն։*

*Այնպէս պիտի վերայ, որ յաջողուել էր առնել կամ նորան*
*կամ թէ մի այլ միւսի, թէպէտ կ'ուրախանար նա առ ի սրտէ,*
*բայց ոչ այն պատճառով, որ ինքը կամ մի այլ ոք արել էր գործան,*
*այլ որովհետև իւր սեռի օգտի և շահաւէտութեան համար գար*
*ձեալ մի նոր գանձ գուրս էր հանուած աստուածային ճոխութեան*
*ծածուկ շտեմարաններից։*

*Մի կողմից խոստովանելով իւր յատուկ սահմանափակու-*
*թիւնը, միւս կողմից վկայելով բնութեան իմաստների անվախճան*
*լիութիւնը, ոչ մի առարկայ երբէք համարելու չէ նա լիովին ճա-*
*նաչած, ոչ մի յայտնութիւն կատարեալապէս հասկացած, վասն*
*որոյ և ամենայն րոպէ պատրաստ է նա նոյն իսկ շատ քննած ու*
*գնահատած սահմաններում տեսանել նորանոր գաղանիքների մերկա-*
*ցուցումն, չգուշակած ճշմարտութիւնների յայտնագործութիւն։*

*Եւ որչափ ևս արդէն մեծ երևէր ամբոխի աչքում մարդկային*
*դիտութեան քանակութիւնը, այնու ամենայնիւ նոյն իսկ շատ*
*փորձառու քննողը զգում է նորա թերութիւնը և հատուկտորու-*
*թիւնը և հաւատի ընդունում է, որ բնութեան ինչութենից և*
*նորա մէջ քննելի բաներից մարդս մի անսահման փոքրիկ կոտորա-*
*կամասին միայն վերահասու է եղած։*

*Այնինչ յառաջ, նորա համար ծածկախոհ հուրդ են այն հա-*
*զարապատիկ յայտնութիւնքը որ շատ զարմանալի և բազմօրինակ*

անդամաւորուած բուսականներուն և շնչաւորներուն կարգերուամ պատկերանուելն նորա առաջև: Ա՛յս տեղ հանդիպումէ նորա աչքին մի արարչական զօրութեան լուսթիւն, նորա քննողական հայեացքի առաջև մի ճոխութիւն խմաստների, այնպէս գերօրինակ, որ նա փոքրոդի է դառնում, եթէ կամէր փորձ փորձել բովանդակելու և հասկանալու նորանց. պատճառ, հաղիւ թէ կարծումէր նա թէ լուծել է մի խնդիր, և ահա դուրս են երևում հազարաւոր նոր խնդիրներ, որ լցուցանումեն նորա սիրտը ահագուժիչ և խոնարհեցուցիչ գուշակութեամբ, թէ նա կանգնած էր դէմ յանդիման մի, դաղտնիքով լի աշխարհի—որոյ մէջ ամենևին թափանցել տեսութեամբ ոչ մի եղբական հոգու յաջողուելու չէր երբէք:

Այն իսկ զգուշաւոր զննիչը պարսաւելու չէր միւսերի փորձերը որ արած էին բնութեան դաղտնիքի մէջ խորամուխ լինելու դիտաւորութեամբ. նա ինքը, որչափ կը ներէ իւր կարողութիւնը, աշխատելու էր նոյն բանը առնել, յուսալով թէ գուցէ յաջողուէր բնութեան այս և այն դաղտնիքը դուրս որսալ կամ թէ գոնեայ հասկանալի կացուցանել:

Այլ սրտի մաքով խոստովանելով քննելի նիւթի ահագին մեծութիւնը և անսպառութիւնը, նա հաստատապէս ընդդէմ էր դուրս գալու ամեն մի հաւատացուցման, որ կողմից ևս լինէր, ամեն մի պնդողութեան, որպէս թէ կեանքի խորհրդաւոր խնդիրը լուծած էր, կամ թէ դորա լուծումը այսօր կամ էգուց լինելու էր. նա համարելու է այդ մի դատողութիւն, խնդրի մեծութեան չհասկացողութենից և մոլորական մաքի անօսրութենից յառաջացած:

Իսկ եթէ կամէին պնդել, թէ մի այդպիսի լուծումն տուած էր արդէն նորանով, որ կենդանին տանուամեն շինուամեն մի խաղ ֆիզիկական և քիմիական գործողութիւնների, և թէ բուսական և շնչաւոր էակները ոչինչ աւելի բան չէին, բայց մի մեծ գործատուն, ուր նիւթի տարերքը ջերմութեան, լուսի, էլեքտրականութեան և այլ միւս, չգիտեմ ինչ, կոյր բնական զօրութիւնների միջնորդութեամբ, շատ տեսակ տեսակ կերպով խառնուամէին միմեանց հետ և նոցա հիւլէքը (ատօմները) խայտաձամուկ պէտսութեամբ այս կողմ ու այն կողմ էին ձգվում: այլև թէ մի սնապաշտ փակուած ու նեղ մտքի նշան էր օրգանական կեանքի սահմանում ընդունել մի գիտակից դիտաւորութեան անտեսութիւն և

մի, խորհրդով ներգործող էակի ազդեցութիւն—եթէ կամէին այս պիսի բաներ ալնդել, այնուհետև աւելի խորահայեաց զննիչը ստիպուած է այդպիսի պնդողութիւնքը համարել ամենամեծ սխալանք, շատ մօտ աղգակից այն աշխարհահայեցութեան հետ, որոյ աչքում բնութիւնը ոչ այլ ինչ է, բայց անթիւ, տարածութիւն լցուցանող նիւթամանրիկներ, որ այսպէս կամ այնպէս տեղաւորուած շարժվում էին այս տեղ կամ այն տեղ:

Շատ կը սխալուէինք մեք, կարծելով, թէ փոքր էր այն մարդերի թիւը, որ ծառայում են այդպիսի հայեացքի:

Պիտոյ է խոստովանել, թէ այս մեքենական ըմբռնումը բնութեան արդէն տարածուած է շատ ու շատ տեղերում Եւրոպայի մէջ և ունեցել է մեծ ազդեցութիւն գիտութեան շատ սահմաններում: Ինչպէս երևում նշաններից, այդ մեքենական ըմբռնումը բնութեան կը տարածուի ևս առաւել, այո՛ մեք կը տեսանենք շուտով, որ դա ձեռք կը բերէ լիակատար իշխանութեան դատաստանը:

Համեմատելով բազմութեան հետ, սակաւք միայն, երևում է, թէ կշռումէին այդ իրողութեան խորհուրդը, հասկանումէին դոյա խորին կապակցութիւնը ներկայիս ընդհանուր վիճակի հետ և դուշակումէին այն ծանրածանր հետևանքը, որ ապագայում յառաջանալու են դորանից մարդկային ընկերութեան համար:

Այս ողբալի պակասութիւնը դատողութեան և նախատեսութեան երևում է մանաւանդ այն օտարոտի հանքատեսքի մէջ, որ նշանակեալ ուղղութիւնը գտանում է ընդունելութիւն և յաջողութիւն այն տեղ ուղղակի, ուր պիտի յուսայինք դորա բոլորովին ներհակը, ուր իրաւացի տեղիք կար ենթադրելու մի աւելի խորին խելամտութիւն թէ մարդկային ձգտողութիւնքը պիտի դաշնակից լինէին նորան օգնականելին:

Այս տեղ պատշաճ էր աւելի մանրամասնաբար խօսել յառաջ բերած նիւթի վերայ. միայն թող ծանօթութիւն տանք այս տեղ, որ ժամանակի նշաններին ուշադիր եղող մարդերի սիրտը լցուած է ահագուշիչ դուշակութեամբ, թէ մօտ էր ահա մի հոգևոր և լուսաւորութիւն, որին ուղևորից կը լինէին այն ամենայն ձախորդութիւնքը, որ սովոր են պատահել մարդուն, երբ նա դլուխ է բարձրացնում ընդդէմ հոգու գերադոյն իշխանութեան, երբ որ նա մտածումէ իւր ճշմարիտ հայրինքը գտանել երևելի աշխարհի մէջ և անձնատուր է լինում ղեպ յականի տիրող հրամանին:

Պատճառ, ինչպէս ամենայն կենդանական կազմած ենթարկ-
վումէ փտութեան և ապականութեան, երբ որ կեանքը փախել է
նորա միջից, նոյնպէս և մարդս ենթարկվումէ ինքնասիրութեան
կործանիչ զօրութեանը և բարձի թողի է լինում զգեցական ցան-
կասիրութեան քայքայիչ ախրապետութեան կամքին, երբ որ նո-
րա սիրտը դուրս գալով գաղափարական աշխարհի կենդանացու-
ցիչ ազդեցութեան տակից, թուլանումէ այս կապը, որով ժամա-
նակաւորը շաղկապվումէ հանդերձեալ աշխարհի հետ:

Բայց որովհետև մարդս, թէև ամենայն վճռականութեամբ կա-
մենալ, կարող չէ իւր վերին բնութենից բոլորովին հրաժարուիլ,
վասն որոյ, ինչքան էլ նա խոր ընկղմուէր մարմնաւորի մէջ և որ-
չափ էլ հեռանար հոգու սահմանից, սակայն կրկին և դարձեալ ծնա-
նելու է նորա մէջ մի խորին կարօտութիւն դէպ ի իւր ճշմարիտ
հայրենիքը, նորա սրտի մէջ կը զարթնուն պիտոյքներ, որ ևթէ
օրինաւոր կերպով չլցուցուեցան, երբէք չեն տալու նորան խաղա-
ղութիւն, երբէք թողնելու չեն նորան ճշմարտապէս երջանիկ լինել:

Նա սոյն իսկ անընդդիմանալի ձգտողութիւնը սրտի դէպ ի գեր-
զգայնին, այս անապական հոգեղէն մասը մարդկային բնութեան և
նորա անշէջուցանելի կարօտութիւնը դէպ ի այն, որ անփոփոխելի
և յաւիտենական է, տալիս է առաւել ապահով երաշխաւորու-
թիւնը, թէ մարդկութիւնը, ինչ սխալական ճանապարհի վերայ
էլ ընկնէր, այնու ամենայնիւ դարձեալ կը վերադառնայ դէպ ի
այն շաւիղը, որ տանումէ դէպ ի ճշմարտութիւն և դէպ ի ճշմա-
րիտ երջանկութիւն:

Տարակոյս չկայ, որ ժամանակի անապատի մէջ, որոյ վերայ
մեք շուտով արդէն ոտք կը կոխենք և պիտի անց կենանք, չեն պա-
կասելու այնպիսի տեղեր, ուր ամենայնիւ բնաւականներ թագա-
ւորող ցանկութեան մէջ կը անկուին և ջուր կը ստանան, և սեր-
մեր կը հասանին, ուստի մնաւաւոր կամ հեռաւոր ապագայում
կը յառաջանան պատուական հունձեր: Կամ թէ, առանց խո-
սելու հայելի օրինակով, ասենք պարզաբար, և նիւթապաշտա-
կան ղգացողութեան լոկ և ամենախոշոր իշխանութեան միջոցին
պակասելու չեն այնպիսի մարդիկ, որ մնալու էին հոգու սպասա-
ւորք, և երբէք ծունր խոնարհեցնելու չէին առօրեայ ներկայի
կուռքին, որ շատ մօտաւոր կերպով կը միաւորուէին պաշտպա-
նելու իւրեանց մէջ մարդկութեան առաւել պատուական բարիքը

և աւանդելու դորանց գալոց ազգերին ոչ թէ միայն ողջ և անաբատ, այլև ճոխացուցած:

Այսպէս ևս երբեք շինչանելու չէ այն գիտիչների սեռը, թէ՛ հոգիների ժամանակաւոր ուղղութիւնը լինի որպէս և է, որ բնութեան մէջ տեսանելու են յայտնութիւնը մի անեղբական հոգու, և որոց գերագոյն ձգտողութիւնը լինելու է այն, որ ճանաչեն աստուածային էութիւնը և անտեսութիւնը զգալի աշխարհի մէջ:

Այն բնազննութիւնը, որ աշխատութեամբ հասանել մի այդպիսի վերին նպատակի, անպատճառ պիտի տանի դէպ ի շատ մեծաքորհուրդ հետևութիւնք և ունենայ մի ընդհանուր ազդեցութիւն մարդկութեան բոլոր բաղդատութեան վերայ. պատճառ, այս հետևութիւնքը պիտի լինին այնպիսի ճշմարտութիւնք, որ ոչ թէ միայն հաւատալի են, այլև տեսանելի և հասկանալի են. որ ոչ թէ միայն լցուցանումեն սրտի և հոգու կարիքը, այլև կատարելապէս համաձայն են մտքին և բանականութեանը:

Այս պատճառով իմ սիրտս վկայումէ հաստատապէս, թէ ճշմարիտ բնազննութիւնը, որովհետև դա անպատճառ տանումէ դէպ ի հոգեպիտութիւն և աստուածգիտութիւն, իւր յատուկ ժամանակին նոյնպէս էապէս ձեռնտու կը լինի ազգերի թուլացած սիրտը և նիրհող հոգին դարձեալ զօրացնելու, և հեռացնելու այն անմխիթար որպիսութիւնքը, որ յառաջացուցել է մի հոգեմոռացութիւն և աստուածմոռացութիւն:

Շէօնբօան, էկզմանական քնաշնէն.

---

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Հրատարակողը խնդրումէ Հիւսիսափայլի պատուելի ընկերացիրներից, որ, եթէ նոքա որ և իցէ դիպուածով մինչև այժմ ստացել չէին այս կամ այն ամսատետրը օրագրի, փութացին տեղեկութիւն տալ նորան, պարտ ու պատշաճ հոգալարձութիւն առնելու այդ մասին:

Ս. Նալբեանց: